

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևավայրութեալ կամ օպտազործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Անգլի

1924թ




891.542-2
Բ-25

ՐԱՖՖԻ
ՎԵպի Հեղինակ

ՅԱԳՐԱՏՈՒՆԻ
Փոխադրող

ԱՄՄՈՒԵԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ
(ՀԻՆԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ)



ՏՊԱՐԱՆ «ՊԱՅՔԱՐ»Ի

Պ Ա Ս Ո Ւ

1924

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Դերակատարները շարուած են քեմի վրայ
իրենց երեւման կարգով

ՍԱՄՈՒԵԼ. (Երիտասարդ) :

ՍՈՒՐԵՆ. Հաւատարիմ հայ զինուոր մը :

ՅՈՒՍԻԿ. Սամուելի սպասաւորը, (պատաճի) :

ՏԱՃԱՏՈՒՀԻ. Սամուելի մայրը :

ԲԱԳՈՍ. Տաճատուհի ներքինին, (տարեց) :

ՄՈՒՇ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. Սամուելի հօրեղբօրորդին, (չափահաս) :

ՈՐՄԻԶԴՈՒԽՏ. Սամուելի խորք մայրը, Շապուհի մեծ
քոյրը, (21 տարեկան) :

ԱՐԲԱԿ. Սամուելի դաստիարակը, (տարեց) :

ԱՐՏԱԿԻՎԶԴԻ. Պատաճի մը՝ Մամիկոնեան տոհմէն :

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ. } Դեռ աշխարհական երիտասարդ
ՄԵՍՐՈՊ. } Ուսուցիչներ :

ԲԱՆՏԱՊԵՏ. (Պարսիկ) :

ԱՐԵԱԿ ԹԱԳԱԽՈՐ :

ԴՐԱՍՏԱՄԱՏ. Արծակ թագ.ի ներքինապետներէն մէկը :
ԱՇԽԵՆ. Սամուելի սիրուհին, Ծշտունեաց օրիորդը :

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻ. Աշխենի մայրը :

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. Սամուելի հայրը :

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒԽԻ. Սամուելի մօրեղբայրը :

ԳԱՐԵԳԻՆ ՌԵՇՈՒԽԻ. Աշխենի հայրը :

ՇԱՓՈՒՀ. Արքայ Պարսիկ :

ՓԱՌԱՆՉԵՄ. Արշակ թագաւորի կինը :

ՅԱՍՄԻԿ. } Թագուհոյ նաժիշտները

ՇՈՒՇԱՆԻԿ. } (Պատաճուհիներ)

ՈՐՄԻԶԴՈՒԽՏ. Շապուհի պատիկ քոյրը (18 տրկն.)

ԴՂԱԿ. Հայր Մարդպետական տոհմէն (տարեց) :

Պարսիկ գօրապետներ, Հայ եւ Պարսիկ զինուորներ,
մողեր, դրանիկներ, երկսեռ հանդիսավաններ, մանկա-
ւիկներ :

ՍԱՄՈՒԵԼ

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱԲԱՆ I

(Սենեակ մը Ողական Ամրոցին մէջ)
(Առաւօտ)

ՍԱՄՈՒԵԼ.— Ուրեմն քեզ նամակ չտուեցի՞ն, Սուրէն:

ՍՈՒՐԷՆ.— Զը տուեցին, Տէր իմ: Զգուշացան, որ նամակը կարող էր բանուել ճանապարհին: Իսկ ես հազիւ կարողացայ հասցնել ինձ իմ տիրոջ մօտ, որպէս կենդանի նամակ: Ամէն ինչ պատմեցի ձեզ, զուք այժմ գիտէք բոլորը . . . :

ՍԱՄՈՒԵԼ.— Բայց զու լաւ չբացատրեցիր ինձ, Սուրէն, թէ ի՞նչը հրապուրեց իմ հօրը ուրանալ իւր կրօնը և յանձն առնել մի այլպիսի ամօթալի զորք . . . միթէ Մերուժան չարագո՞րծը խելքից հանեց նրան . . . : Ես Արծրունիներին ճանաչում եմ . . . նրանք իմ քեռիներն են . . . փառքի, իշխանութեան համար ամէն սրբութիւն կը վաճառեն նրանք . . . բայց իմ հայրը . . . այդպէս չէր իմ հայրը . . . : Միթէ՞ նա էլ խարուեցաւ . . . :

ՍՈՒՐԷՆ.— Զը խարուեցաւ, Տէ՛ր իմ: Այլ այն օրից, որ Շապուհը չարաշար մահով սպաննել տուեց ձեր հօրեղբայրը, — ձեր հայրը հետամուտ եղաւ ստանալ Հայոց Սպարապետութիւնը: Շապուհը տուեց նրան այդ և ձեր հայրը կատարեց Շապուհի կամքը:

ՍԱՄՈՒԵԼ.— Շնորհակալ եմ, Սուրէն, ես քո ծառայութիւնը չեմ մոռանայ: Այժմ կարող ես գնալ, քանի որ ամրոցում զեռ քնած են: Երբ հարկաւոր լինես, կրկին կը կանչեմ քեզ:

ՍՈՒՐԵՆ.— (Խոնարհութեամբ դուրս կ'ելլէ :)

ՍԱՄՈՒԵԼ.— Մողեռով և մողականերով է զալիս
իմ հայրը և իր հետ բերում է, որպէս օգնական Պարսից
զօրութիւնը... զալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները,
մեր գալրոցները, մեր գալրութիւնը..., զալիս է Պարս-
կացնելու մեջ... նա զալիս է ձեռք ձեռքի տուած Մերու-
յանի հետ..., Թագաւորութիւնը սպաննեցին, այժմ պէտք
է սպաննեն ազգութիւնը, կրօնը... և իմ հայրը մի այլ-
պիսի եղենագործութեան պէտք է մասնակից լինի, յա-
փուենական նղովք գնելով Մամիկոնեանների տոհմի վր-
արայ : Մամիկոնեանը ծնում է զաւաճանները... Մամիկոն-
եանը ծնում է և հերոսները... երբ իմ հօրեղբայրը Վար-
դանը՝ արքայ Տիրիթի հետ սպասարուեցան մեր Ար-
շակ թագաւորին զէմ և դիմեցին Պարսից Շապուհ թա-
գաւորին, — զարձեալ իմ հօրեղբայրը Վասակն էր, որ
զնաց նրանց համեմատ և ճանապարհին բանելով, սպաննեց
թէ Տիրիթին, և թէ իր եղբօրը... նրա ձեռքը չգողաց
թափել իւր հարազատի արիւնը, որ զաւաճանում էր իւր
թագաւորին և իւր հայրենիքին... իսկ և ս...: Ա՛յս,
հայր իմ... ա՛յս, հայր իմ...

ՅՈՒՍԻԿ.— (Ներս զալով դրան քով կը կանգնի) :

ՍԱՄՈՒԵԼ.— Յուսիկ, այդ զո՞ւ ևս:

ՅՈՒՍԻԿ.— Այս, Տէր իմ: Գիտէ՞ք այս դիշեր ի՞նչ

ՍԱՄՈՒԵԼ.— Ի՞նչ է պատահել:

ՅՈՒՍԻԿ.— Մկները Պատիկի մօրութի մի կողմը կըր-
ծուել են: Երէկ երեխյան, նա օծուել էր, իւզուել էր,
զնացեր էր իւր վեսային տեսնելու, այնուզից հարբած
եկել ու պառկել էր, զիշերը մկները մի լաւ ընթրիք էին
անուշ արել նրա բարձերի վրայ :

ՍԱՄՈՒԵԼ.— Զարածծի՛, այդ անզատառ քո գործը

կը լինի:

ՅՈՒՍԻԿ.— Զէ՛, Ասուած է վկայ:

ՍԱՄՈՒԵԼ.— Իմ գլխովը երգուի՛ր :

ՅՈՒՍԻԿ.— (Կը կարմրի) :

ՍԱՄՈՒԵԼ.— Տեսնո՞ւմ ես, անողիասն. միւս ան-

զում այդպիսի յիմարութիւն չանհս :

ՅՈՒՍԻԿ.— Ազա ի՞նչ անէի... այնպէս հարբած ե-
կել, քնել էր, զիշերը մարդ է մտնում ամրոցը, նա չէ
զարթնում :

ՍԱՄՈՒԵԼ.— Ի՞նչ մարդ :

ՅՈՒՍԻԿ.— Մի սուրհանդակի, ևս բաց արի նրա հա-
մար զուուը, նա ուղղակի զնաց Տիկնոջ մօս :

ՍԱՄՈՒԵԼ.— Դու այդ ժամանակ արթո՞ւն էիր :

ՅՈՒՍԻԿ.— Ես ամրոջ զիշերը չեմ քնել :

ՍԱՄՈՒԵԼ.— Երեւի նուարդի սենեակի չուրջը քըծ-
նըում էիր...

ՅՈՒՍԻԿ.— Ի՞նչպէս իմ տիրոջ առջեւ մեղքս պահեմ,
այդպէս էր :

ՍԱՄՈՒԵԼ.— Դու ճանաչեցի՛ր սուրհանդակին :

ՅՈՒՍԻԿ.— Սատանայի պէս :

ՍԱՄՈՒԵԼ.— Ա՞վ էր :

ՅՈՒՍԻԿ.— Պարեիցի Ասկանն էր, նա որ իւր կնոջը
սպաննեց և իւր եղբօրը կինն առեց. մեծ իշխաննեց նա-
մակ էր բերել :

ՍԱՄՈՒԵԼ.— Նա մնա՞ց Տիկնոջ մօս :

ՅՈՒՍԻԿ.— Ա՛չ, նամակը յանձնեց, բաւական իռու-
ցին, յեսոյ էլի մթնով զուրս զնաց: Դուռը ես բաց արի:

ՍԱՄՈՒԵԼ.— Այդ մասին իշպուդ լուս կը պահեմ:

ՅՈՒՍԻԿ.— Խուլ ու մունջի պէս :

ՍԱՄՈՒԵԼ.— Յուսիկ, զնա՛ Մուշեղ իշխանին առա՛
որ ցանկանում եմ զինք տեսնել:

ՅՈՒՍԻԿ.— Շատ լաւ, Տէր իմ: (Մեկնում է) :

ՍԱՄՈՒԵԼ.— Արաբիսի՛ սուզ պիտի տիրէ ամրոցում,
երբ գործի իսկութիւնը բոլորովին յայտնի կը լինի: Աչ
ոք, բացի իմ մօրից, զո՞ւ չպիտի մնայ իմ հօր վարժուն-

բից . . . նա կը բերէ իւր հետ աղմուկ, կրիւ, նախանձ, ատելութիւն իւր տան մէջ:

ՏԱՅԱԾՈՒՀՀԻ — (Ներս մանիկով) Բարեհ լոյս, սիրելի Սամանէլ:

ՍԱՄՈՒԵԼ. — Բարի լոյս, սիրելի մայրիկ։ Այդ ե՞նչ
եմ անսուժած . . . Աստուած է վկայ, առանց հարցնելու,
կարող եմ ասել, որ հայրը է գալիք։

ՏԱՐԱԾՈՒՅՑԻ — ԽՆչից խմացար :

ԱԱԱՌՈՒԵԼ. — Այդպէս զարդարուել ես . . . յօնքերդ
ներկել ես . . . ձեռքերը ներկել ես . . . : Այդ բոլորը ո՞ւմ
համար է :

ՏԱՅԱԾՈՒՅՔԻ — Երազ գալիս է, Սամուել: Հիմա տուր աւելացքը: Ասա՛, ի՞նչ ես տալիս:

ՍԱՄՈՒԵԼ.— Մի զոյտ համբոյր : Դրանից աւելի լաւ
աւելացք : Էլ ի՞նչ ես ուզում :

ՏԱՅԱՏՈՒՀԻ — ՀԵՆԳ այդ եմ ուզում : ԽԱՀՊԵ՞ս և ԿԱ
ՊԱՆՈՒՄ այս նոր զարդարանքը :

ՍԱՄՈՒԵԼ. — Հօրս զլուեխը վկայ, սքանչելի է, միայն
դու մոռացել ես ներկել քո շրթունքները, այն ժամանակ
կատարելապէս մի Փարսկական թագուհւոյ կր նմանէիր:

ՏԱԶԱՏՈՒՀՅԱ—Դու հեղինում ես, Սամուել:

ՍԱՄՈՒԵԼ.— Ի՞նչ է եզրակացնելու բան կայ: Բոլորը զեղցիկ է: Բոլորը հրաշալի է: Աչա այդ արծաթեայ մաշիկը, զարդարած խոչոր արմաստներով, որ կապել և լայն ճակատիդ, զա փայլում է, որպէս նորածին կիսալուսինը փայլում է պարզ երկնակամարի վրայ, զա կը թափէ քո վրայ այն բոլոր բարիքները, ինչ որ լուսինը թափում է արարածների վրայ: Խոկ այդ արմաստները որ սփոռած են մաշիկիդ չուրջը, մշտական ուրախութիւն կը ներշնչեն քո սրտին, յաղթոզ կը հանգիսացնեն քեզ ամէն ձեռնարկութեան մէջ և թաղաւորների աշքում սիրելի կը կացուցանեն: Աչա այդ սիրուն թանան, որ կրում ես քթիկ վրան, իւր մէխակի ձեւով՝ միտ անուշահոռու-

թեամբ կը պարուրէ քո հոսուուելիքը, իսկ իւր երկնագոյն փերուզայի ակնով՝ կը լիացնէ քո արկդները ոսկով ու արծաթով, քո խօսքը, քո խնդիրքը ընդունելի կ'անէ ամենի մօտ եւ քեզ հեռու կը պահէ թագաւորների պատուհասներից։ Ահա այդ ոսկեաց գնդերը, որ վառում են գոյնը զգացն զմբուխաներով, կը պահպանեն քո լսելիքը ամէն տնախորժ ձայնից եւ միշտ ուրախալի համբաւներով կը զուարձացնեն քեզ։ Իսկ այդ զմբուխաները կը կուրացընեն օձի ու վիշապի աչքերը եւ քո անձը անխոցելի կը պահէն ամէն թռւնաւոր զեռունների ու միջատների խայթերից։ Ահա այդ մարզարտաշար մանեակը իւր խորհրդաւոր յուսութքով, զրանց մէջն է ամփոփուած քո բախոր, քո թովիչ զօրութիւնը և քո կախարդիչ հրապուրանքը, որոնք կնոջ համար անհրաժեշտ են . . . Այդ օձանեւ ապարանջանները, որքա՞ն զեղեցիկ են, որքա՞ն խորհուրդ կայ զրանց մէջ . . . զրանք կուտան քո բազուկներին յաջողակութիւն եւ օձի իմաստութիւն, իսկ այդ մարզանով եւ զոյնզգոյն ուլունքներով զարդարած թեւակապները, որոնց մէջ պահւում են, ո՛վ գիտէ, ի՞նչ տեսակ թալիսմաններ, զրանք հեռու կը պահէն քեզ զեւերի, քաջերի եւ բոլոր աներեւոյթ ողիների պատրանքներից։ Ես համազւած եմ որ, այդ թեւակապների մէջ ամփոփուած են մի սրբեցէ մողի զրուածքներ . . . Այդ մատանին կարմիր եաբութի քարով՝ ամէն մարզկան մօտ համելի կ'անէ քեզ։ Այդ միւսը՝ ոչ յլան քարով, փարատում է արին-հեղութիւնը։ Այդ երրորդը՝ վարդագոյն սուտակի քարով, փարատում է վշաերը եւ հալածում է զեւերին։ Այդ չորրորդը՝ խայտաճամուկ օձաքարով՝ թոյների ներգործաթիւնը ոչնչացնում է։ Այդ չինզերորդը՝ հակեկի զեղնազոյն քարով, ոչնչացնում է մարզկանց չար մտքերը։

ՏԱՐԱԾՈՒՀԻՒՄ — Բաւակա՞ն է, ես գիտեմ քո թերա-
հաւատութիւնը... զու այդպիսի բաներին չես հաւա-
տում:

ՍԱՄՈՒԵԼ.— Ի զուր ևս այլպէս կարծում, սիրելի մայրիկ, ևս կամենում եմ ցոյց տալ, որ այնքան ազէտ չեմ, այլ բոլորի նշանակութիւնը հասկանում եմ:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Միթէ ևս առաջ այլպիսի զարդեր չեմ կրում, եւ միթէ մեր նախարարների բոլոր կանայք այլպիսի զարդեր չեմ:

ՍԱՄՈՒԵԼ.— Ճշմարիտ է, զու կրում էիր... այն եւս ճշմարիտ է, որ մեր նախարարների կանայքը նոյնպէս կրում են, բայց ձեւերի մէջ մեծ զանազանութիւն կայ: Քո կրածները կատարելապէս նմանեցրած են Պարսկան ձեւերին...

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Թո՞ղ այլպէս լինի, ի՞նչ կայ:

ՍԱՄՈՒԵԼ.— Ոչինչ... ևս միայն զարմանում եմ, թէ ինչպէ՞ս շուտ զու պատրաստել տուեցիր այդ բոլորը:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Ես վազուց արգէն պատրաստել տուեր էի, ևս միայն սպասում էի...

ՍԱՄՈՒԵԼ.— Որ հօրս զարուստը լսածիդ ովէս կրես: Այլպէս չէ՞ :

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Գիտե՞ս, Սամուէլ, ինչու համար եկայ: Հօրից նամակ ստացայ, եկայ որ յայտնեմ քեզ:

ՍԱՄՈՒԵԼ.— Նամա՞կ ստացար... այդ ուրախալի՞ շա՞տ ուրախալի՞...: Ե՞րբ ստացար:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Այս զիշերը: Սուրհանդակ եկաւ: Դա, հօրդ նամակը:

ՍԱՄՈՒԵԼ.— Դա պարսկերէն է զրուած:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Այս, քեզ որ միշտ տառւմ էի, որդի սովորիք այդ լեզուն, զու ինձ ականջ չէիր զնում, իսելքդ ու միտքդ տառւեր էիր այն անծծուած յունարէնին եւ ասուրէնին: Հիմա տեսնո՞ւմ ես, հօրդ նամակն ալ չես կարդանում կարդալ:

ՍԱՄՈՒԵԼ.— Դու ի հարկէ, կարդացած կը լինես, պատմիր, ի՞նչ է զրում հայրս:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Շապուհ արքան չնորհել է քո հօրը,

Սամուէլ, Հայոց Սպարապետութիւնը, իսկ քեռիիդ Մերուժանին խոստացել է Հայոց թագաւորութիւնը եւ իր Որմիզդուխտ քոյրը անոր կնութեան է տուել: Այժմ թէ՛ Մերուժանը եւ թէ՛ հայրդ ձահապարհի վրայ են, Պարսից զօրքով գալիս են, մէկը Հայոց թագաւոր զանալու համար, միւսը Հայոց Սպարապետ: Դու այժմ կարող ես չընորհաւորել ինձ, սիրելի Սամուէլ: Եղբայրո՞՝ Հայոց թագաւոր, իսկ քո հայրը՝ Հայոց Սպարապետ:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Այդպէս շուտ ուրանա՞լ, դեռ վաղ է, սիրելի մայր:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Ինչո՞ւ:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Դեռ Հայոց թագաւորը կենդանի է...

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Հայոց թագաւորը աքսորուած է Անուշ բերդում, որտեղից այլեւս մարդիկ չեն վերադառնում:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Այդ ես զիտեմ, որ այլպեղից մարդիկ այլեւս չեն վերադառնում, բայց Հայոց թագաժառանդը կ. Պոլսումն է, քրիստոնեայ կայսրի մօմ...

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Նրան ո՞վ կը բերէ, եւ իւր հօր զահը կը նստեցնէ:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Յունաց զօրքերը եւ Հայոց նախարարները:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Մինչեւ նրանց զալը, Հայոց երկիրը գրաւուած կը լինի Պարսից զօրքերով, իսկ իմ եղբայրը՝ թագաւոր:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Յաջողութիւն եմ ցանկանում:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Դու չես հաւատու՞մ, Սամուէլ: Բայց չուտափ կը տեսնես, որ այդ բոլորը կը կատարուի:

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— Այս, կը կատարուի: (Մեկնում է):

ՏԱՅԱՏՈՒՀԵԼ.— (Բազու կ'երեւլ): Բազո՞ւ ե՞կ այս տեղ: Գիտես, մենք մօմ տաենչն հիւր կ'ունենանք: Պէտք է ամէն պատրաստութիւններ անել: Հազար անգամ պատուիրում եմ, զարձեալ մոռանում են, թէ ի՞նչ բան որ-

տեղ պէտք է դնել, կամ ի՞նչ բան որտեղից պէտք է վեր առնել: Եւ ևս ամէն անդամ, երբ մի նշանաւոր ժարդ եմ ընդունում, առանց ամօթի չեմ մնում: Երեւակայիր մի հասարակ բան: Մեծ զժուարութեամբ ևս կարողացայ որսալ տալ մի սոխակ, մի առ մի պատուիրեցի սպասաւորներին, թէ վանդակը այսաեղից պէտք է կախ տալ, եւ ինչո՞վ պէտք է կերակրել սոխակին: Բայց ի՞նչ: Այս առաւօտ մտնում եմ գահինը, գտնում եմ ինկճ թուզունին վանդակի մէջ սպաննուած: Բանից զուրս դալիս է, որ վանդակը փոխանակ վերեւից կախ տարու, զնում են պատուհանում, կատուն գալիս է, թաթը կոխում եւ սպաննում է սոխակին:

ԲԱԳՈՍ — Այդ վերին աստիճանի անհոգութիւն է, Տիկին:

ՏԱՅԱՏՈՒՀԻՉԻ. — Բայց մի ուրիշին որսալու է Բագոս, որովհետեւ չուսով մենք Պարսիկ զօրապետներ հիւր պիտի ունենանք: Մենք նրանց սովորութեան համաձայն պէտք է շարժուինք, եւ ցոյց տանք մեր համակրութիւնը դէպի նրանց հաւատալիքները: Սոխակի մէջ, Բագոս, բնակում է բարի հրեշտակներից մէկի ողին, ամէն մի զրադաշտական պէտք է մի հատ պահի իր տան մէջ: Նրա երգը հանապազօրեայ օրհնութիւն է տան բախտաւորութեան համար:

ԲԱԳՈՍ — Զեր նկատումը չատ ճիշտ է, տիկի՞ն:

ՏԱՅԱՏՈՒՀԻՉԻ. — Ե՛կ, ժօնեցիր, Բագոս: Լոի՛ր: Դու պէտք է ականջներդ լարես, եւ ամենայն ուշադրութեամբ հետեւիս ամրոցի անցուզարձերուն եւ հաւաքած տեղեւիութիւններդ ինձ հազորդես: Հասկանո՞ւմ ես:

ԲԱԳՈՍ — Հասկանում եմ:

ՏԱՅԱՏՈՒՀԻՉԻ. — Ալոչա՛փ: Ե՛կ ինձ հետ: (Մեկնում են):

Մուշեղ եւ Սամուել կը մտնեն
ՄՈՒՇԵՂ. — Ինչո՞ւ կանչել էք ինձ, Սամուել:
ՍԱՄՈՒԵԼ. — Նստինք կը պատմեմ... (Չորս կողմը կը նայի):

ՄՈՒՇԵՂ. — Ինչո՞ւ տատանւում ես, Սամուել, ինչո՞ւ չես պատմիր: Երեւի մի զարհութելի բան կայ, որ վարանում ես ինձ յայտնելու, Սամուել:

ՍԱՄՈՒԵԼ. — Այս՛, Մուշեղ, մի քատմնելի բան, որ քո արիւնդ կը սառեցնէ: Բայց ես համոզուած եմ որ զու այնքան կամքի զօրութիւն եւ սրտի ամրութիւն ունիս, որ սանութեամբ կը լսես բոլորը...

ՄՈՒՇԵՂ. — Ե սէր Աստուծոյ, առանց այդ աւելորդութիւնների, պատմիր, ինչ որ տակու ունես գու կամքահանդիւնը և կամքահանդիւնը ունես գու կամքահանդիւնը և կամքահանդիւնը:

ՍԱՄՈՒԵԼ. — Ուրեմն լսիր, ինչ որ պիտի յայտնեմ: Այս առուու արշալոյսին մեր զգեսակում, զալունի անցքով մուտ էք զործել մեր հաւատարիմ զինւորը՝ Առւրենը: Նա զուժեց ինձ այն սարսափելի արարքները, որ տեղի են ունեցել Պարսկաստանում: Իմ հայրը եւ Մերուժանը միաբանւել են, ուրացել են քրիստոնէութիւնը, եւ Պարսից մողերով եւ զօրքերով գալիս են նուաճելու Հայոստանը: Շապուհը իւր քոյրը Որմեղդուխտին՝ կնութեան է տուել Մերուժանին, եւ խոստացել է նրան Հայոց թագաւորութիւնը, եթէ նա կը յաջողացնէ տարածել Հայոց երկրում Պարսից կրակապաշտութիւնը: Իմ հայրը ստացել է Հայոց Սովորապետութիւնը, իսկ Սրբակ թագաւորը աքսորուած է Անուշ բրդում:

ՄՈՒՇԵՂ. — Խսկ իմ հա՞յրը:

ՍԱՄՈՒԵԼ. — (Մեկնուի) Ա՛չ, ինչպէս յայտնեմ թէ նա եւս սպաննուած է Շապուհից: (Մուշեղին) Բո հայրը նոյնապէս...

ՄՈՒՇԵՂ. — Աքսորուած է:

ՍԱՄՈՒԵԼ. — Այո՛, աքսորուած է ...

ՄՈՒՇԵՅ. — Թագաւորի՞ հետ :

ՍԱՄՈՒԵԼ. — Այո՛, թագաւորի հետ ...

ՄՈՒՇԵՅ. — Խորերայ Պարսիկ, քեզ համար խօսքի և խոստմունքի սրբութիւն չկայ ... վարագագիր մտասնիով աղ կնքեցիր դու, որ քո կրօնի մէջ ամենամեծ երդումն է, և ուղարկեցիր, կոչելով իմ հօրը և նրա թագաւորին քո մօտ, իբր հաշոտութեան ուխտ զնելու, բայց տարար և վասութեամբ աքսորեցիր : Անամօ՞թ ... իրուէ, իմ հայրը ամբողջ երեսուն տարի անբնդհատ պատերազմեց Շապուհի զօրքերի հետ և ամէն անգամ ջարդեց նրան : Բայց պատերազմեց ազնիւ կերպով : Եթէ Շապուհը փոքր ի շատէ մարգավարութիւն ունենար, նա չպիտի մոռանար այն մեծահոգութիւնը, որ իմ հայրը ցոյց տուեց նրան : Երբ նա յաղթուած, խորտակուած, փախչում էր իմ հօր առջեւից, նրա ամբողջ բանակը և ամբողջ կանանցը գերի ընկաւ իմ հօր ձեռքում, բայց հայրս նրա կանանցը պատուով յետ ուղարկեց Պարսից արքունիքը : Այդ լորորը մոռացաւ նա : Գաւաճանեց իւր երգմանը և խարեց : Վա՛տ մարդ ... լսիր, Սամուէլ, մենք մեր հայրերի զաւակը չենք լինի, մենք պոռնկորդի պիտի համարուինք եթէ այդ լսոր անիրաւութիւնները կը մնան անպատիթ : Համբերութեան բաժակը լցուեցաւ, թշնամին մինչեւ ծայրը հասցեց իւր վասութիւնը ... ինչո՞ւ ես լուս, ինչո՞ւ չես պատասխանում :

ՍԱՄՈՒԵԼ. — Դու աւելի բախտաւոր ես, քան թէ ես, Մուշեղ : Քո հայրը մի հերոս էր և հերոսի վախճան ունեցաւ ... նա իւր ամբողջ կեանքը անցկացրեց, պատերազմելու հայրենիքի թշնամիների հետ, և վերջը իւր անընդուած թագաւորից չըաժնուեցաւ ... : Սուրհանդակը պատմում էր ինձ, թէ ինչպէս նա իւր բայոր վեհութեամբ կանգնած էր Շապուհի առեանում և յանդիմանում էր ուիստազանց թագաւորի խարերայութիւնը : Բայց ես ան-

բախտ որդի եմ : Իմ հայրը, արժանաւոր հարազատի անարժան եղբայրը, դաւաճանեց իւր հայրենիքին :

ՄՈՒՇԵՅ. — Այո՛, քո հայրը դաւաճանեց ... և Մամիկոնեանների տոհմի վրայ մի մեծ բիծ դրեց ... պէտք է մաքրե՛լ այդ բիծը ... (պատկերին նայելով) : Երբ այդ հերոսը ընկաւ պատերազմի դաշտում, այն արիւնահեղ կուիի մէջ, որ մզում էր Պարսիկների դէմ, այդ ժամանակ հայոց ամբողջ աշխարհը սուզի մէջ մտաւ : Հայոց եկեղեցին իւր սուրբ սեղանի վրայ, պատարազի ժամանակ, իւր նահատակների թւում յիշում է և մեր պապին . բայց այսուհետեւ նոյն եկեղեցին անէծք կը կարդայ նրա անարժան թոռան վրայ ...

ՍԱՄՈՒԵԼ. — Եւ դա իմ հայրն է ...

ՄՈՒՇԵՅ. — Հայրենիքի թշնամին, հայրենիքի դաւաճանը ոչ քո հայրը կարող է համարուել, և ոչ իմ հօրեղբայրը : Այսուհետեւ նա մեզ համար օտար է, և աւելի օտար, քան թէ Պարսիկ : Համաձայն ես Սամուէլ :

ՍԱՄՈՒԵԼ. — Այո՛, Մուշեղ :

ՄՈՒՇԵՅ. — Տուր ինձ ձեռքք : Վճռուած է ... : Այժմ խորհինք թէ ինչ պէտք է անել : Լսիր, Սամուէլ, երբեք Հայաստանը այնպիսի ճգնաժամի մէջ չէ զտնուել, որպէս այժմ : Թագաւորը աքսորուած է, Հայրապետը՝ Մէծն Ներսէսը՝ Վագէր կայսրից աքսորուած է Պատմոս կզգին, իմ հայրը՝ սպարապետը աքսորուած է : Թշնամիները այդ անսուրութիւնից կարող են ամէն տեսակ օգուաներ քաղզել : Ներքին երկպատկութիւնը աւելի մեծ վտանգ է սպառնում, քան թէ արտաքին թշնամին : Իմ ստացած տեղեկութիւնների համեմատ՝ մեր նահանգներից շատերը ապրամբուել են, մտածում են թօթափել Հայոց թաղաւորի լուծը :

ՍԱՄՈՒԵԼ. — Անիրաւնի՛ր, նրանք, որ մեր հայրենիքի կողմնակալներն ու անհմանապահներն են, այժմ եան ընդհանուր ճգնաժամի ժամանակ, փոխանակ պաշտպանե-

լու երկիրը արտաքին թշնամիներից, նախ իրանք են լինում, որ ապստամբուել են և բարեկամական ձեռք են մեկնում թշնամուն: Այլեւս մեզ ի՞նչ է մնում, երբ գլխաւոր ուժերը ապստամբուել են:

ՄՈՒՆԵՆ. — Մեզ մնում է ժողովուրդը. թշնամին մի մեծ սխալ զործեց, եւ մենք այդ սխալից կարող ենք օգուտ քաղել: թշնամին դպւու ժողովուրդի ամենասրբազան զգացմանքներին՝ նրա եկեղեցւոյն: Եթէ քո հայրն ու Մերսւանը ճանաչած լինէին Հայի սիրան ու հոգին, նրանք պէտք է ձեռնամուխ ըլինէին զէպի եկեղեցին, այն ժամանակ գուցէ, կարող էին նուաճել Հայաստանը:

ՍԱՄՈՒԵԼ. — Բայց ժողովուրդը զեռ ոչինչ չգիտէ:

ՄՈՒՆԵՆ. — Այդ գէպքում հոգեւորականութիւնը մեր զօրել զանակիցը կը լինի: Դու, Սամուէլ, աւելի մօտ յարաբերութիւններ ունես Աշոփշատի վանքի հետ, առանց ժամանակ կորցնելու, կը գնաս այնտեղ եւ ինչ որ պէտք է, կը կարգադրես: Այնտեղ դու անպայման կը գոնես Սահակին և Մեսրոպին, որոնք մեծ զօրավիզ կարող են լինել մէզի: Իսկ ես իմ կողմից բոլոր վանքերը մարդիկ կ'ուղարկեմ: Ես զնում եմ: (Մեկնում է):

(Տահատուիի եւ Որմիզգուիխտ ներս են մտնում)

ՈՐՄԻԶԳՈՒԽՏ. — Բարի լո՛յս, սիրելի! Սամուէլ:

ՍԱՄՈՒԵԼ. — Բարի լո՛յս, Որմիզգուիխտ:

ՏԱԾԱՑՈՒՀԻ. — Գիտե՞ս, Սամուէլ, մենք չուտով չիւրեր կ'ունենանք: Ես մոռացայ քեզ ասել այդ:

ՍԱՄՈՒԵԼ. — Ի՞նչ չիւրեր...

ՏԱԾԱՑՈՒՀԻ. — Դեռ եւս հարցնո՞ւմ ես, Սամուէլ, չօրդ հետ գալիս են Պարսից զօրապետները, Զիկ եւ Կարեն իշխանները, տարակոյս չկայ որ, Տարօնով անցնելու միջոցին՝ նրանք մեր ամրոցում հիւր կը լինեն:


ՍԱՄՈՒԵԼ. — Այդ ես զիտեմ, սիրելի մայր: Դեռ վայէ... զու շնապում ես... Պարսից զօրապետները այսպէս չուտ չեն գայ... մինչեւ նրանց Տարօնի սահմանը մտնելը,

ՃԵՆՔ ԹԱՎՈՎԱՅ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՆԵՆՔ այդ գերապատիւ հիւրերի ճամանակ պատրաստութիւն անսնելու...

ՏԱԾԱՑՈՒՀԻ. — Իսկ զու, սիրելի Սամուէլ, պէտք է պատրաստուես հօրդ ընդառաջ զնալու: Ես ամէն ինչ պատրաստել կրտամ քո ճանապարհորդութեան համար, թանկազին Սամուէլ: Դու չգիտես ինչ բան է մօր սիրաբ: Դու չգիտես, թէ որպիսի ջերմութեամբ ամէն բոլէ բարախում է նրա որդու բախտաւորութեան համար: Ես հէնց այսօր կը հրամայեմ պատրաստել նժոյզները: Արծաթեայ ասպազէնքով եւ թանկազին շալերով զարդարել կը տամ նրանց: Աւելի քան յիսուն հետեւակներով զու կը դիմաւորես քո հօրը: Եւ ամէն մարդ, ով որ կը տեսնէ քո փառաւորութիւնը, երանի կը տայ քո ծնողներին:

ՏԱԾԱՑՈՒՀԻ. — Այդ բոլորը հարկաւոր է հօրս արժանաւոր ընդունելութեան համար, սիրելի! մայր, բայց դու նրա մեծապատիւ ուղեկիցների ընդունելութեան մասին ոչինչ չասեցիր: ... Հօրս հետ գալիս են Պարսից երկու հշանաւոր զօրապետները — Զիկ եւ Կարեն — զրանք գալիս են մեր երկիրը պահպանելու... զրանց ընդունելութեան համար եւս հարկաւոր են փառաւոր ընդունելութիւններ ...: Երբ նրանք ոտք կը զնին Տարօնի հողին վրայ, այդ յամանակ զու, սիրելի! մայր, սկսեալ Արածանիի ափերից, մինչեւ մեր ամրոցը, ճանապարհի ամրող տարածութիւնը պատել կը տաս թանկազին գորգերով: Եւ Պարսից զօրապետները այդ փառաւոր փիխնդողի վրայով ընթանալով, կը մտնեն մեր ամրոցը: Այն ժամանակ կը կատարենք մեծահանդէս խրախմանը...: Բայց չմոռանաս, սիրելի մայր, պատուիրել, որ մինչեւ մեր ամրոցին հասնիլը, բայտ Պարսից սովորութեան, ճանապարհի վրայ, բազմաթիւ գոհեր մատուցուեն նրանց առջեւ... թող արիւով սրբուի այդ ճանապարհը... թող զոհերի գիտեների վրայով անցնեն այդ յարգելի հիւրեւացւութեան ժամանակ կը գը

ՏԱԾԱՑՈՒՀԻ. — Գիտե՞ս, Սամուէլ, ովքը են գը



րանք, որքան մեծ ազգեցութիւն ունեն Շապուհի արքունիքում:

ՈՐՄԻԶԴԻԹԻԽԸ — Նրանք իմ եղրօր յետին ծառաներն են, ևթէ այստեղ գալու լինեն, համարձակութիւն չը պիտի ունենան իմ մօտ նստելու:

ՍԱՄՈՒԵԼ. — Ճշմարիս է, սիրելի Որմիզդուխտ: Բայց երբ Պարսից արքունիքի յետին ծառաները մեղ մօտ են գալիս, մենք ոչ միայն նրանց ամենաբարձր բազմոցն ենք ցոյց տալիս, այլ մեր զիմի վրայ ենք նստեցնում...: Դու նոյնպէս պէտք է պատրաստութիւններ տեսնես, Որմիզդուխտ, այժմ կը յայտնեմ քեզ մի շատ եւ շատ ուրախալի նորութիւն: Քո եղրայրը, Շապուհ Արքան, քո կրտսեր քրոջը՝ Որմիզդուխտին՝ կնութեան է տուել Մերուժան Արծրունուն: Արդէն Տիզմոնից գուրս են եկել, եւ հօրս հետ գալիս են Հայաստան:

ՈՐՄԻԶԴՈՒԵԼ. — Այդ լա՛ւ է: Ուրեմն ես շուտով կը տեսնե՞մ քրոջս... ուրեմն նրանք շուտով այստեղ կը լինե՞ն...

ՍԱՄՈՒԵԼ. — Ի Հարկէ, կը տեսնես քո քրոջը... գուցէ շուտով այստեղ կը լինեն... մի այլ ուրախալի նորութիւն եւս...:

ՏԱՅԱՏՈՒԵԼ. — Արդ ի՞նչ տակու բան է, մտածի՞ր Ամուսէլ:

ՍԱՄՈՒԵԼ. — Ինչո՞ւ չասել, ինչո՞ւ նա չպիտի զիտենայ, որ իւր ամուսինը, այսինքն եւ քո ամուսինը եւ իմ Հայրը, զալիս է: Ինչո՞ւ նա չպիտի զիտենայ, որ իւր քոյրը պատկուած է Մերուժանի հետ: Ի՞նչ Հարկ կայ թագցնել նրանից:

ՏԱՅԱՏՈՒԵԼ. — Նրա համար պէտք է թագցնել, որ դի երեխայի չափ խելք չունի, ինչ որ գա զիտէ, մի բոպէից յետոյ ամբողջ ամբոցը կարող է զիտենալ:

ՍԱՄՈՒԵԼ. — Բոլորովին սխալ է: Որմիզդուխտը, իւրաւ է, անմեղ երեխայի սիրտ ունի, բայց մի լաւ կնոջ իւրէ:

ՈՐՄԻԶԴՈՒԵԼ. — Մի՛ վշտացրու մօրդ, Սամուէլ, (Տաճատուիիին) Դու ուրախ չե՞ս, որ իմ քոյրը ամուսնացել է քո եղրօր հետ:

ՏԱՅԱՏՈՒԵԼ. — Ինչո՞ւ ուրախ չլինել: Իմ ուրախութիւնը սահման չունի:

ՈՐՄԻԶԴՈՒԵԼ. — Ուրեմն Սամուէլից պէտք է չնորդակալ լինել, որ խորհուրդ է տալիս պատրաստութիւններ տեսնել: Ի՞նչ ուրախութիւն կը լինի այն օրը, երբ նրանք այստեղ կը հասնեն:

ՍԱՄՈՒԵԼ. — Մի այլ ուրախալի նորութիւն եւս, Որմիզդուխտ, քո քոյրը շուտով Հայոց թագուհի կը դառնայ...:

ՈՐՄԻԶԴՈՒԵԼ. — Ա՛խ, ի՞նչ ես ասում, ճշմարի՞տ է... ճշմարի՞տ է... զու հանաք ես անում, Սամուէլ: (Հրիուանիից կը փաքքուի Սամուէլի):

ՍԱՄՈՒԵԼ. — Հանաք չեմ անում... բոլորովին ձըշմարիս է... քո եղրայրը խոստացել է Մերուժանին Հայոց թագաւորութիւնը...

ՈՐՄԻԶԴՈՒԵԼ. — Ա՛խ, որքան լաւ կը լինի: (Տաճատուիին) Լաւ չի՞ լինի:

ՏԱՅԱՏՈՒԵԼ. — Ի Հարկէ լաւ կը լինի:

ՍԱՄՈՒԵԼ. — Շատ լաւ կը լինի, Որմիզդուխտ, բայց դու երեխ չզիտես, որ Հայոց թագաւորական զահին հասնելու համար՝ Մերուժանը դեռ չատ զործեր պէտք է կատարէ...

ՈՐՄԻԶԴՈՒԵԼ. — Ի՞նչ զործեր:

ՍԱՄՈՒԵԼ. — Ես բոլորը կը պատմեմ քեզ:

ՏԱՅԱՏՈՒԵԼ. — (Գալուսի) Լոէ՛, Սամուէլ:

ՍԱՄՈՒԵԼ. — Նա պէտք է զիտենայ, եւ կատարուելիք զործերի յաջողութիւնը պահանջում է, որ նա զիտե-

նայ : ինչո՞ւ ես ինձ արդելում : (Առաջամուտին կը մօտենայ) Ե՛կ այսակղ, Որմիզգութաս... հիմա կ'ասեմ քեզ, Որմիզգութաս, թէ ինչ գործեր պէտք է կատարէ Մերուժանը գահին հասնելու համար : Բայց այդ գործերի մէջ մենք պէտք է օգնենք նրան... մանաւանդ դու, Որմիզգութաս... տեսնո՞ւմ ես, Որմիզգութաս, ինչովս գեղեցիկ լուսաւորում են այնակղ արեղակի պայծառ ճառագայթները, Արփին իւր աստուածային ջերմութեամբ կեանք է ներշնչում այդ հրաշալի դրախտին : (Որմիզգութաս ըստ բեր Սամուելի պարանոցը կը փաթաքէ եւ սեղմ կը կանգնի անոր կողքին) : Այդ ծառերի ստուերախիտ լուսութեան մէջ կանգնած են Մամիկոնեանների տաճարները : Իմ պապերը սպասուեցին այնակղ իրանց գանձերը, աշխարհի ըստ թանկագին իրեզէններով զարդարելով այդ տաճարների սուրբ սեղանները : Այժմ մենք՝ Մամիկոնեաններո՞ւ կը կործանենք այդ տաճարները, սիրելի Որմիզգութաս, ու նրանց տեղը Պարսկական ատրուշաններ կը հիմնենք : Թո՞ղ ծուխով ու մուխով լցուի այդ նուիրական դրախտը... թող այդ գեղեցիկ ծառաստանը այրուի՛, մոխիր զառնայ Որմիզգական կրակի մշտավառ բացերի մէջ... թող քրիստոնէական խունկի ու կնդրուկի անուշահոսութեան փոխարէն՝ մողերի մատուցած ողջակէզների ձենձերին հոտու բուրէ այդ սրբազն տեղերում... թո՞ղ լոէ զանգակի ու կոշնակի տաղտկալի ձայնը... թո՞ղ այդ հրաշալի բարձրութիւնների վրայ ամէն առաւօտ, արեւի ծագման ժամանակ, եւ ամէն երեկոյ, արեւմուտքի ժամանակ, հնէք մողերի թմրուկի ու շեփորի ձայնը... եւ թող բարեպաշտ հայ շինականը, այդ ձայնը լսելով, զողոցուն սրտով բարձրանայ իւր կառւրի վրայ եւ երկրպագութիւն տայ երանող ու մտնող արեղակին... լըսո՞ւմ ես, սիրելի Որմիզգութաս, ահա այդ է պահանջում քո եղբայրը, եւ այդ պէտք է կատարէ Մերուժանը, Հայոց թագաւոր զառնայու համար...

ՏԱՃԱՏՈՒՀԻՉԻ.— Բաւական է, Սամուէլ: Դու ծաղրում ես : Լաւ մտածիր քո վարժունքը : — Որմիզգութիւն, հեռացի՛ր այդտեղից :

ՍԱՄՈՒԵԼ.— Ա՛յս, ինչո՞ւ ես դու իմ ոգեւորութիւնը ծաղրի տեղ զնում, սիրելի՛ մայր : Ես բոլորովին չեմ ծաղրում : Ես ասում եմ այն, ինչ որ դու ցանկանում ես : ... Ո՞ւր Որմիզգութաս :

ՈՐՄԻԶԳՈՒԹԻՒՆ.— Ես ինձ վաս եմ զգում, գլուխս պտոյշում է... զնում եմ մի փոքր հանգստանալու...

ՍԱՄՈՒԵԼ.— Կա՛ց, Որմիզգութաս : Դու մոսաքար քո չովհարը, ահա՛ :

ՈՐՄԻԶԳՈՒԹԻՒՆ.— (Ընդունելով հովհարը) Շնորհակալ եմ, սիրելի Սամուէլ : (Անուօ եւ սիրալի նայուած մը նետելով կը մեկնի) :

ՍԱՄՈՒԵԼ.— Դու վիրաւորեցիր Որմիզգութասին, մայր :

ՏԱՃԱՏՈՒՀԻՉԻ.— Ես չեմ կարող համբերել իմ սենեակում այս տեսակ Պարսկական վաւաշոտութիւնների :

ՍԱՄՈՒԵԼ.— Բայց դու սիրում ես ամէն ինչ, որ Պարսկական է...

ՏԱՃԱՏՈՒՀԻՉԻ.— Բայց մտածի՛ր, Սամուէլ, նա քո հօք կինն է...

ՍԱՄՈՒԵԼ.— Եւ իմ յարդելի մայրն է... (սպանագին) Եթէ դու զարձեալ այսպէս անվայել կերպով կը խօսիս նրա վրայ, ես իսկոյն նրա նման զուրս կը զնամ եւ միւս անզամ էլ չեմ մտնի այս զահիձը :

(Վարագոյր)

ՏԵՍԱՐԱՆ ԻI

(Կ Ա Յ Ա)

(Կախ երեկոյ , ապա զիշեր)

ԱՐԲԱԿ .— (Կատած է) :

ՅՈՒՍԻԿ .— (Կերս գալով) Գիտե՞ս , Արբակ , դըր-
առմքը ի՞նչ տեսայ :

ԱՐԲԱԿ .— Ի՞նչ տեսար , ոստանայ :

ՅՈՒՍԻԿ .— Տեսայ՝ մէկը մի քանի անդամ անցաւ
իմ մօտով : Ես կուզ եկայ պատի տակէն , նա ինձ չտեսաւ
եւ պառյատ տարով անցաւ : Նա պատում էր մեր սենեակ-
ների շուրջը եւ անդադար նայում էր դէպի այս կողմ եւ
դէպի այն կողմ : Երբեմն մօտենում էր , կանդնում էր
լուսամուտի ներքեւ , ականջ էր զնում : Եւ որպէսզի չը
նկատեն նրան , նա հեռանում էր եւ նորից մօտենում : Երբ
մի անդամ եւս հեռացաւ , ես վազեցի դէպի խոհանոցը ,
այնուղից վեր առի մի բաւական խոչոր փայտի կոճղ ,
բերեցի , զբեցի ուղիղ այն գծի վրայ , որտեղից նա մօ-
տենում էր լուսամուտին : Երբ կը կին անդամ եկաւ նա ,
ոտք դիպաւ կոճղին եւ մի բաւ զլուխի կոնծի տուեց բակի
սոլերի վրայ : Եւ չեմ իմանում , զլուխը կոտրեց , թէ քե-
թը , բայց մի խոր «ա՛խ» , «վա՛յ» զուեց եւ կաղկալով
հեռացաւ :

ԱՐԲԱԿ .— Զիմացա՞ր ո՞վ էր :

ՅՈՒՍԻԿ .— Ինչպէ՞ս չիմացայ , ներքինի Բագոսն էր ,
Տիկոնյ ներքինին . կը լրտեսէր :ԱՐԲԱԿ .— Այդ անողիտանը սպաննելու է ... չան նման
սատկեցնելու է ...

ՅՈՒՍԻԿ .— Նա իւր վարձը ստացաւ :

ԱԱՄՈՒԵԼ .— (Կերս մտնելով) Բարի՛ երեկոյ , սիրե-
մի Արբակ : Հիմա ասս Արբակ , մօրս մօտ եղե՞լ ես :

ԱՐԲԱԿ .— Եղել իմ . Երկու անդամ :

ՅՈՒՍԻԿ .— Ո՞չ երեք անդամ :

ԱՐԲԱԿ .— (Խոժող նայուածք մը նետելով Յուսիկի
վրայ) , Հա , մէղայ Աստուծոյ , երեք անդամ : Մէկ ան-
դամ առաւօտեան , մէկ անդամ կէսօրին ...ԱԱՄՈՒԵԼ .— (Ծիծաղելով) Մէկ անդամ էլ երեկոյ-
եան :

ԱՐԲԱԿ .— Հա՛ , մէկ անդամ էլ երեկոյեան :

ԱԱՄՈՒԵԼ .— Դէ՛ , պատմիր , ի՞նչ պատրաստութիւն-
ներ է տեսել ձանապարհորդութիւնն համար : Ես վազր ա-
ռաւօտ պէտք է զնամ , անպատճառ պէտք է զնամ :ԱՐԲԱԿ .— Մօրդ ցանկութիւնն էլ հէնց այդ է , որ
առաւօտեան զնամ : Բոլոր պատրաստութիւնները տես-
նուել են :ԱԱՄՈՒԵԼ .— Ես կը ցանկայի , որքան կարելի է թե-
թեւ լինէր իմ ասպախումբը ...ԱՐԲԱԿ .— Մայրդ ցանկացել է , որ քո հօր եւ քո ա-
նունին պատշաճ լինի քո ասպախումբը ...ԱԱՄՈՒԵԼ .— Իսկ գու , սիրելի Արբակ , չէ՞ս դարու
ինձ հետ :ԱՐԲԱԿ .— Արբակը քեզ ե՞րբ է միայնակ թողել , որ
այժմ թողնէ :ԱԱՄՈՒԵԼ .— Յուսիկ , ինչո՞ւ տրասւմ նայում ես :
Քո կերպարանքը ցոյց է տալիս որ գու եւս ցանկանում
ես իմ ասպախումբին բնկերանալ : Այս , քեզ էլ պիտի տա-
նեմ ինձ հետ . կը հրաժայես , սիրելի Արբակ , որ իմ աս-
պախումբիս բոլոր մարդիկը պատրաստ րլլան վագ ստա-
ւում :

ԱՐԲԱԿ .— Ես արգէն պատուիրել եմ : (Կելլի ոսքի) :

ԱԱՄՈՒԵԼ .— Ո՞ւր Արբակ :

ԱՐԲԱԿ .— Դեռ եւս պակաս բաներ չատ կան , զնում
եմ կարգի զնելու ...ԱԱՄՈՒԵԼ .— Շնորհակալ եմ , սիրելի Արբակ , ես ա-
ռաւօտեան վագ , շատ վագ պէտք է ձանապարհ ընկնեմ :

ԱՐԲԱԿ .— (Կը մեկնի) :

ՍԱՄՈՒԵԼ. — Յուսիկ, ինչո՞ւ ես լուս, առելիք մը
ունե՞մ :

ՅՈՒՍԻԿ. — ինչպէս ասեմ... Տէր իմ...

ՍԱՄՈՒԵԼ. — Այսպէս ասա, ինչպէս միշտ սովորու-
թիւն ունես առելու : Ինչի՞ց ես ամաչում :

ՅՈՒՍԻԿ. — Սյաօր ամրող օրը լաց էր լինում «նա» :

ՍԱՄՈՒԵԼ. — Ո՞վ, նուա՞րդը :

ՅՈՒՍԻԿ. — Սյո՛, Տէ՛ր իմ :

ՍԱՄՈՒԵԼ. — Ինչո՞ւ էր լաց լինում :

ՅՈՒՍԻԿ. — Ես իմացել է որ ես զնալու հմ իմ տիրոջ
հետ...

ՍԱՄՈՒԵԼ. — Եւ, տիրո՞ւմ է :

ՅՈՒՍԻԿ. — Ո՞չ, աէր իմ : Ես խօսք էի տուել...

ՍԱՄՈՒԵԼ. — Ի՞նչ խօսք էիր տուել :

ՅՈՒՍԻԿ. — Ու այդ օրերում... :

ՍԱՄՈՒԵԼ. — Կը պահկուէք: Այզպէս չէ՞ :

ՅՈՒՍԻԿ. — Սյո՛, Տէ՛ր իմ :

ՍԱՄՈՒԵԼ. — Հիմա ի՞նչ ես ուզում, կամենում ես
մնալ, պահկուէլ :

ՅՈՒՍԻԿ. — Ո՞չ, Տէ՛ր իմ, Ես նրան զես նշան էլ չեմ
տուել :

ՍԱՄՈՒԵԼ. — Դու քո խոստումի կէսը այժմ կարող
ես կատարել, նշանը կը տաս, իսկ պահկուէլը կը մնայ
մէր վերագտնալուց յետոյ: Դեռ ես չփառեմ, թէ երբ կը
վերագտնանք... բայց երբ էլ որ լինի, ես քեզ պահկուէլ
կը տամ նուարդի հետ: Ես լու աղջիկ է, նա այս օրե-
րում մի քանի լաւ ծառայութիւններ արեց ինձ, եւ այդ
պատճառով, իմ կողմից առանձին վարձատրութեան ար-
ժանի է: Երբ Արբակը կը գայ, կ'ասեմ նրան, որ իմ զան-
ձից տանէ նրա համար ամենաթանկագին նշաններ :

ՅՈՒՍԻԿ. — (Ծնկաշնէ կ'ուզէ համբուրել Սամուէլի
ոսքը...)

ՍԱՄՈՒԵԼ. — Վեր կա՞ց, որքան նուարդը լաւ աղջիկ
է, այնքան դու լաւ սպասաւոր ես :

ՅՈՒՍԻԿ. — (Դուրս կ'ելլէ):

ԱՐՏԱԿԱՋԴԻ. — (Վազելով, ներս մտնելով) ԱՇԽ, ե-
թէ զիտենայիր, Սամուէլ, որքա՞ն ուրախ եմ... որքա՞ն
ուրախ եմ... չեմ կարող պատճել...

ՍԱՄՈՒԵԼ. — Այդ ի՞նչն է այդքան ուրախացրել քեզ:

ԱՐՏԱԿԱՋԴԻ. — Նստենք կը պատճեմ: Սաստիկ յոդ-
նել եմ, սաստիկ...: Այս առաւտ միայն ինձ ասացին,
որ դու զնալու ես հօրդ գիմաւորելու: Մտածեցի, ինչո՞ւ
ովէտք է Սամուէլը զնայ, իսկ ես չզնամ: Իսկոյն վակ
առուի Մուշեղի մօտ, ձեռքն համրուրեցի, սոքն համբու-
րեցի, վերջապէս նրա հաճութիւնը տոի: Յետոյ, վաղ
տուի քո մօր մօտ, նրա էլ զլիսից սկսած մինչեւ ուռեւը
համբուրեցի: Ես էլ կամք տուեց: Մնում էր իմ մայրը:
Գրան համբուրներով համոզել վոքը ինչ դժուար էր: Զու
տուի լեզուիս: Գիտես, ասացի, Մերուժանը զալիս է,
վահանը զալիս է, նրանց հետ լինելու են Պարսից թա-
գաւորի մեծամեծ զօրացիաները, ովէտք է երենալ բա-
նակի մէջ, ովէտք է ցոյց տալ իրան: Այսուղ հաւաքուե-
րու են բոլոր նախարարների որդիները: Ես որբ՞ցն եմ
պակաս, թէ իմ նետ նետելով, եւ թէ իմ նիդակ չարժե-
րով: Ես բարեհաճեց ու ես ալ երեւամ ասովախումբի մէջ
եւ իմ բաջագործութիւններով զարմացնեմ Պարսիկներին:
Ես չեմ սարքում:

ՍԱՄՈՒԵԼ. — Վաս չէ, թէ եւ քիչ մը ուուտ ես խօսել:

ԱՐՏԱԿԱՋԴԻ. — Ո՞չ, Սամուած է վկայ, ուուտ չեմ ա-
սել, բայց մի վոքը պարծեցել եմ: Ինչ պէտք է անէի,
մարդ ուզում է զուրս զայ, աշխարհ տեսնէ, բայց դրանք
կոյցը աղջկայ նման, չէնց տանն են պահում: Ես իս պրդ-
տիկ չեմ, մի տարի էլ անցնի բիխերս զուրս կը զան...
այն ժամանակ կ'ասեն՝ «զու մարդ ես»: Բոլորի հաճու-
թիւնը ստացել եմ, սիրելի Սամուէլ, մնում ես զու, ա-

սա, յօժա՞ր լո, որ ես էլ զամ քեզի չետ։ (Լուրիսի) : Եթէ զու չհամաձայնուես, ես առանց քեզ էլ կը զնամ . . .

ՍԱՄՈՒԵԼ. — (Լուրիսի) Դա ինձ հարկաւոր կը լինի։ (Արտաւազին) Մի՛ վշտացիր, սիրելի Արտաւազդ, զու իմ ասողախումբի զարգը կը լինես, ես առանց քեզ մի քայլ անդամ չեմ փոխի, զնա՛, պատրաստուիր։

ԱՐՏԱՀԱՅԴԻ. — (Դուրս կը վազէ) :

ՅՈՒՍԻԿ. — (Ներս կուգայ, կը կանգնի) :

ՍԱՄՈՒԵԼ. — Ի՞նչ կայ։

ՅՈՒՍԻԿ. — Մի շինական խնդրում է աեսնել իմ Տիրոջը։

ՍԱՄՈՒԵԼ. — Երան այնովէս կը բերես ինձ մօտ, որ ոչ չտեսնէ։

ՅՈՒՍԻԿ. — (Կերպայ շինականը ներս կը բերէ եւ կը մեկնի) :

ՍԱՄՈՒԵԼ. — Դու որ և իցէ ժամանակ եղե՞լ ես Թըշտունեաց կողմերում, Առերէն։

ՍՈՒՐԵԿ. — Թշտունեաց լիոներում մի քար չկայ որ Առերէնը չճանաչեր, Տէր իմ։

ՍԱՄՈՒԵԼ. — Իսկ Աղթամար կղզում եղե՞լ ես։

ՍՈՒՐԵԿ. — Մի քանի անդամ։

ՍԱՄՈՒԵԼ. — Արքա՞ն ժամանակում կարող ես հասնել այնուղ։

ՍՈՒՐԵԿ. — Այդ իմ Տիրոջ կամքիցն է կախուած, եթէ չուտ է հարկաւոր, ես զիշերը ցորեկ կը գարձնեմ, եւ երկու օրում կը հասնեմ։

ՍԱՄՈՒԵԼ. — Շատ է հարկաւոր . . . այս նամակը որքան կարելի է չուտ, կը հասցնես Թշտունեաց Գարեգին իշխանին։

ՍՈՒՐԵԿ. — Եւ ուրիշ հրաման չունի՞ իմ Տէրը։

ՍԱՄՈՒԵԼ. — Ուրիշ, ոչինչ։ Բարի ճանապարհ եմ շանկանում։

ՍՈՒՐԵԿ. — (Կոնարհութեամբ մեկնում է) :

ՍԱՄՈՒԵԼ. — (Ճրագը կը մարէ, զահաւրակին վրայ կը պառկի ֆիչ մը եւ չկրնալով քնանալ ոտքի կը կանգնի եւ լուսամուտին կը մօտենայ) : Նամակը չուսով կը հասնի իմ սիրելի Աշխէնին, տանելով իմ սիրոյ ջերմ զգացմունքները։

ՈՐՄԻՑԳՈՒԽԵՏ. — (Դիմակաւորուած՝ զգուշութեամբ ներս կը մտնէ եւ կը բացնի սենեակի մէկ անկիւնը) :

ՍԱՄՈՒԵԼ. — Միրելի՛ Աշխէն, ես քոնն եմ յաւխեան . . . ես քեզ եմ պատկանում իմ սրտի, իմ հոգու բոլոր զօրութեամբ . . . ծնողաց վայրենի խստասրտութիւնը, աշխարհի անզութ արգելեքները չեն կարող իմել քեզանից այն, ինչ որ իմ սիրոյ բոլոր ջերմութեամբ նուիրեցի քեզ։ Ոչինչ չէ կարող փոխարինել քեզ, ո՛չ փառք, ո՛չ մէծութիւնը եւ ո՛չ արքաներէ թազը։ Դու ամենայն ինչ ես ինձ համար, թանկազին Աշխէն։ Քո մէջն եմ գտնում իմ սրտի խստավութիւնը, քո մէջն եմ գտնում իմ վշտերի մխիթարութիւնը, քո անունը յիշելիս, բուռմ է հոգու, անհետանում է մոայլը, եւ իմ հոգու մէջ ծագում է ուրախութեան լուսապայծառ արեգակը։ Երբ թափածարի յուսահատութիւնը պաշարում է ինձ, երբ կանխահամ արհաւիրը թուլացնում է իմ ուժերը, — պաշտելի Աշխէն, Դու ես ոգեւորում ինձ քո աստուածային ներշնչութեամբ, զո՞ւ ես կենդանացնում մեռած եռանդը եւ լքած հաւատը։ Եւ այս բոսկում, երբ իմ Հայրենիքը մէծ տագնասպի մէջ է, երբ ամէն սրբութիւն, ամէն հաստատութիւն կործանուերու վրայ է, երբ թշնամին իւր բոլոր անգթութեամբ կանգնած է մեռ զիլին, — այդ օրհասական բոպէում քո սէրբ, նազելի Աշխէն, որպէս մի պահապան հրեշտակ, վասում է իմ սիրտը անձնազոհութեան եւ վրէժինդրութեան հրով, մզում է ինձ զէպի վասնզը . . . զէպի կոտորածը . . . զէպի արիւնը . . . Կանցնի՛ փոթորիկը, կը լոէ՛ զէնքի շառաչիւնը, կը զա՞յ երջանիկ օրը, եւ յաղթական զինուորը կը հանգչի իր սիրած կուրծքի վրայ։

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ. — (Կը մօտենայ եւ ձեռքերը իլլ
բոնէ):

ՍԱՄՈՒԵԼ. — (Կը սարսայ):

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ. — Մի՛ շփոթուիր. ես բոլորը լսեցի
... բոլորը հասկցայ... ես թէեւ հայերէն չեմ իմանում,
բայց սիրոյ լիզուն, սիրոյ ձայնը՝ ամէն ազգի հասկր-
նուի է...

ՍԱՄՈՒԵԼ. — Որմիզդո՞ւխուտ, այգակ՞ս... պիչերով
այդպէս, տարածամ...

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ. — Այո, այգակս տարածամ եկայ քեզ
մօտ՝ մի շատ կարեւոր գործի համար, Սամուէլ, միայն
համբերութիւն ունեցիր լսելու: Կողպիր գոները, մեր իօ-
սկցութիւնը պէտք է առանձինն լինի: — Ների՛ր ինձ,
Սամուէլ, ես խանդարեցի քո սրբազն հողեղմայութիւ-
նը... ես խիցի քեզանից այն թանկաղին բողէները, երբ
զու քո սրտի հետ պէտք էր խօսէիր...: Սիրի՛ր նրան,
Սամուէլ, որին այնքան ջերմ սիրով նուիրել ես քո սիր-
որ: Դու սրժանի ես մի լաւ կենակցի: Քեզանով բախտա-
ւոր կը լինի կինը, զու կը բախտաւորցնես ամէն կնոջ...
Լսի՛ր, Սամուէլ, այս տան մէջ զու էիր իմ միիթարու-
թիւնը: Ամէնքը երկրպագում էին ինձ, բայց սրտով ա-
ռում էին: Բայց զու, միայն զո՞ւ ազնիւ Սամուէլ, քաղ-
ցրացնում էիր իմ կեանքի դառնութիւնը, եւ փարատում
էիր զժրախտ օտարու հույս տիրութիւնները: Եթէ զու չը
լինէիր, ես վազուց թողած կը լինէի այդ տունը եւ զնա-
ցած կը լինէի իմ հայրենիքը, Պարսկաստան: Այժմ լսի՛ր,
սիրելի Սամուէլ, թէ ինչու եկայ քեզ մօտ, այգակս գի-
շերով, այգակս տարածամ: — Իմ կրօնը ուսուցել ի ինձ
բարութիւնը բարութեամբ վճարել, առաքինութիւնը ա-
ռաքինութեամբ: Դու միշտ բարի ես եղել գէպի ինձ, սի-
րելի Սամուէլ: Ես եկայ պարտքս վճարելու, քո կեանքը
վահանգի մէջ է... վահանգի մէջ է եւ այն էակի կեանքը,
որին զու սիրում ես...

ՍԱՄՈՒԵԼ. — Այդ ի՞նչ ես ասում... ի՞նչ վահանգ...
նա վահանգի մէջ է... ասա՛, Որմիզդուխուտ... ես հէնց այս
բոլէում պատրաստ եմ ինձ կրակի եւ արեան մէջ նետել
եւ ազատել նրան...: Ասա՛, ի՞նչ վահանգ...

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ. — Հանգստացի՛ր, Սամուէլ, եւ նըս-
տի՛ր քո տեղը: Վահանգը գետ եւս այնքան մօտ չէ, որի
համար հարկաւոր լինէր շատպէլ: Վահանգը համելու վր-
ապէլ: Նստի՛ր, ես բոլորը կը պատմեմ քեզ:

ՍԱՄՈՒԵԼ. — Ի ոէր Աստուծոյ, մի՛ տանջեր ինձ, ինչ
որ ասելու ես, չո՞ւտ ասա:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ. — Դու երէկ քո մօր ներկայութեամբ
պատմեցիր ինձ իմ ամուսնի եւ Մերուժանի վերադարձը
պատմեցիր ինձ ամուսնունց հետ Պարսից երկու դօ-
Տիզրոնից, պատմեցիր եւ նրանց հետ Պարսից երկու դօ-
րապիաներու զայտւար: Պատմեցիր եւ այն, թէ ինչ զոր-
ծեր պէտք է կատարեն նրանք ձեր երկրում, բայց ամենա-
զրլիսաւորը, կամ քեզ յայտնի չէր, կամ ծածկեցիր ին-
ձանից:

ՍԱՄՈՒԵԼ. — Ես ոչինչ չծածկեցի քեզանից, Որմիզ-
դուխուտ, ինչ որ զիտէի, բոլորը պատմեցի:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ. — Ուրեմն ամենազլիաւորը քեզ
յայտնի չէ: Լսի՛ր, Սամուէլ: Նախ ի զուր էք սպասում
կամ քո մայրը, որ նրանց Տարօնով կը մտնեն Հա-
յաստան: Ակիզրեց այսակե չեն զարու: Նրանք կը մտնեն
Հայաստան Վասպուրականի կողմերով, որը Մերուժանի
իշխանութեան երկիրն է: Նրանց առաջին զործը կը լինի՝
կալանաւորել Հայոց բոլոր նախարարներին եւ զդիայ-
կապ ուզարկել Տիզրոն: Այնազից կը վարեն նրանց ձեր
թագաւորի մօտ, որը այժմ մի բերդում աքսորուած է: Յետոյ նրանց երկրորդ զործը կը լինի՝ կալանաւորել աք-
սորուած նախարարների կանանցը, զաւակներին եւ պահել
բերդում, խիստ հսկողութեան ներքոյ...: Պատուիրուած
է կալանաւորել նաև Հայոց թագուհույն եւ ուզարկել
Պարսկաստան: Հրամայուած է՝ չինայել ո՛չ սեռի, ո՛չ

հասակի եւ ո՛չ աստիճանի : Ամէն մի ընդդիմացող կը դատապարտուի մահուան պատժի :

ՍԱՄՈՒԵԼ .— Որոնց հետ եւ այն հրեշտակին, որին ևս սիրում եմ... այդպէս չէ՞ , Որմիզգութաս :

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Շատ հասկանալի է...

ՍԱՄՈՒԵԼ .— Ես այդ բոլորը սպասում էի : Բայց զու ինձ այն ասա՛ , Որմիզգութաս , թէ ո՞րտեղից հաւաքւցան քեզ մօտ այդ տեղեկութիւնները :

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Իմ ներքինապետի թղթածրաբներու մէջն գտած նամակից , որ Տիգրոնից զրկուած է նրան : Նա մի ծպտեալ լրտես է եղել իմ գղեակում , ինձ հետ Տիգրոնից զրկուած , ներքինապետի սպաշտօնով :

ՍԱՄՈՒԵԼ .— Թշնամու զործակատարը մեր տանը մէջ է եղել եւ մենք այդքան ժամանակ չե՞նք հասկացել , եւ մենք զետ եւս զանգատում ենք , որ մեր զործերը վաս են զնում...

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Կը ներես իմ միամտութեանը , Սամուէլ , եւ կը հաւատաս իմ անմեղութեանը :

ՍԱՄՈՒԵԼ .— Դու , Որմիզգութաս , այնքան բարեսիրու ես , որ ես չէի համարձակուել մի ամենափոքր կասկածանքով անդամ վիրաւորել քո հրեշտակային անմեղութիւնը : Բայց զու մտածո՞ւմ ես , թէ որքա՞ն վաս է ուրիշի տան զործերը լրտեսել :

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Այդ ես զիտեմ , եւ զառն հետեւանքները տեսնում եմ : Ինձ համար շատ սոսկալի է երբ մարդկանց արխւն է թափուում , երբ հայր եւ մայր մաշում են բանտերի մէջ , իսկ զաւակները , որբ եւ անտեր մնում են գահիձների ձեռքում : Ես չեմ կարող տանել այդպիսի անդմութիւններ :

ՍԱՄՈՒԵԼ .— Բայց այդ քո եղբօր ցանկութիւնն է :

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Մի՛ նախատիր ինձ , Սամուէլ , եղբօրս պատճառով : Պարսից թագաւորները սիրու չունեն : Մարդկանց զիակների վրայ են հաստատում նրանք իրանց

դահի պատուանդանը : — Մի՛ տրամիր , Սամուէլ , իմ խիզճը հանդոսացնելու համար՝ ես հէնց այս առաւտա պատրաստել կը հրամայեմ իմ ձանապարհորդութեան կարաւանը , կը գնամ Տիգրոն , կընկնեմ իմ եղբօր դահի առջեւ եւ իմ արտասուքով կ'ամոքեմ նրա բարկութիւնը : Եւ եթէ նա անզգայ կը լինի դէպի քրոջ արտասուքը , նոյն դահի պատուանդանը արտատարուած կը լինի իւր հարազատի արիւնով . . .

ՍԱՄՈՒԵԼ .— Ես հաւատում եմ քո անձնագոհութեանը , Որմիզգութաս , զու աւելի քան այդ բարեգութ ես : Բայց այժմ արգէն ուշ է . . . զործերը այնքան բարզուած հանդամանքները այնքան անդառնալի ձեւ են ստացել , որ քո բարեի խօսութիւնը հազիւ թէ կարող է խափանել կատարող չարիքը . . .

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Բայց քո կեանքը վասնդի մէջ է : Ես չեմ տարակուսում , Սամուէլ , որ ներքինապետը , այդ ցած լրտեսը , քո անունն եւս «անբարեմիտների» ցուցակի մէջ անցկացրած չէ լինի :

ՍԱՄՈՒԵԼ .— Ես նոյնպէս չեմ տարակուսում : Դու մոռանում ես , Որմիզգութաս , որ իմ հայրը եւ իմ քեռին առաջնորդում են Պարսից զօրքերը , նրանք զոնէ ինձ կը ինայեն . . .

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Հրամայուած է ոչ ոքի չխնայել , ո՛չ բարեկամի , ո՛չ աղքականի : Արդ , թախանձում եմ , իմ քեզանից , սիրելի Սամուէլ , որ անձդ աղատելու համար , թողնես ամրոցը եւ առժամապէս հեռանաս գէպի մի կողմ , մինչեւ վոթորիկը տնցնելի :

ՍԱՄՈՒԵԼ .— Այդ ես քեզ չեմ ներում , Որմիզգութաս : Դու կամենում ես ինձ վատութիւն սովորացնել , եւ մի երկչուո զինորի նման , կոռի միջոցին՝ փախչել պատերազմի գաշտից :

ՈՐՄԻԶԳՈՒԽԾ .— Մատածիր , Սամուէլ , որ վասնդի մէջ է եւ այն էակի կեանքը , որին զու սիրում ես . . .

ՍԱՄՈՒԵԼ. — Հենց նրա համար ես չը պիտի հեռանամ կուրի դաշտից :

ՈՐՄԻՉՈՒԽԵՏ. — Ես շատ ուշացայ, պէտք է դնամ : Ապասաւորները ինձ գուրսը սպասում են; Ես այժմ վորք ինչ հանդիսաւ եմ, թէև ոչինչ բանի մը չկարողացայ համողել քեզ, բայց զոնկ գու այսուհետեւ կը գիտենաս քո անելիքը . . . : Ահա! այն նամակը, որ ես գտել եմ :

ՍԱՄՈՒԵԼ. — Շնորհակալ եմ, Որմիզգուխտ, քո անսաման բարութեան եւ քո անկեղծ կարեկցութեան համար : Դու չափազանց պարաւորեցիր ինձ :

ՈՐՄԻՉՈՒԽԵՏ. — Գիշե՞ր բարի :

ՍԱՄՈՒԵԼ. — Գիշե՞ր բարի, Որմիզգուխտ, գիշե՞ր բարի :

(ՎԱՐԱԳՈՅՑ)

ՏԵՍԱՐԱՆ III

Աշտիւտի վաճիքը (Գիշեր)

ՄԵՍՐՈՊ. — Վատանզը աւելի մեծ է, քան թէ երրեք եղել է : Մենք ճաշակում ենք մեր հին սխալների դասն պատողները :

ՍԱՀԱԿ. — Ի՞նչ սխալներ :

ՄԵՍՐՈՊ. — Այն մեծ սխալները, որ զործեցին քո պատողերը, Սահակ :

ՍԱՀԱԿ. — Դու այդ իմ պատողի սխալն ես համարում, Մեսրոպ, որ նրանք բարբարոս Հայաստանը հեթանոսական աղմից հանեցին, եւ քրիստոնէական լոյսի մէջ դրեցին :

ՄԵՍՐՈՊ. — Ես այդ քո պատողի սխալը չեմ համարում: Բայց ասո՞ւ ինձ, Սահակ, ի՞նչ էր այդ լոյսը տոտչ, եւ ի՞նչ է նա այժմ: Արդեօք նա գուրս եկա՞ւ վանքերի շրջապարհապնդերից, արդեօք նա մտա՞ւ շինականի մոսայլ խրճիթը, եւ չէր էլ կարող մտնել, ի՞նչ միջոցավ կարող էր մտնել: Այն օրից որ այդ լոյսը բերեցին Հայաստան, անցել է համարեա մի դար, բայց մինչեւ այսօր մեր եկեղեցիներում Սուրբ Գրքերը կարգում են յունաց եւ ասուլոց լեզուներով: Մինչեւ այսօր աղօթում են օտար լեզուներով: Ա՞ր գիւղացին, ո՞ր քաղաքացին, ո՞ր Հայը հասկանում է այդ լեզուները, եւ այդ զրութեան մէջ ի՞նչ լոյս, ի՞նչ բարոյական կամ հոգեւոր ուղղութիւն կարող էր տալ եկեղեցին ժողովուրդին, երբ նա տեսնում է միայն ծէսեր, եւ յուն է իրան անհասկանայի ձայներ :

ՍԱՀԱԿ. — Դու կարծում ես, որ ժողովուրդը, սակա՞ւ օդապւեցաւ դրանից, Մեսրոպ:

ՄԵՍՐՈՓ. — Օդոռուեցանք մենք, և ո՞չ թէ ժողովուրդը։ Դու, և եւ այդ սիրելի երիտասարդը, որ լուսնատած է այնտեղ, մենք ամենքս յունական կամ ասուրական կրթութեան արդիւնք ենք, այո՛, փճացնող և ամէն ազգային զգացմունք սպաննող Բիւղանդական արդիւնք։ Բայց ի՞նչ է խեղճ ժողովուրդը։ Նա հինը կորցըրեց և նորի մէջ ոչինչ չպատեւ։

ԱԱՀԱԿ. — Շատ բան դառաւ, Մեսրոպ։

ՄԵՍՐՈՓ. — Ոչինչ չպատեւ, Աահակ։ Ժողովուրդը զեւ նոյն բարբարոսն է մնացել։

ԱԱՀԱԿ. — Երեսուն տարւայ մէջ չեր կարելի խլել ժողովրդից այն, ինչ որ կազմուել էր նրա մէջ չատ դարերի ընթացքում, Մեսրոպ։

ՄԵՍՐՈՓ. — Այդ ես գիտեմ, Աահակ։ Բայց դա գարձեալ չէ հերքում այն միտքը, որ մեր ժողովուրդից այս թէ ի՞նչ միջոցով կարող ենք հեթութեան զործը բոլորովին վնասակար հիմքերի վրայ դրուեցաւ։

ԱԱՄՌՈՒԵԼ. — Ի՞նչ օգուտ այդ հակածառութիւնից, Մեսրոպ, ինչ որ եղել է, ինչ որ կատարուել է, մենք այդ բոլորը պէտք է անցած համարենք և մտածենք զործերի այժմեան զբութեան վրայ, թէ ի՞նչ միջոցով կարող ենք հեռացնել վերահաս վտանգը։

ՄԵՍՐՈՓ. — Դու շատապում ես, սիրելի Մամուէլ։ Զէ՞ որ գործերի այժմեան հիւանդու զբութիւնը բղիսում է մեր հին մեղքերից։ Առանց քննելու այդ մեղքերը, մենք չենք կարող զարժան տանել ներկայ շարիքներին, որ մեր հայրենիքին մահ են սպաննում։ Ես, համոզուած եմ, որ քո հայրը յիմար մարդ չէ։ Ես համոզուած եմ, որ քո քեռին Մերուժան Արծրունին նոյնպէս չէ կարելի իրենթերի կարզը դնել։ Բայ ես առելի համոզուած եմ որ այդ երկու զաւածաններին փայտայող Պարսից Շապուհ Արքան կրօնասէր մարդ չէ։ Դու կարող ես հաւատացած լի-

նել, սիրելի Մամուէլ, որ Շապուհը իր ձեռնարկութեան մէջ՝ ոչ իւր հոգու փրկութիւնն է որոնում, եւ ոչ կարենում է հաճոյանալ իւր աստուածներին։ Այլ կամենում է բնդմիշտ վճռել մի քաղաքական ծանր խնդիր, որ նրան շատ անհանգուացնում է . . .

ԱԱՄՌՈՒԵԼ. — Եթէ դո՛ւ, Մեսրոպ, քո երկար լիզուին չափը քո կարծ հասակին հաւատարեցնէիր, առելի քաղաքարի կը լինէիր։

ՄԵՍՐՈՓ. — Ի՞նչո՞ւ ես վիրաւորւում, գեղեցիկ Սամուէլ, քո հօրեղբայրն էլ կարճահասակ մարդ էր, բայց առելի մեծ մարդ էր, քան թէ քո հոկայտափակ հայրը։

ԱԱՄՌՈՒԵԼ. — Հօր մեղքը կը քաւէ որդին . . .

ՄԵՍՐՈՓ. — Այն ժամանակ ես առելի կը սիրեմ նրան։

ԱԱՀԱԿ. — Թողեցէ՛ք այդ։ Կատակի եւ Երդիծանքի ժամանակ չէ։

ՄԵՍՐՈՓ. — Այո՛, ես Շատուհի վարժունքը թէ եւ անաղնիւ, բայց իւր պետութեան շահերի տեսակէտից՝ շատ խելացի եմ համարում։ Պարսից այդ երկարակեաց թագաւորը Հայոց չորս թագաւորներ է փորձել, — Տըրդատին, Խոսրովին, Տիրանին, Արշակին, եւ նրա մօտ Էօթանասուն տարւայ փորձը բաւական էր նրան համոզելու համար որ Հայերի կ։ Պոլսի կայսրերի հօտ ունեցած մըրտերմութեան զիլիաւոր կապը՝ նախ քրիստոնէական կրօնին է, եւ ապա՝ Բիւղանդական կրթութիւն։ Այժմ նո՞ւ աշխատում է այդ կապը խզել, ոչնչացնելով թէ կրօնը եւ թէ յունաց լեզուն ու գլուխթիւնը եւ Հայաստանը իւր պետութեան հետ ի մի ձուլելու համար, նա ցանկանում է տարածել իւր կրօնը, իւր լեզուն եւ իւր գլուխթիւնը։

ԱԱՀԱԿ. — Այդ բոլորը մենք գիտենք, Մեսրոպ։

ՄԵՍՐՈՓ. — Բայց պէտք է եւ այն գիտենալ, որ այդ գժիշախտութեանց եւ ոչ մէկը մեզ հետ չէր պատահէի, եւ

թէ մենք այնքան օտարամուլ չլինէինք, և Եթէ մենք հետեւած շլինէինք ոչ յոյնին եւ ոչ պարսկին: Հետեւելով մէկին՝ մենք միւսի փակուած աչքերը բաց արինք: Նա էլ սկսեց իրանը պահանջել: Պարսկիը կը համբերէր մեզ, և թէ մենք մեր մայրենի լեզով կառավարէինք մեր զպրոցները, բայց նա Բիւլանդականին համբերել չէ կարող, զա վնասակար է նրա բաղաքական շահերի: Մենք արհամարձեցինք ինչ որ հին էր, ինչ որ հեթանոսական էր, մեր երգիչների, մեր վիպասանների զեղեցիկ վաստակիները կրակի զոհ դարձրեցինք: Մենք թողեցինք մեր նախնականը, մեր ազգայինը, և սկսեցինք օտարինը սիրել: Եւ մեր քրիստոնէական մոլեունդութիւնը այն աստիճան հասցըինք, որ իրրեւ մի պիղծ բան սկսեցինք մերժել մեր հին դրութիւնը, մեր մէհենական սրբազն տառերը և ընդունեցինք յանաց եւ ասորոց տառերը: Այդ բոլորից յետոյ շատ հասկնալի է, որ մեր մէջ չէր կարող զարգանալ ոչ ազգային կեանք եւ ոչ բուն ազգային գրականութիւն:

ՍՈՀԱԿ.— Գովում եմ քս զգօնութիւնը, գովում եմ քո լրջաւութիւնը, Մեսրոպ: Բայց չեմ կարող ներել քո ամբաստանութիւններին: Զափազանց եռանդը թոյլ տուեց քեզ անպատշաճութիւնների մէջ ընկդմուել: Դու մեզազրում ես իմ հայրերին, որ նրանք անխնայ խորտակեցին, ոչնչացրին հինք, աւանդականը՝ նորը նրա տեղ հաստատելու համար: Այդ իրաւ: Բայց ամէն վերանարողութեան սկիզբը արդաքէ է լինում: Դու մեզազրում ես իմ նախահօր, կուսաւորիչին, որ նա Հայաստանը լրցրեց յոյն եւ ասորի վարդապետներով: Աւրիշ կերպ լինել չէր կարող: Նրան պէտք էին պատրաստի մարդիկ: Մի վարդեան երր ցանկացած չնքը կառուցանելու համար՝ իր տեղում մշակներ գտնելու յոյս շռնի, նա մշակները իր հետ է տանում: Բայց իմ նախահօր նպատակը այն չէ եղել, որ օտարների ձեռքը տար Հայի հոգեւոր եւ մը-

տաւոր կրթութիւնը: Այդ օտարները ժամանակաւոր գարձկաններ էին, որ պէտք է սպահուէին այնքան ժամանակ, մինչեւ մեր աշխարհում բնիկներից նոր ուժեր պատրաստուէին: Եւ այդ մտքով նա հիմնեց այն բազմաթիւ բաստուէին: Եւ այդ մտքով նա հիմնեց այն բազմաթիւ զպրոցները, որոնց մէջ մինչեւ անդամ քուրմերի որդեները պէտք է քրիստոնէական կրթութիւն ստանային: Բայց եթէ այդ զպրոցները ցանկացած արդինքը չտուեցին, եւ այդ օտար մարդիկը մեր աշխարհում երկար մընացին, զա պէտք է վերաբերել այն դժբախտ հանդամանքներին, որոնց զոհ զնացին իմ հայրերը, եւ որոնք ժամանակ չտուեցին նրանց լիապէս ի կատար ածելու Հայոց լուսաւորութեան գործը: Եթէ մի օր նախահօնմովի կամքը՝ իմ նախահարց նման կը կոչէ ինձ Հայաստանի Հայրապետական աթոռի վրայ, իմ առաջին հոգար կը լինի Հայոց եկեղեցիի ընթերցուածները մայրենի լեզուի վերածել եւ Հայ ժողովուրդի կրթութեան գործը աղքային հիմունքների վրայ զնել:

ՄԵՍՐՈՊ.— Իսկ իմ գործը կը լինի վերաստեղծել Հայոց մոոցուած տառերը եւ ազտակը մեր հասարակութիւնը, մեզ համար խորթ յոյն, ասորի եւ պարսիկ գրալութիւնից:

ՄՈՒՇԵՂ.— (Ներս կը մտնէ):

ՍՈՀԱԿ.— Գիշերը արգէն յառաջացել է: Մենք արշալոյր չծագած, պէտք է մեր զործերը աւարտենք: Օ՞ն, սկսենք գործի:

ՄԵՍՐՈՊ.— (Պարակի թուղթերը լցնելի եւ պրապելի վերջ) Բոլորովին ապարդիւն է քրքրել այս թուղթերը եւ նրանցից որ եւ է եղբակացութեան հասնել: Մեր այժման գրութեան մէջ՝ հաշիւը ոչ միայն կը սխալեցնէ, այլեւ կը մոլորեցնէ մեզ: Մեր զործերը հէնց սկզբից անհաշիւ են տարուել, այնպէս էլ պէտք է շարունակել: Այսինքն, կամենում եմ ասել, որ ժամանակը այնքան նեղ է

և պահանջները այնքան ստիպողական, որ մենք միջոց չունենք հինը ուղղելու եւ նոր կարգադրութիւններ անելու: Մեզ պէտք է այժմ անել մի վճռական քայլ, թէեւ այդ քայլը մինչեւ անդամ հակառակ լինէր խոհուն եւ ինքանցի ձեռնարկութեան:

ՍԱՄՈՒԵԼ. — Բոլորովին ճիշտ է:

ՄՈՒՇԵՅ. — Այսու ամենայնիւ, մենք պէտք է չսովորենք մեր ուժերը:

ՄԵՍՐՈՊ. — Մենք չափել կամ կչոել չենք կարող այն, ինչ որ դեռ եւս գոյութիւն չունի: Մեր ուժերի չափը կախուած կը լինի այն հանգամանքներից, թէ որքան յաջողութեամբ յառաջ կը տանենք գործը:

ՄՈՒՇԵՅ. — Յաջողութիւնը կամ անյաջողութիւնը չէնց այժմեանից եւս կարելի է նախգուշակել:

ՄԵՍՐՈՊ. — Միայն հաւանականութեան վրայ հիմնուած, Մենք, կրկնում եմ, անձնավստահութիւնը պէտք է բնարենք մեզ առաջնորդ, իսկ յաջողութիւնը թողնենք բախտի կամքին:

ՍԱՀԱՆ. — Այդ «մենք»ը մի քանի անդամ կրկնուածու: Բայց նախ քան ո եւ է քայլ առնելը, ես կարծում եմ, պէտք է որոշել, թէ ո՞վ ենք մենք:

ՍԱՄՈՒԵԼ. — (Ընդհանուր լուր թիւնից յիտոյ) Թոյլ տուեցէք ինձի խօսել:

ՍԱՀԱՆ. — Կոսի:

ՍԱՄՈՒԵԼ. — Ո՞վ ենք «մենք», — այդ չարցը, իրաւ մի չատ դժուարին հարց է, եւ նրա վճռելը պէտք է լինի գործի սկզբը: Ո՞վ ենք «մենք»: — Մենք ամէն ինչ ենք: Իմ պատասխանը գուցէ չափազանց յանդուզն թուի ձեզ, բայց ես աշխատում եմ պարզել իմ միաբը: Մեր աշխարչն է կառավարութեան մէջ երեք բարձրագոյն անձնենք առաջնակարգ գեր էին խաղում: — Թագաւորը, քահանայագետը եւ սպարապետը: Այդ երեք գլխաւորները չկան

այժմ: Թագաւորն ու սպարապետը աքսորուած են Անուշ բերդը, իսկ քահանայագետը՝ Միջերկրականի Պատմուականի: Մեր աշխարհը մնացել է զուրկ այդ երեք մեծ կառավարիչներից, որ վանդի ժամանակ կարող էին թըշնամուն դէմ գնել: Իսկ թշնամին մեր գրանը կանգնած է, ներս մտնելու վրայ է: Ո՞վ պէտք է ընդգիւմանայ նրան: Ո՞վ պէտք է պաշտպանէ հայրենիքը կրակից եւ արիւնից: Ո՞վ պէտք է մաքրէ պարսկական պղծութիւնը, որ սպառնում է արատաւորել մեր բոլոր սրբութիւնը: Արքայական զահը վասնդի մէջ է, եկեղեցին վասնդին մէջ է, մեր լեզուն, մեր զալուութիւնը, մեր աւանդութիւնները, մեր աղջային բոլոր ժառանգութիւնները վասնդի մէջ են: Ո՞վ պէտք է պաշտպանէ: Կրկնում եմ, թագաւորը չկայ, քահանայագետը չկայ, սպարապետը չկայ: — Բայց կան նրանց ներկայացուցիչները, որոնցից երկուսը չէնց այստեղ լսում են ինձ: Դու, Սահակ, քահանայագետի որդին ես, եւ կարող ես փոխարինել քո հօրը Փակ զու, Մուշեղ, սպարապետի որդին ես, եւ կարող ես փոխարինել քո հօրը: Մնում է թագաւորի ներկայացուցիչը: Թագաժառնուածը այստեղ չէ, նա պահուած է Բիւզանդիայում: Բայց Հայոց տիկինը — թագուհին — մեր ձեռքումն է: Նրա անունով կարող ենք ամէն տեսակ հրամաններ տալ: Կաղմենք մի ժամանակաւոր կառավարութիւն, անցնենք զործերի զլուխը եւ ոկտենք զէմ զնել թշնամուն: Ես հաւատացած եմ, որ ժողովուրդը կը գայ մեր ետեւից: Այժմ կարծեմ, բաւական պարզ է, թէ ո՞վ ենք «մենք»:

ՄԵՍՐՈՊ. — Մենք ազատ ժողովուրդ չունենք, մենք ունենք նախարարներ միայն, որոնց հետ կապուած են ժողովուրդի զանազան մասերը:

ՍԱՄՈՒԵԼ. — Բոլորովին ճիշտ է: Բայց իմ ձեզ ներկայացրած նամակից երեւում է, որ խստիւ պատուիրւած է՝ կալանաւորել բոլոր նախարարներին եւ վարել

նրանց Տիղրոն, իսկ նրանց կանանցը, դաւակներին, որպէս գրաւական, պահել առանձին բերդերում, սաստիկ Հսկողութեան ներքոյ: Այդ խստութիւններից մենք կարող ենք օգուտ քաղել: Որովհետեւ այդ կը ստիպէ նախարարներին, եթէ ոչ Հայրենիքի պաշտպանութեան համար զոնէ իրանց անձանց եւ ընտանիքների պաշտպանութեան համար, միանալ մեզ հետ եւ գէմ զնել թշնամուն:

ՄԵՍՐՈՊ.— Շատ հաւանական է: Բայց մեր նախարարներից ոմանք այնքան երկչուա են, բաւական է, որ բեն Շապուհի պատուէրը իրանց մասին, նրանք իսկոյն կ'առնեն իրանց ընտանիքները, կը փախչին դէպի յունաց կողմը, ապահովութիւն դանելու համար:

ԱԱՄՈՒԵԼ.— Այդ կարող է պատահէլ: Թշնամին վրձիո է զրել՝ չխնայել ոչ ոքի, ով որ կ'ընդդիմանայ: Իսկ մենք պէտք է վճիռ զնենք՝ չխնայել ոչ ոքի, ով որ խոյս կը տայ: Եթէ մեր նախարարներից ոմանք այնքան վաստ կը լինեն, որ ընդհանուր վասնդի ժամանակ, միայն իրենց անձը եւ ընտանիքը պաշտպանելու համար, կը փախչին դէպի օտար երկիր, — այդ պարագայում մենք առաջնորդ կը լինենք, որ նրանց կը մորթենք իրանց ամրոցների սեմի վրայ:

ԱԱՀԱԿ.— Ժամանակաւոր բարձրագոյն կառագարութիւնը, որ առաջարկեց Սամուէլը, եւ որի հետ մենք ամենք համաձայն ենք, պէտք է հէնց այս բոսկից կաղմուած համարէ: Թաղ Տրդատի եւ մեր Լուսաւորիչ հօր Սաստուածը դօրացնէ մեր ձեռնարկութիւնը: Կրօնի, աղողի, հայրենիքի փրկութիւնը, եւ նրանց պաշտպանութեան համար ամէն զոհաբերութիւն յանձն առնելի՝ կը լինի մեր կոխոների նշանաբանը: Ես մեծ յոյսեր ունեմ, որ եթէ չյաղթենք, զոնէ պատուի կը մենանք: (Լութիւն): Ես առաւտեսն պէտք է մեկնեմ այսակից, ինձ հետ պէտք է տանեմ եւ Մեսրոպին: Գիշերը զեռ բոլորու

վին չէ անցել, զեռ բաւական ժամանակ ունենք: Թող Մեսրոպը սկսէ զրել հարկաւոր հրամանները, որ պէտք է յզել նշանաւոր նախարարներին, Այդ հրովարտակների վրայ կը գրուեն՝ նախ թագուհոյն կնիքը, եւ ապա մեր իւրաքանչիւրի կնիքները: Իսկ թէ ո'րտեղ պէտք է կենուրուաննան մեր զիմաւոր ուժերը — այդ քո մտածելու ինդիքն է, Մուշեղ, զու աւելի հմուտ ես պատերազմի զործերում:

ՄՈՒՆԵԴԻ.— Արտագիրս ամրոցում:

ԱԱՀԱԿ.— Ես էլ նոյն կարծիքի եմ: Արարատը, որ մեր աշխարհի սիրան է, պէտք է պաշտպանուի: Կորցը ներով սիրուր, կը կորցնենք եւ կեանքը . . .

ԱԱՄՈՒԵԼ.— (Վագէի պատկերին տակ բնիկած սուրբ առնելով եւ տալով Սահակի) Այդ սուրբ այն քաջի սուրն է, որի արթուն հոգին ուշագրութեամբ նայում է մեզ վրայ: Քեզ է վայելում, Սահակ, որպէս Հայոց Հայրապետական տան սրբազն ժառանգին, վեր առել այդ սուրբ եւ յանձնել իմ հօրեղբօրսրդի Մուշեղին, հրատարակելով նրան Հայոց սուրբազնեա:

ԱԱՀԱԿ.— Ես ինձ բախտաւոր եմ համարում, որ այդ հանդիսաւոր բաղչում, երբ մեր հայրենիքի բախտն է վճռում, ինձ է վիճակում այդ սուրբ յանձնել քեզ, Մուշեղ: Դա քո նախահարց վասքն է, իսկ նրանց արժանաւոր ժամանգների պարձանքը: Այդ սուրբ միշտ անարատ է եղել, եւ երբեք վատութիւնը, երկշուսութիւնը բիծ չէ դրած նրա վրայ: Դրա մէջն է Մամիկոնեաններու մեծութիւնը: Միշտ անաշատ է եղել այդ սուրբ, թէ զէպի օտարները եւ թէ զէպի իւր հարազատները: Արդարութիւնը, իրաւունքը, նեղեալի եւ տառապեալի պաշտպանութիւնը եղել է այդ սուրբ բարձր, քաջաղնական զաղափարը: Տառապեալ հայրենիքի տիսուր հառաջանիքները կոչում են քեզ, Մուշեղ, ընդունիք այս զէնքը: Եւ զու այնքան

քաջ ես, և անձնուէր որ կ'արդարացնես մեր բոլորի սրբագին յոյսերը:

ՄՈՒՇԵՅ. — Ես իմ տոհմի մէջ ամենաղժբախտն եմ համարում ինձ, ընդունելով այդ սուրը: Իմ նախնիքները աւելի բախտաւոր գտնուեցան, նրանք այդ սովոր պատերազմեցին օտարներին հետ, իսկ ես պէտք է պատերազմեմ իմ հարազատի հետ... թշնամու զօրքերին առաջնորդում է իմ հօրեղբայրը... թող օրհնեալ լինի նախախնամողի կամքը, թող նա զօրութիւն տայ իմ բազուկներին, այդ սովոր մաքրել այն արտաք, որ իմ հարազատը պէտք է դնէ մեր տոհմի վրայ:

ՎԱՐԱԳՈՅՔ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

Նկուլ մը Անուշ բերդին մէջ

ԲԱՆՏԱՊԵՏ. — (Ծալրանիքով) Ողջո՞յն Հայոց Արքային: Յուսով իմ որ իմ Տէր թագաւորը խաղաղ քունով և անուշ երաղներով վարած լինի զիւերային խաւարը: Եւ թող փարատին նրանից բարի ոպեները Ահրիմանի խօլական անուբաները...: Ինչո՞ւ չես խօսում, Տէ՛ր Արքայ: Հայերը եթէ ձեռքի քաջութեան մէջ իիսոն ժլատ են, զո՞նէ լիզուի քաջութեան մէջ բաւական առատ են: — Երեւի, իմ Տէր թագաւորը գժզոհ է իւր նուասա ծառայից: Ես կ'աշխատիմ աւելի հաճելի լինել իմ Տէր թագաւորին: Ահա այս բռպէիս փոխել կը տամ քո փառաւոր անկողինը և անուշահոտ փափկութեամբ յօրինել կը տամ քո արքայական մահիձը, այնպէս որ զու կը մոռանաս Հայաստանի զեղեցիկ մետաքնն ու ասրը: (Ծալրանիքով) Անուշահոտ խորտիկներով կը ճոխացնեմ այսօր իմ Տէր թագաւորի սեղանը: Թող նա չմտածէ թէ Պարսիկները անհիւրումէր են, թող նա մոռանայ այն բոլորը, ինչ որ կորցրել է իւր արքունիքում: (Տամկացած յարդի տեղ չոր յարդ փոխով եւ քազաւորին քով կտոր մը զարեհաց եւ պզտիկ անօթի մը մէջ զուր դնելով) Բարի ախորժակ և ցանկանում, ողջ լիբուք, Տէ՛ր Արքայ: (Դուրս կ'ելլէ):

ԱՐՇԱԿ ԹԱԳ. — (Նդրայուած) Լի՛րր... լոռ՞ւմ ես, Մամիկոնան Տէր, (խօսքը իր առջեւ դրուած Վասակ սպարապետի դիակի ուղղելով), ի՞նչո՞յն ամէն բոսէ խոսուում են քո թագաւորին, ի՞նչպէս ամէն վայրկեան գառնացնում են նրա սիրար: Պարսիկը, ամէն վեհանձնութիւնից զուրկ Պարսիկը, սովոր է իւր տան մէջ վիրաւորել իւր հիւրին: Ինչո՞վ է մեզաւոր այդ ողորմելի զեսունը, որ ամէն անզամ այստեղ մտնելիս՝ լրբենի բերա-

նով լուսանքներ է կարգում : Նրան հրամայել են , նրան պատուիրել են : Յա՞ծ եւ անա՞րդ Շաղուհ , մինչեւ այդ աստիճան վատութիւն : Ես չընկայ քո ձեռքը պատերազմի դաշտում , գու իմ քաղաքները պաշտելով գերի չվարեցիր ինձ : Դու ինձ հրաւիրեցիր քո մօտ իրրեւ հիւր , եւ քո ասպնջականութիւնը խարէութեամբ պատկեցիր : Դաւաճա՞ն... միթէ դրս՝ մէջն է թագաւորի և արքայից արքայի մէծութիւնը : Թո՞ղ յաւիտենական անէծքով ծածկը ւին իմ նախարարները... թող ամօթը եւ մշտական ավաշաւանքը լինի նրանց բաժինը... որ ինձ այս գրութեան մէջ գրեցին... եթէ նրանց անմիաբանութիւնը ձինէր , ես երբեք չէի ընկնի քո ծուղակի մէջ , նենդաւոր Շապուհ :

Մա՞զր... խիստ կծո՞ւ կատակ... իմ աչքի առջեւ դրել են Հայաստանի զօրութիւնը... նրա զինուորական ներկայացուցիչնի... իմ աչքի առջեւ դրել են այն հերոսին , որ մշտական սարսափի մէջ էր պահում ամրող Պարսկաստանը : Սիրելի՛ Վասակ , ամէնքը դաւաճանեցի՛ն ինձ , ամէնքը թողեցի՛ն ինձ , բայց զու ըրաժնուեցար քո թաղաւորից... զու մասնակից էիր նրա վարպին , մասնակից եղար եւ նրա դժբախտութեանը... պարտքը , պատիւր , Հայրենիքի սէրը մղեցին քեզ զէսի անձնազոհութիւն... եւ իրրեւ ճշմարիտ հերոս , զու հերոսի պէս պատկեցիր քո վախճանը... : (Քիչ մը ջուր խմելէն վերջ) : Ա՛չ... Հաղար անդամ ո՛չ... ես մեղաւոր չեմ... իմ նախարարների անդադար խոսվութիւնները , վերջապէս ձանձրացըին ինձ... ես , իրաւ է , պատերազմ յայտնեցի նրանց զէմ , ցանկանում էի պատժել բմբոստ անհնազանդութիւնը , ցանկանում էի ոչնչացնել նրանց , որպէսզի , ի մի ձուլեմ Հայոց բաժան բաժան եղած ուժերը , եւ նրանցից ստեղծեմ մի չզօր , միահեծան պետութիւն : Ես աւելի բարձր էի զառում Հայաստանի ամրողջութիւնը , քան հարիւրաւոր առանձնացած իշխանութիւններ , որոնք , իմ նախորդների

անհոգութիւնից , այն աստիճան բոնացել էին , որ ամէն անդամ ամբարտաւանութեամբ եղջիւր էին թօթափում իրանց արքայի զէմ... ես կամեցի չափի եւ սահմանի մէջ դնել նրանց կամայականութիւնը , իսկ նրանք միաբանւեցան եւ ապստամբեցան իմ զէմ... : Այդ բաւական չէր , նրանք ներքին , ընտանեկան կորիս մէջ հրաւիրեցին օտարի միջամտութիւնը... : Պարսկին , մեր զարաւոր թշնամուն , զրդուեցին իմ զէմ... ես միայնակ մնացի , եւ ստիպւեցայ թշնամու զուոր զնալ եւ նրա հետ հաշուութեան դաշն կապել... իսկ թշնամին ինձ ուղարկեց այսակող... :

Դու վկայ ես , Մամիկոնեան տէր , թէ որքան անկեղծ էին իմ ցանկութիւնները , թէ որքան բարձր էի զասում եւ հայրենիքի բախտաւորութիւնը : (Այլ հեծէ եւ կ'իյնայ յարդին վրայ . կը մրափէ) :

ԳՐԱՍՏԱՄԱՏ — ԵԱՆՑԱՊԵՏ — (Կ'երեւին) :

ԳՐԱՍՏԱՄԱՏ — Լսի՛ր , բանապետ : Քեզ կարծեմ յայտնի եղաւ Արքայի հրօվարտակի բավանդակութիւնը : Արքային կողմէ արուած արտօնութիւնը իմ թաղաւորին տեսնելու , նրա վիճակը վայելու զրութեան մէջ զնելու , եւ նրա վշտերը թեթեւացնելու — այդ բալորը իմ զործը պէտք է լինի :

ԲԱՆՑԱՊԵՏ — Քո թագաւորը ահա՛ այսակող է... ներքինապետ Տէ՛ր : Դու կարող ես մնալ քո թագաւորի մօտ , որքան քո կամքն է : Երբ կը ցանկանա զուրս դաւ , բաւական է ներսից փոքր ինչ բաղխել , իմ պահապանները այսուղ պատրաստ են . ինձ իմաց կը տան , եւ ես կը դամ , կրկին բաց կ'անեմ : (Այլ մեկնի) :

ԳՐԱՍՏԱՄԱՏ — (Մօտենալով բազաւորին) : Տէ՛ր արքայ... (Լուրիին) Տէ՛ր արքայ :

ԱՐՇԱԿ — Անամօթ , զոնէ գիշերը ինձ հանդասութիւն տուր :

ԳՐԱՍՏԱՄԱՏ — Տէ՛ր արքայ , ձանաչի՛ր քո ծառային :

ԱՐԾԱԿ.— Իմ ծառայի՞ն . . . դու , անդպամ , ամէն
օր իմ գահին էիր , իսկ այժմ ծառայ՝ դարձար . . .

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Տէ՛ր արքայ , զգաստացի՛ր , նայի՛ր
իմ վրայ , ես քո ծառան եմ . . . քո ստրուկը . . . քո նուսաս
Դրաստամատը :

ԱՐԾԱԿ.— Դրաստամատ : Ո՞ր Աստուածը կը տար
ինձ Դրաստամատին , իմ քաջ և Հուտատարիմ ծառային . . .
Հեռու ինձանից խարէութիւն , Հեռու զնացէք երազական
ցնորքներ . . . ես կորցրի իմ ամենալաւ մարդիկներին ; ես
զրկուեցայ իմ ընտիր պաշտօնեաներից . . . Աստուած պատ-
ժե՛ց ինձ . . . այլեւ նրանց աեսնել չեմ կարող . . .

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Նրանցից մէկը քո մօտ է , Տէ՛ր ար-
քայ :

ԱՐԾԱԿ.— Այդ ո՞վ է այսուեղ :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Քո ծառան , Դրաստամատը :

ԱՐԾԱԿ.— Դրաստամատ . . . ո՞րտեղից յայտնուե-
ցար . . . ինչպէ՞ս թողեցին ինձ մօտ . . . Տէ՛ր Աստուած այդ
ի՞նչ բախտ է . . . մերձեցի՛ր , սիրելի Դրաստամատ , մեր-
ձեցի՛ր , զրկեմ քեզ . . . : Այդ Համբոյըները չեն թեթեւ-
ցընի իմ շղթաների ծանրութիւնը , սիրելի Դրաստամատ ,
պատմիր ո՞րտեղ էիր , ի՞նչպէս եկար այսուեղ , ի՞նչ լուր
ունես : — Ինչո՞ւ ես լուս , Դրաստամատ , Դու կարծում
ես , Արշակը այնքան թուլացել է սրտով , որ չէ՞ կարող
տանել նոր Հարուածները : Ես առանց քո պատմելու շատ
բան զիտեմ . . . այս մութ նկուզի միջից ես ամէն ըստէ ,
ամէն վայրէնան , տեսնում եմ , Դրաստամատ , թէ ինչ է
կատարում այսուեղ , Հայոց աշխարհում . . . : Դու միայն
այն ասա : Թէ ինչպէ՞ս թոյլ տուեցին քեզ մանել իմ մօտ :
Այդ ինձ շատ զարմացնում է . . .

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Շապուհ թագաւորի Հրովարտակով
զոր ինձ պարզեւեց իմ իրեն մատուցած մի մեծ ծառա-
յութեան փոխարէն : Այդ Հրամանագիրը շատ դժուարու-

թեամբ կրցի ձեռք ձգել , Տէ՛ր արքայ : Ինձի արտօնու-
թիւն տրուած է իմ թագաւորի վիճակը արքայավայել
դրութեան մէջ զնելու , ամէն կերպով թեթեւացնելու նրա
ծանրութիւնները , եւ ամէն կերպով միիթարելու նրան :

ԱՐԾԱԿ.— Գովում եմ քո անձնութիւնը , Դրաս-
տամատ , զու միշտ Հաւատարիմ ես եղել քո թագաւորին ,
քո այժմէան վարժունքը ես կը Համարեմ այն բարձաթիւ
զոհարեւութիւնների պատկը , որոնցմով զու շատ անդամ
ասլացուցել ես քո բարձր արժանաւորութիւնը : — Բայց
այժմ ինձ Համար միեւնոյն է այս յարդի վրայ պատկիլ ,
թէ ամենավախուկ անկողնոյ վրայ : Նոյնպէս ինձ Համար
զանազանութիւն չունի ջուրը այս կոտրած խեցելին անօ-
թից իմել , թէ ոսկեայ բաժակից : Տանջանքը , տաժանա-
կիր կեանքը չէ մաշում ինձ : Ինձ մաշում է միայն այն ,
որ ես այստեղ եմ , իսկ իմ անոնք մնացած երկիրը կեղեք-
ուում է իմ թշումիներից : — Ինչո՞ւ ես լուս Դրաստա-
մատ , ասա՞ , ի՞նչ զիտես մեր աշխարհից , զու թէեւ Տիղ-
րոնից ես զալիս , բայց դարձեալ շատ բան լսած , շատ
բան իմացել ես : Ասա , ո՞վ է իմ զօրքերի հրամանաարը :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Մուշեղ Մամիկոնեանը , Տէ՛ր ար-
քայ :

ԱՐԾԱԿ.— Լսի՛ր , Մամիկոնեան Տէ՛ր , որդիկ իմ զօր-
քերի ընդհանուր սպարապեան է այժմ : Ես վասահ եմ , որ
քաջ հօր քաջ որդիկն կ'արգարացնէ իւր առհմի Հայրենա-
սիրութիւնը : Ո՞րտեղ է Հայոց Տիկինը , Թագուհին :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Ամրացած է Արտակիրս լրեղում ,
Տէ՛ր արքայ , եւ իւր Հրամանի ներքոյ ունի տամնեւերկու
չազար ամենաբնտիր զօրքեր :

ԱՐԾԱԿ.— Իսկ իմ որդիկո՞ն :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏՈՒՄ.— Դեռ զանուում է Բիզանդիայում ,
կայսեր մօտ , Տէ՛ր արքայ :

ԱՐԾԱԿ.— Որտեղ է Ներսէար :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏ — Եաւ աքսորուած է, Տէր արքայ,
Պատմոս կղզում :

ԱՐՇԱԿ. — Ի՞նչ է լինում Մերուժանը :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏ — Անիծուի՛ Մերուժանը : Շապուհից
զանազան հրահանգներ է ստացել . . . և նրանց ի կատար
ածելու մասին է աշխատում . . .

ԱՐՇԱԿ. — Ի հարկէ, ոչ յաւ հրահանգներ :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏ — Այդ շատ հակնալի է, Տէր արքայ,
բայց ևս մեծ յոյսեր ունեմ թէ Հայոց նախարարների միա-
րանութիւնը կը խորտակէ նրա շար դիտաւորութիւնը :

ԱՐՇԱԿ. — Նախարարների միարանութիւնը . . . մի-
թէ կարելի՛ է հաւատալ նրանց անկեղծութեանը . . .

ԴՐԱՍԱՄԱՏԱՏ — Ոչ միայն կարելի է, այլ պէտք է
հաւատալ, Տէր արքայ : Երանք այժմ շատ և շատ սարր-
կացել են իրանց անխռնեմ վարժունքների մասին :

ԱՐՇԱԿ. — Այն բոլոր վնասներից յետոյ, որ կատար-
ուցաւ Դրաստամատ . . . իրանց թաղաւորին կորցնելուց
յետոյ . . . հայրենի երկիրը աւերակ գարձնելուց յետոյ . . .
այժմ, ասում ես, սորքացել են . . . Դա շա՛տ ուշ է արդէն :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏ — Ուշ է, բայց բոլորովին անցած չէ,
Տէր արքայ : Իրանց անձնագուհութեամբ այժմ կը քաւեն
չին մեղքերը : Ինձ յայտնի են բաւական տեղեկութիւններ
թէ՝ սրուշ նախարարութիւնը, հոգեւորականութեան
հետ ձեռք ձեռքի տուած, պատրաստուում է պատերազմիւ
հայրենիքի փրկութեան համար : — Տիգրոնում եղած ժա-
մանակս, Տէր արքայ, միշտ հետամուտ էի գիտնալու, թէ
ինչ են մեքենայում Պարսից արքունիքում : Այդ մասին ես
ունի մի հաւատարիմ անձն, որ շատ մօտ էր գործերին,
և ամէն ինչ հազորգում էր ինձ : Հաւաքած տեղեկու-
թիւններս գալանի սուրճանգակների միջոցով՝ անմիջա-
պէս հազորգում էի Հայոց նախարարներին, նրանց զգու-
շացնելու համար, և նրանցից պատասխաններ էի ստա-

նում : Ես ինչ որ կարող էի անել, արել եմ, Տէր արքայ,
այժմ մնում է ինձ գիւրացնել իմ թագաւորի գրութիւնը,
եթէ կը յաջողուի ինձ, որի մասին մեծ յոյսեր ունեմ, ա-
զատել նրան իւր դառն կապանքներից . . .

ԱՐՇԱԿ. — Գովում եմ քո եռանդը, Դրաստամատ:
Բայց չեմ կարող հաւանութիւն տալ քո անշափ ոգեւո-
րութեանը : Դու, քան թէ այստեղ իմ աղաւութեան հոգ-
ութեանը զբաղելու, աւելի օգտաւէտ կը լինէիր այնտեղ,
Տիգրոնում, որպէսզի շարունակէիր քո գերը : Հայոց նա-
խարարներին մի հաւատարիմ ականջ է հարկաւոր ունե-
նալ Տիգրոնում, և ամենայարմարը զու ես, որ վայելում
և Շապուհի առանձին չորհը :

ԴՐԱՍԱՄԱՏԱՏ — Այնուամենայիւ, իմ Տէր թագա-
ւորի վիճակը . . . նրա աննախանձելի գրութիւնը . . .

ԱՐՇԱԿ. — Իմ վիճակը այժմ մասմբ զիւրացած եմ
համարում, Դրաստամատ, որովհետեւ քո հազորդած
տեղեկութիւնները բաւական հանգստացըին ինձ : Կրկնում
եմ, Տիգրոնում մի հաւատարիմ մարդ է հարկաւոր, և
այդ մարդը զու պէտք է լինես : Իսկ ինձանով զբազուկը,
—զա միայն ժամանակ կը խէյր քեզանից : Ես աւելին կա-
սեմ, իմ այստեղից պատաւելը, Հայաստան զնալը և
կրկնի իմ կառավարութեան զլուքիր անցնելը, գործերի
այժմեան խառն ու անորոշ զրութեան ժամանակ, ես մին-
չեւ անզամ վնասակար եմ համարում : Ինչո՞ւ : Արովհե-
տեւ ես չպիտի կարողանամ հաշտուել նախարարների
հետ, իսկ այդ հայրենիքի փրկութիւնն անհրաժեշտ է :
Մեր մէջ այլեւս վաղեմի մտերմութիւնը չէ կարող կայտ-
նալ, իմ ներկայութիւնը կը բորբոք մի նոր, ներքին պա-
տերազմ, երբ արտաքին թշնամու հետ կուռելու շատ
պէտք կայ : Ես կը մնամ այստեղ : Ես կը զունեմ ինձ Հայ-
րենիքի խազաղութեանը : Թող իմ նախարարները միա-
րան ըլլան : Իսկ ես այստեղ կ'աղօթեմ նրանց յաջողու-

թեանը համար, և կ'սպասեմ Աստուծոյ անօրինութեանը:

ԴՐԱՍԱՄԱՍ. — Տէ՛ր արքայ, մեծ է Աստուծոյ աշխարհը և անբաւ է նրա գթութիւնը, եթէ դուն Հայոց երկիրը չես ցանկանում դնալ, Աստուծած շատ ապահով տեղի ունի քո բնակութեանը համար:

Ա. ԲՆԱԿ. — Երբեք չեմ ցանկանայ փախստականի անուն ժառանգել, Դրաստամատ: Ո՞ւր զնամ: Հռոմայեցոց մօտ: Պարսիկի բանալ ինձ համար աւելի առնելի է, քան թէ նրանց կեղծաւորութեամբ լի պալատները: Իմ այստեղ մնալը թէ և կուրախացնէ իմ նախարարներին, բայց իմ ժաղովրդի սիրուը կը լիցնէ արդար վրէժխրնդրութեամբ: Իմ ժողովուրդը սիրում է ինձ: Նու կը մտածէ, որ աքսորեալ թաղաւոր ունի, և կը թափէ իւր բարեկանը անիրաւ աքսորողի վրայ: Իսկ այժմեան հանգամանքներում, այդ կը նպաստէ իմ երկրի պատութեանը: Թող Հայոց երկիրը ազատ լինի, այնուհետեւ իմ տանջանքները կը թեթեանան այս մթին բանտում: Տիս' և ն գեպերը, Դրաստամատ, շատ տիսուր... թաղաւորը այստեղ Արեւելքում... քահանայապեալը այնտեղ Արեւմուտքում, և Հայաստանը՝ անտէր զիճակի մէջ: Սակայն կայ մի հզօր էակ, որի վրայ եմ զրել ևս իս յոյսը: Այժմ կարող ես դնալ, Դրաստամատ:

ԴՐԱՍԱՄԱՍ. — (Լուս, կ'սկսի պրատուել) Մնաս բարեամբ, Տէ՛ր արքայ:

Ա. ԲՆԱԿ. — Երթաս բարեամբ: (Կ'ողջազուրուին, և Դրաստամատ՝ տիսուր կը մեկնի):

ՎԱՐԱԳՈՅՑ

ՏԵՍԱՐԱՆ II

Կանաչազարդ հովիտ մը, «Արտասուֆի Արքիւրը» (Ծշտունեաց զինուրները պառկած են խոտերուն վրայ)

Ա. ԶԻՆԻՈՐ. — Ամօթի մի կաթիլ անզամ ըլ մնաց մեր երեսին, զբանից յետոյ մենք պէտք է ձգենք մեր քօլովները և մեր կնիկների լիջակները ծածկենք մեր զրւլին...

Բ. ԶԻՆԻՈՐ. — Ինչո՞ւ:

Ա. ԶԻՆԻՈՐ. — Դու զես հարցնում ես թէ ինչո՞ւ: Նրա համար, որ մենք զբանից յետոյ տղամարդկիկ չենք, մենք կանայք ենք... կորցրինք մեր պարձանքը, կորցը-րինք մեր տիկնոջ... նրանց ամրոցները կրակի ծարսկ դարձան... իսկ մենք աղատել ըլ կարողացանք... : Ալթէ այդ բոլորից յետոյ ապրել... : Ալլեւս ի՞նչ երեսով պէտք է նայենք աշխարհն... : Ամէն մարդ կը թքէ, ամէն մարդ կը մրէ մեզ:

Բ. ԶԻՆԻՈՐ. — Ուզիկ է ասածք, բայց մենք ի՞նչ զիտէինք: Մենք մեր տանը նստած, թշնամին զողի նման ներս ժտաւ և իւր աւարը տարաւ: Եթէ այս բոպէիս երկնքից յանկարծ մի քար բնկինք մեր զլիսին, մենք կարող ենք նրա տուածը տոնել: Ալդակս հասաւ փորձանքը: Եթէ տուածուց զիտենայինք, թշնամին չէր կարող ոտք դնել մեր հողի վրայ:

Ա. ԶԻՆԻՈՐ. — Հիմա խօ զիտենք:

Բ. ԶԻՆԻՈՐ. — Հիմա զիտենք, մեր վրէժը կ'առնենք և մեր նախատինքը մեր թշնամու արխոնով կը սրբենք:

(Սամուել և Աշլուեն կուզան քեմի վրայ: Զինուրները մէկ կողմ կը բաշուին, որոնց մէջ նաեւ Յուսիկ և Սուրէն կը զտնուին):

ԱԱՄՈՒԵԼ. — Խափը, Աշխէն, ևս ինձ չառ դժբախտ ևմ համարում, որ երկար անջանառմից յետոյ, երբ կրկին պատահում է հանգիստի միմիանց, ևս փոխանակ սքանչութու քո սիրոյ քաղցրութեամբ, փոխանակ վայելելու այն անոպան երանութիւնը, որ բաշխում է սիրուած աղջկը սիրոյ երիտասարդին, — ստիլուած ևմ քեզի հետիօսել վշտի ևս զառնութեան խօսքիր: Մենք հանգիստ ենք միմիանց, որպէս երկու սպասուրներ: Դու կորցրած մայր ունես, իսկ ևս կորցրած հայր: Քո մայրը կորաւ իր առաքինութեան համար, իսկ իմ հայրը կորաւ իւր չարպործութեան համար: Մանելով քո հայրենի երկիրը, ևս անցայ կրակի ևս մոխիքների միջով: Ես տեսայ քո քաջ նախահարց պատկանելի ամրացների աւերակները: Ամօթը ևս նախատինքը պատառմ է ինձ, երբ մատածում եմ, որ այդ բոլորը կատարուել է իմ հօր ձեռքով... այն մարզու ձեռքով, որի հարսը պէտք է լինեա դու... .

ԱՆԽԵՆ. — Ինչո՞ւ համար է այդ բոլորը, Սամուէլ: Գու, կարծես, որպէս մի յանցաւը, եկել ևս քեզ արդարացնելու իմ առջեւ: Այն օրը ինձ համար մահ կը լինէր, եթէ ևս ամենափոքր կասկած ունենայի քո մասին:

ԱԱՄՈՒԵԼ. — Իսկ իմ կողմից յանցանքը այն կը լինէր, եթէ ևս աշխատէի արդարանալ քո առջեւ: Ես գիտեմ, թէ որքան բարի ես զու, Աշխէն, ևս գիտեմ, թէ որքան բարձր ես զու հասարակ մահկանացուներից: Ինձ յայտնի է, որ քո անսահման սիրոյ մէջ՝ ամէն յանցանք իմ կողմից ինքն բառ ինքան կը ոչնչանայ որպէս մի զիւրավառ նիմթ՝ կրակի սպասով բորբոքման մէջ: Բայց խիզս հանգիստ չէ, Աշխէն: Ես կանխառէս գիտէի գարող վասնովը: Ես տեսնում էի, թէ որպիսի չարագուչակ թուխալ պատրում է քո հայրենի երկրի վրայ: Ես չտապեցի զգուշացնել թէ քեզ եւ թէ քո հայրը: Բայց վասնովը աւելի շուտ հասաւ ձեզ, քան թէ իմ համակը:

ԱՆԽԵՆ. — Գուցէ այդպէս էր Սատուծոյ տնօրինութիւնը: Թողնենք այդ, Սամուէլ: Դու ինձ այն ասա՛, թէ ինչո՞ւ համար եկար, ևս այժմ ո՞ւր ևս գնում:

ԱԱՄՈՒԵԼ. — Ինչո՞ւ համար եկայ... ևս այժմ ո՞ւր եմ գնում... դա չափազանց տիսուր հարց է, սիրելի Աշխէն: Քո առջեւ արդէն բաց արի վարագոյը այն սոսկալի գործազութիւնների, որ կատարուում են ևս պիտի չարունակուեն կատարուել մեր հայրենեաց աւերակների վրայ: Այժմ զու ինքը կարող ևս հասկանալ, թէ ինչո՞ւ համար եկայ, կամ ո՞ւր եմ գնում:

ԱՆԽԵՆ. — Այդ բոլոր չարիքների դէմ ի՞նչ են մտածում անել Հայոց նախարարները:

ԱԱՄՈՒԵԼ. — Ամանք «ուրացողների» կողմն են: Իսկ հայրենի գահին ևս եկեղեցուն հաւատարիմ մնացողները ուխտել են մի մարգու պէս կանգնել, կամ մեռնել, կամ ազատել հայրենիքը սպաննացով վանդից: Այժմ կ'ասեմ քեզ, սիրելի Աշխէն, թէ ինչո՞ւ համար եկայ, կամ ո՞ւր եմ գնում: Երկու սիրելիներ գրած են իմ առջեւ, մէկը վրանդի մէջ գանուող հայրենիքը, մէւսը վասնդի մէջ զանուող կինը — զո՞ւ: Երկուսն էլ ինձ համար հաւատ չափով պաշտելի են: Երկուսի ձայներն եւս կոչում են ինձ: Երկար ես տանջւում էի այն մտքով, թէ զէպի ո՞րը զիմեմ: Երկուսի համար եւս ես ուխտել եմ անկեղծ անձնազնութիւն: Բայց իմ զգացումները զժուարացնում են ինձ վճռել, թէ որքին պէտք է նուիրել առաջն զո՞ւ, իմ սրտագին իղձերը, իմ ամենաչերմ վափաքները թափում են քո առջեւ, սիրելի Աշխէն, զու ցոյց տուր ինձ ձանապարհը, թէ զէպի ո՞րը գնամ:

ԱՆԽԵՆ. — Դէպի հայրենիքի փրկութեան զործը: Դու ինձ արժան չես լինի, Սամուէլ, եթէ քո արիւնը ըլ խառնես այն անքաւ արեան հեղեղների հետ, որ պիտի թափուեն մեր աշխարհի պատրութեան համար: Եւ ոչ ես արժան կը լինեմ քեզ, եթէ նոյնը չտնեմ...

ՍԱՄՈՒԵԼ. — Դուք թուր զրկել իմ հրեշտակին, վրէժինդրութեան և արդար բարկութեան հրեշտակին... : Աշխարհի բարձր երանութիւնները չեն կարող այնպէս միխթարել ինձ, որովհետ այդ խօսքը, որ թռաւ քո շրթունքներից, սիրելի Աշխին: Այդ խօսքը լցնում է իմ սիրալ մի սրբադան հպարտութեամբ, որ ես վայելում եմ Հայոց քաջազնուհիներից ամենաընտրեալի սէրը:

ԱՇԽԵՆ. — Ես եւս կը զնամ, Սամուէլ: Իմ մայրը կուրու, Հայրս զնաց որոնելու մօրս: Զգիտեմ, կը վերադասնայ թէ ոչ: Մեր լեռնականները սաստիկ յուղման մէջ են, ես հազիւ կարողանում եմ զսպել նրանց կատաղութիւնը: Նրանք սիրում էին իմ մօրը: Մի մասը կը թողնեմ մեր երկրի պահպանութեան համար, իսկ մի մասը ինձ հետ առնելով, կը զնամ եւ իմ խումբով կը միանամ այն բանակի հետ, որ պիտի գումարուի Փառահճեմ տիկնոջ չուրջը: Թող Հայոց տիկինը մի Օրիորդ զօրապետ եւս ունենայ իւր քաջերի թւում: Այդ նրան կ'ուրախացնէ...

ՍԱՄՈՒԵԼ. — Եթէ զու այդ մտքին զգայիր, ես ինքս ովկոք է ինկրէի քեզանից այզպէս անել, սիրելի Աշխին: Թէ իմ հայրը և թէ Մերուժանը Շապուշ թագաւորից յատկապէս հրահանդներ են սուացել նախարարների կանանց եւ զաւակների մասին, որ ամէն տեղ ձերբակալեն նրանց եւ պահեն առանձին բերդերում, մինչեւ նրանց ամուսինները անձնատուր կը լինեն: Եւ քո մօրը այդ նըստակով են ատրել: Դու մի բախտով պատուեցար, սիրելի Աշխին: Եթէ զու հօրդ հետ որսի զնացած չլինէիր, եթէ զու այն զիշերը, երբ նրանք պաշարեցին ձեր ամրոցը, այնուղ զանուէիր, ես անպատճառ քեզ կորցնելու դժբախութիւնը կ'ունենայի, որովհետեւ քեզ եւս կը տանէին: Հայոց նախարարներին յարտնի է յիշեալ հրահանդար, այդ պատճառով շատերը իրանց ընտանիքների հետ շատպում են ապաստան զտնել զլիսաւոր բանակում, Հայոց տիկինոջ մօտ:

ԱՇԽԵՆ. — Ես չեմ գնում Հայոց Տիկնոջ բանակը ապաստանի կամ փախուստի տեղ որոնելու, Սամուէլ: Ես գնում եմ թշտունեաց փոքրիկ ուժերը խառնելու Հայոց ընդհանուր զինուորութեան հետ: Եթէ հարկաւոր լինէր թաղչել եւ իմ անձը միայն պահպանել, նրա համար լեռնեներում շատ ամայի տեղեր կան: Թէ ի՞նչ հրահանդներ են սուացել քո հայրը եւ Մերուժանը, այդ ես չգիտէի, ևս քեզմէ միայն լսեցի: Բայց այնքանը հաստատ զիտեմ, որ եթէ նրանք ցամաքի կողմով մօտենային մեր ամրոցներին, ոչ միայն տիրել չեն կարող, այլ թէ իրանք եւ թէ՝ իրանց բերած Պարսիկ զօրքերը կ'անհետանային մեռ յաների մէջ: Այդպէս էլ եղաւ, բայց ոչ բոլորովին...

ՍԱՄՈՒԵԼ. — Հաւատում եմ ձեր ահուելի լեռներին, հաւատում եմ ձեր մթին անտառներին, հաւատում եմ եւ ձեր լեռնականների քաջութեանը, սիրելի Աշխին, որովհետեւ իմ անձի վրայ փարձեցի նրանց զօրութիւնը...

ԱՇԽԵՆ. — Ի՞նչպէս...

ՍԱՄՈՒԵԼ. — Ես սոք զրի ձեր հոգի վրայ 300 հոգով, իսկ այժմ իմ մարզիկներից մնացել են 43 հոգի միայն:

ԱՇԽԵՆ. — Ինչո՞ւ նախապէս իմաց շոուեցիր ինձ քո զարու մտան: Ինչո՞ւ կորցրիր զու քո մարզիկը:

ՍԱՄՈՒԵԼ. — Ես մի քանի բոզէ տառչ սուացի որ նամակ էի զրել, բայց նամակը քեզ չըր հասել: Այդ թողնենք: Մնացած քառասուն եւ երեք հոգին զարձեալ շատ բաւական է ինձ համար զնալու այնուհետ, ուր ես ցանկանում եմ...

ԱՇԽԵՆ. — Ո՞ւր պիտի զնաս:

ՍԱՄՈՒԵԼ. — Հօրս մօտ...

ԱՇԽԵՆ. — Դու տակաւին նրան հա՞յր ես անուանում, Սամուէլ:

ԱԱՄՈՒԵԼ. — Այո՛, Աշխէն, ևս տակաւին սիրում եմ նրան : Ես պէտք է տեսնուեմ նրա հետ, անպատճառ պէտք է տեսնուեմ : Ես գեղ եւս յոյս ունեմ, որ իմ լացով ու արտասուբով կարող կը լինեմ դարձնել նրան իւր չար ճանապարհից : Իսկ եթէ չի յաջողուի ինձ, այն ժամանակ ...

ԱՇԽԵՆ. — Այն ժամանակ ի՞նչ կ'անես :

ԱԱՄՈՒԵԼ. — Այդ մի՛ հարցրու, սիրելի Աշխէն, աղաջում եմ քեզ, մի՛ հարցրու :

ԱՇԽԵՆ. — Ես չեմ հարցնի, Սամուէլ, թէ զու ի՞նչ պիտի անես, բայց կ'ասեմ որ մոայլ մտքեր են թագնուած խօսքերի մէջ...

ԱԱՄՈՒԵԼ. — Եթէ իմ խօսքերի մէջ ծածկեալ մտքեր կան, կարող ես հաւատացնած լինել, սիրելի Աշխէն, որ նրանք մոայլ չեն, այլ, ընդհակառակը, շատ պարզ ու պայծառ են... : Ես այժմ այդքանով միայն կարող եմ հանգստացնել քեզ, որ երբէք վատ կամ անպնիւ գործ չեմ կատարի : Իսկ իմ աեսութիւնը իմ հօր հետ՝ ոչ միայն կարեւոր է, այլ շատ եւ շատ անհրաժեշտ է...

ԱՇԽԵՆ. — Ի զուր ժամանակ պիտի կորցնես, Սամուէլ : Դու զեռ եւս յոյս ունես, որպէս ասում ես, քո լացով ու արտասուբով պիտի կարողանաս դարձնել քո հայրը իւր չար ճանապարհից : Բայց ինչո՞ւ չես մտածում, որ նա եւս կ'աշխատէ քաշել քեզ իւր ճանապարհի վրայ : Ես ընաւ տարակոյս չունեմ, որ երբ զու կը ներկայանաս նրան, նա անպայման կ'առաջարկէ քեզ աջակցել իրան : Դու, ի հարկէ, կը մերժես : Այն ժամանակ որպէսպի նրան խոչընդուռ ըլ դառնաս, կը կալանաւորէ քեզ, կը դնէ բանար, եւ այսպէսով կը զրկէ քեզ քո բոլոր ճանապարհիւներից, որ աւելի կարեւոր են :

ԱԱՄՈՒԵԼ. — Նա այդ աստիճան անզութ չի լինի :

ԱՇԽԵՆ. — Եւ դրանից աւելի անզութ կը լինի : Նա, որ չինայեց իմ մօրը, իւր հարազատին, անտարակոյս, ըլ խնայի եւ հարազատ որպուն :

ԱԱՄՈՒԵԼ. — (Մեկուսի) Այն ժամանակ ես էլ չեմ խնայի... (Աշխէնին) Վատահ եղի՛ր իմ խոհեմութեան վրայ, սիրելի Աշխէն, ես մինչեւ այնտեղը չեմ հասցնի, որ նա ինձ բանտարկէ :

ԱՇԽԵՆ. — Ի՞նչ է ժամանակ քո մայրը :

ԱԱՄՈՒԵԼ. — Իմ մայրը բոլորովին կամակից է հօրս հետ : Քեզ յայտնի է նրա փառասիրութիւնը, քեզ յայտնի է եւ նրա ատելութիւնը զեղի առ հասրակ բոլոր Արշակունիները : Շապուհը խոստացել է ինչպէս ասացի, նրա եղրօրը, Մերուժանին, առաջ Հայոց թագաւորութիւնը, եթէ կատարելու լինի Պարսից ցանկութիւնները : Այդ խոստմունքը, որի իրազորման մասին մայրս մեծ յոյներ ունի, բոլորովին խելքից հանել է նրան : Նա այժմ պատրաստ է ամէն բանի համար, եւ Պարսից կրօնը ընդունել, եւ քրիստոնէութիւնը ոչնչացնելու հոգ տանել, մի խօսքով ամէն ձևնարկութիւն յանձն տանել միայն թէ իւր եղրայրը Հայոց թագաւոր լինի :

ԱՇԽԵՆ. — Մայրդ դիմէ՞ որ զու դնալու ես հօրդ ժօմ :

ԱԱՄՈՒԵԼ. — Ի՞նչպէս չգիտէ : Նա ինքը կարդագրեց իմ ճանապարհի բոլոր պատրաստութիւնները, եւ այնքան շքեզ, այնքան փառաւոր հանդերձանքով, որ արքայավայել պէտք էր համարել : Նա ինքը կազմակերպեց իմ ստուար ասպաֆումբի մարզիկը, որոնցմէ շատերը կորան ձեր անտառների մէջ : Եւ ես շատ ուրախ եմ որ ազաւեցայ նրանցից : Նրանք ինձ համար մի անտառների ծանրութիւն էին : Պէտք է չորցհակալ լինել ձեր լունականներից, որ իմ բնոր թեթեւացըրին...

ԱՇԽԵՆ. — Դու ե՞րբ կը վերագառնաս :

ԱԱՄՈՒԵԼ. — Այդ չեմ կարող ասել, սիրելի Աշխէն, որովհետեւ չգիտեմ, թէ ե՞րբ կամ որտե՞ղ կը դժնեմ հօրս : Բայց յոյս ունեմ որ չուտով կը վերագառնաս :


ԱՇԽԵՆ. — ՄԵՆՔ որտե՞ղ կը հանդիպենք միմիանց :
ՍԱՄՈՒԵԼ. — Այսուղ : Ես կրկին կը գտմ քեզ մօտ,

և միասին կը գնանք Հայոց Տիկնոջ բանակը :

ԱՇԽԵՆ. — Ինձ չատ ցանկալի կը լինէր սպասել քեզ,
Սամուէլ, եթէ քո վերապարձը որոշուած լինէր, բայց ևս
հէնց այս շաբաթ ունոք է պատրաստուեմ ճանապարհ
ընկնելու վեպի բանակը : Այսուղ կը տեսնուենք, եթէ
Սամուէլ անօրինել է կրկին տեսնուել միմիանց հետ . . .

ՍԱՄՈՒԵԼ. — Վճռուած է : ՄԵՆՔ կը տեսնուենք Հա-
յոց Տիկնոջ բանակում : Այս ժամանակ ևս յոյս ունեմ,
սիրելի Աշխեն, զու կը համբուրես իմ ճակատը և կ'ասես .
«Դու արժանի ես ինձ» : Եւ այդ կը լինի իմ ամենամեծ
վարձարութիւնը տյս վտանգաւոր ձեռնարկութեան հա-
մար, ուր հայրենեաց նախանձախնդրութիւնը մզում է
ինձ . . . : ՄԵՐ պայմանները վերջացած են : Ես այլեւս չեմ
ուշացնի քեզ, զիտեմ, քո լեռնցիները՝ անհամբեր սպա-
սելիս կը լինեն քեզ : Գրկի՛ր ինձ, սիրելի Աշխեն, եւ տուր
քո համբոյը և քո օրհնութիւնը : Սամուէլ կը լսէ ան-
մեղ ըրթոնքների ձայնը : Ես զնում եմ թշնամու բանա-
կը : Իմ ճանապարհը եւ կորսուեան եւ փառքի ճանապարհ
է : Քո համբոյը կ'ողեւորէ ինձ եւ թեւ ու սլացք կը տայ-
իմ հոգւոյն : Իսկ քո օրհնութիւնը կը փարատէ ամէն ար-
համերք : Գրկի՛ր ինձ, սիրելի Աշխեն :

ՎԱՐԱԳՈՅԲ



ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ի

Սինեալ մը Վանայ բերդին մէջ

(Համազասպուի կալանաւորուած եւ ողբայակապ կը
հեծէ : Սինեալը լուսաւորուած ֆաղաքի բոցավառութե-
նէն) :

ՀԱՄԱԶԱՍՊՈՒԻՉԻ. — Տէ՛ր Աստուած, այդ ի՞նչ խոս-
վութիւն է :

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. — (Ներս մտնելով) Աղջո՛յն,
Համազասպուէի, ևս կարծում էի որ զու քնած կը լինես,
երեւի զուրսի աղմուկը անհանգստացրեց քեզ : (Դուրսէն
առներու խորտակման դդրդիւն եւ աղաղակներ խունա-
պի) :

ՀԱՄԱԶԱՍՊՈՒԻՉԻ. — Այդ ի՞նչ աղմուկ է :

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿ. — Ցնծութեան ազմուկ, սիրելի Հա-
մազասպուէի : Այդ զես հարսանիքի առաջին զիշերն է :
Տեսնո՞ւմ ես, ինչպէ՛ս զեղեցիկ լուսաւորուած է քաղաքը :
Ա՞չ, զու չես տեսնում, ես այս բակիս քեզ ցոյց կը տամ :
(Պատուհանը տանելով) Նայի՛ր :

ՀԱՄԱԶԱՍՊՈՒԻՉԻ. — Այդ էիր ցանկանում, Վահան :
Միթէ այդ աստիճան քարացած են քո մէջ մարդկային
զգացմունքները, որ զու ծաղրում ևս հազարաւոր բնաս-
նիքների, լացն ու կոծը, որ զու առ ոչինչ ես համարում,
այդ թշուառների կոտորութիւն իրանց աների ծածքերի ներ-
քւ, եւ նրանց թաղուելը իրանց բնակարանների մոխրին
մէջ :

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿ. — Ինչո՞ւ ես ինձ յանդիմանում, սի-
րելի Համազասպուէի : Այդ քո ամուսինն է որ կրակ է թա-
փում քաղաքի վրայ :

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Իմ ամուսինը : Այդ չէ կարող լինել, Վահան, նա իւր կեսանքում մի մրջիւնի անդամ-չէ վիրաւորել : Բա'ց արա իմ շղթաները, Վահան, ևս այս բաղիս կը զնամ, և եթէ նա է, իմ սրտի բոլոր գառնութիւնը կը թափեմ նրա վրայ :

ՎԱՀԱՆ ՄԱՅԻԿ. — Այս՛, նա է : Իւր վայրենի լեռնականերով պաշարեր է քաղաքը :

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Եթէ իմ ամուսինն է, անսպաս-ձառ ինձ համար է զործում այդ բարբարոսութիւնը : Ինչո՞ւ բերեցիր ինձ այսեղ, Վահան : Ինչո՞ւ խոռվեցիր ա-ռաքինի մարզուն : Դու աւերակ դարձրիր մեր ամբոցը, և գրանով եւս չկարողանալով յազեցնել քո անդիւ-թիւնը, զու քո հարազատին գերի վարեցիր : Ի՞նչ էր իմ յանցանքը : Ինչո՞ւ եմ ևս այսեղ, այս շղթաների մէջ, այս քարեղին բանուում, ուր ամենաթշուառ եղենագործ-ներն են միայն աքարում : Ինչո՞ւ համար էր այդ բոլո-րը : Երա համար, որ բարի եւ ողորմած մարդուն զար-նութեան մէջ զնէրը, որ նա զար եւ այդ դժոխային խա-զր խաղար դժբախտ քաղաքի հետ :

ՎԱՀԱՆ ՄԱՅԻԿ. — Այս յարգելի ձեռքերը, որ միշտ սովորած են բարիք զործելու, այժմ շղթայի մէջ են և այդ շղթան գրել է եղբայրը : Բայց մի նախատեր ինձ, սիրելի Համազասպուհի : Կեանքի մէջ, մանաւանդ պետու-թիւնների կեանքի մէջ, լինում են այնպիսի զառն հան-զամանքներ, երբ հայր, մայր, քայլը կամ օտար — բոլորը հաւասար են, և հաւասար կերպով են պատմուում, եզր խոշնդոտ կը համեղիսանան մի մեծ ձեռնարկութեան ի-րացործմանը, որի մէջն է հասարակաց բարին, որից կախուած է դրա ապագայ երջանկութիւնը : Մենք, թէ՛ ևս եւ թէ՛ Մերուժանը — ծառայում ենք այդ զործին :

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Ա՞րն է այդ զործը, ո՞րն է այդ մէծ ձեռնարկութիւնը ...

ՎԱՀԱՆ ՄԱՅԻԿ. — Քեզ յայտնի է, սիրելի Համազաս-պուհի, այլեւս ինչո՞ւ ես հարցնում :

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Ամօ՛թ, քեզ Վահանն, որ ամօ-թալի զործով արտաւորում ես Սամիկոնեանների պայ-ծառ յիշատակը ... թող այն օրը սեւ լինէր երբ գու աշ-խարհ եկար ... թող քո մայրը քա վոխարէն մի կտոր քար ծնած լինէր, և ոչ քո նման մի պատիժ Հայոց երկրի համար :

ՎԱՀԱՆ ՄԱՅԻԿ. — Դու ինձ անիծում ես, Համազաս-պուհի :

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Եւրիշ իօսքերի արժանի չես զու, Վահանն, նա, որ թողնում է մայրենի եկեղեցին, և Պարսից հեթանոսական կրօնն է աշխատում տարածել իւր հայրենիքում, — նա, որ գաւաճանում է իւր թագաւո-րին և Պարսից լարրարոսութիւնն է կամենում հասա-տել իւր հայրենիքում, — նա, որ կրակով եւ արինով ոչնչացնում է հայրենի երկիրը, — նա միայն անձքի է արժանի : Կ'անիծեն քեզ հազարաւոր մայրեր, որ պի-տի զրկունի իրանց որգիններից ... կ'անիծեն քեզ հազարա-ւոր ամուսիններ, որ պիտի այրի մնան ... կ'անիծեն քեզ հազարաւոր քոյլեր, որոնց եղբայրները պիտի ընկնեն կոխեներում ... կ'անիծեն քեզ հազարաւոր մանուկներ, որ որը պիտի մնան, կ'անիծէ քեզ ապագայ սերունդը :

ՎԱՀԱՆ ՄԱՅԻԿ. — Այդ բարոր զոհերը պէտք է կա-տարուեն ... և ևս չառ ցաւում եմ որ պէտք է կատար-ուեն, բայց առանց այդ զոհերին փրկութիւն չի լինի ... թող ներկայ ևս պազայ սերունդը անիծէ զիս : Բայց իմ խիզճը հանգիստ է : Ես համոզւած եմ, որ վաս զործ չեմ կատարում : Ինչո՞ւ ես զո՞ւ, Համազասպուհի մոռո-նում անցեալը, ամենամօտ ժամանակների աղէտալի պատ-մութիւնը : Ասա՛, ո՞վ էր որ կոտորել տուեց Արծրունի-ների ևւ թշտունեաց նախարարների ամբողջ տոհմերը,

որոնցմէ միայն երկու մանուկներ ազատուեցան, մէկը՝
Տաճառ Խշոռնին, քո ամուսնի հայրը, իսկ միւսը՝ Շա-
ւասպ Արծրունի, Մերուժանի հայրը:

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Ես չեմ հասկանում, ինչո՞ւ
համար ես լիցեցնում ինձ այդ լուրսը:

ՎԱՀԱՆ. — Նրա համար, Համազասպուհի, որ Ար-
շակունիների տան վրայ արիւն կայ, եւ արիւնը պէտք է
արիւնվ մաքրուի...

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Բայց ոչ անմեղ ժողովուրդի
արիւնվ:

ՎԱՀԱՆ. — Եւ անմեղ ժողովուրդի արիւնվ, երբ նա
լիմարարար միջամտութիւն է գործում, եւ պաշտպան է
հանդիսանում Արշակունիների փայցած, անբարոյակա-
նացած տանը, որից եթէ զաղուց ազատուած լինէինք,
աւելի բախտաւոր կը լինէինք թէ՛ մենք եւ թէ՛ մեր աշ-
խարհը:

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Ցնորքներ են պատուում քո գր-
խով, վահան: Կիրքը, ատելութիւնը, անզուսպ վրէժին
ամէն բան, ինչ որ մարդկային է, ինչ որ Աստուածահա-
նոյ է: Ասա՛ ինձ, ինչո՞վ է մեղաւոր Տիրանի որդի Արշա-
կը, որ այժմ հեծում է Անուշ բերդի մէջ: Ինչո՞վ է մե-
ղաւոր նոտ որ իւր հայրը այսպէս կամ այնպէս է վարուել:

ՎԱՀԱՆ ՄԱՅԻ. — Նրանով, սիրելի Համազասպուհի,
որ նրա ձեռնինը եւս մաքուր չեն արիւնից: Մի փոքր անձ-
նասիրութիւն ունեցիր, Համազասպուհի: Ո՞վ սպաննել
առեց քո հօրը, կամենում եմ ասե՛լ եւ իմ եղրօրը:

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Արշակ թագաւորը:

ՎԱՀԱՆ ՄԱՅԻ. — Ո՞վ կոտորել տուեց մեր փեսայ
կամսարականներին եւ ազայ ձեռքով յափշտակեց նրանց
երուանդաշատ քաղաքն ու Արտազիրս Ամրոցը: Հարցը-
նում եմ, ո՞վ սպաննել տուեց իր եղրօրորդի Գնէլը եւ յա-
փշտակեց նրանից գեղեցիկ Փառանձեմին:

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Արշակ թագաւորը: — Բայց
դրանով ի՞նչ ես կամենում ապացուցանել, վահան: Քո
եւ Մերուժանի ապատամբութիւնը Արշակունիաց թագա-
ւորների դէմ չէ, այլ թագաւորութեան դէմ է, հասկո-
ւում ես, վահան: Տիրանը կամ նրա որդի Արշակը կարող
էին վատ թագաւորներ լինել: Բայց ինչո՞վ են մեղաւոր
նրանց ժառանգները: Գուցէ Արշակի որդի Պապը շատ բա-
թագաւոր կը լինի մեղ համար:

ՎԱՀԱՆ ՄԱՅԻ. — Միալուսմ ես, Համազասպուհի,
օձից ձուկն չի ծնուի, եւ ոչ դայլից դան:

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Դու ես սիրարում, վահան: Ա-
չա՛ քեզանից ծնուել է Սամուէլը, որ ամենապատուական
երիտասարդ է:

ՎԱՀԱՆ ՄԱՅԻ. — Սամուէլը իմ որդին չի լինի, եթէ
ինձ չի հետեւի... բայց այդ թողնենք, մենք հնանում
ենք հարցից, Համազասպուհի: Իմ բերած ապացոյցները
Տիրանի եւ Արշակի անկարգ վարդունքների մասին, միայն
այն նպատակով էր, որ քեզ ցայց տամ, թէ ե՞ս եւ Մերու-
ժանը իրաւացի պատճառներ ունենք Արշակունիներին ա-
տելու: Նոյն իրաւացի պատճառներն ունենիր աւելի զուր,
Համազասպուհի, որովհետեւ Արշակը քո հայրասպանն է:
Նոյն իրաւացի պատճառներն ունենիր եւ քո ամուսինը, ո-
րովհետեւ Արշակունիները կոտորել տուին նրա ամբողջ
աղքատուհմը: Բայց թէ՛ զու եւ թէ քո ամուսինը ոչ միայն
հաւատարիմ էք մնացել ձեր նախնիքը կոտորունիներին,
այլ մինչեւ անզում ամենայն յամառութեամբ պաշտպա-
նում էք նրանց: Ո՞վ որ նրանց պաշտպանն է, մեր թշնա-
մին է, եւ թշնամու հետ մինք կը վարուենք թշնամարը:
Այդ էք պատճառը, որ ես և Մերուժանը կործաննեցինք ձեր
ամրոցները եւ քեզ այստեղ բերեցինք, Համազասպուհի:

ՀԱՄԱՁԱՍՊՈՒՀԻՆ. — Ինչո՞ւ համար բերեցիք:

ՎԱՀԱՆ ՄԱՅԻ. — Որ քո ամուսինը անձնատուը լինի:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Ահա տեսնում ես, փոխանակ անձնատուր լինելու, նո այլում է Մերուժանի քաղաքը, և մենք այս բոպէիս գտնուում ենք հրեղէն ծովի մէջ: Կրկուում եմ, ինչ որ մի քանի բոպէ առաջ առացի: Աշխատել ոչնչացնելու քրիստոնէական կրօնը, աշխատել կործանելու հարազատ թաղաւորութեան գահը, — դո միայն դաւաճանների եւ մատնիչների գործ է: Թէ՛ ես եւ թէ՛ իմ տմուսինը դաւաճանների աջակից չենք լինի:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Ի զուր ես այլպէս մտածում, Համապապուհի: Մենք, կամենում ենք տաել թէ ես եւ թէ՛ Մերուժանի մէծ յանցանք դործած կը լինէինք, եթէ մեր դիմաւորութիւնը այն լինէր, որպէս զու ես կարծում, ոչնչացնել կրօնը: Մենք աշխատում ենք վերազանալ մեր չին կրօնին, մեր սիրելի նախահարց սիրելի Աստուածներին: Ի՞նչ տուեց մեզ քրիստոնէութիւնը: Արդքան միայն, որ մօտեցրեց մեզ խարերայ Բիւզանդացիներին, եւ հեռացրեց, թշնամացրեց մեզ մեր վաղեմի բարեկամ եւ դաշնակից Պարսիկների հետ:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Միթէ կարեի՞ է, Վահան, այլպէս քաղաքական նկատումների խաղալիք դարձնել կրօնքը: Արովչեաւ Պարսիկների հետ բարեկամանալու համար հարկաւոր է փոխել կրօնը, — ուրեմն պէ՞տք է փոխել:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Դու սիրում ես վիճարանել, Համապապուհի: Ես կարձ կը կորեմ քեզ հետ: Ահա՛ մեր ուխոր: Քրիստոնէութիւնը պէտք է ոչնչանայ, Արշակունեաց իշխանութիւնը պէտք է ընկնի, որովհեաւ այդ է պահանջում մեր երկրի խաղաղութիւնը: Մերուժանը պէտք է Հայոց թաղաւոր զառնայ: Մենք պէտք է կրօնով միանանք Պարսիկների հետ մեր բարեկամանութիւնը աւելի տմբապնդելու համար: Մեր եւ նրանց մէջ կրօնի խարութիւնը չպիտի լինի:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Թող նրանք միանան մեզ հետ, թող նրանք ընդունեն մեր քրիստոնէութիւնը, դարձեաւ մեր եւ նրանց մէջ կրօնի խարութիւն չի լինի:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Միշտ տկարները հետեւում են հըզորներին: Մենք ակար ենք, իսկ նրանք զօրաւոր:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Քրիստոնէութեան մէջ ամենասփոքը ամենից մեծն է, եւ ամենատկարը՝ ամենից զօրաւոր:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Այդ ցնորք է: Տկարը ակար է, զօրաւորը՝ զօրաւոր: Դու միայն այն առա՛, Համապապուհի, համաձամ՞յն ես մեզ հետ:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Երբե՞ք:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Ով որ մեզ հետ համաձամյն չէ՝ մեր թշնամին է:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Ես ամենեւին քեզ ինձ բարեկամ չեմ համարում, թէեւ քո եզրօր աղջիկն եմ:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Ով որ մեզ չի հետեւի, նո կը պատժուի, եւ անիմոյ կերպով կը պատժուի:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— (Նրաները ցոյց տալով) Դրսնից աւելի պատիժ: Այլեւ ի՞նչ պէտք է լինի:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Դրանից աւելին, սարսափելին կայ Համազապուհի:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Ես պատրաստ եմ, Վահան:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Լու՛ մտածիր:

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ .— Ես բոլորը մտածել եւ վճռել եմ... (աղմուկ, իրարանցում դուրսը) (բոցավառութիւն տեսնելով) Ահա՛, Վահան քո սպառնալիքը, ի՞նչ էք ցանկանում դուք, — այդ կրակը, այդ արիւնը:

ՊԱՐՍԻԿ ԶՈՐԱՊԵՏ ՄԸԼ .— (Ներս մտնելով) Տադհապը մեծ է Տէ՛ր իմ:

ՎԱՀԱՆ ՄԱՄԿԻ .— Տեսնում եմ:

ՊԱՐՍԻԿ ԶՈՐ .— Պէտք է անձնատուր լինել, Տէ՛ր իմ:

ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿ.— ԵՐԵՒՔ:
ՊԱՐՍԻԿ ԶՈՐԱՊԵՏ.— Մի քանի լուսէից ներս կը
խուժէ վայրենի խուժանը :

ՎԱՀԱՆ.— Անկարելի է : Դու, ուրեմն այս բերդը
չես ճանաչում :

ՊԱՐՍԻԿ ԶՈՐԱՊԵՏ.— Եթէ բերդի ամսութիւնը կա-
րողանայ պաշտպանել մեզ զրսի թշնամուց, յետոյ ի՞նչով
կարող ենք պաշտպանել մենք ներսի թշնամու զէմ —
քաղցի և ծարաւի : Նրանք պաշտպան մէջ պահելով մեղ,
բոլորի սպամահ կ'անեն :

ՎԱՀԱՆ.— Աւելի լու, կը մեռնենք, կ'ազատուենք :
ՊԱՐՍԻԿ ԶՈՐԱՊԵՏ.— Խնչո՞ւ ի դուր տեղ մեռնել :

ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿ.— Որ չարասաւորուի Արքայից Ար-
քայի գրօչի փառքը, ո՞՛ չասեն, թէ Պարսիկը երկշում է :

ՊԱՐՍԻԿ ԶՈՐԱՊԵՏ.— (Դուրս կ'շտապէ) :

ՎԱՀԱՆ.— Անպիտաննե՞ր, դուք քաջ էք այն ժամա-
նակ միայն, երբ թշնամին ձեր առջեւից փախչում է :

ՄԵՐՈՒԺԱՆ.— (Ներս վագելով) Մամիկոնեան Տէր,
բերդը բնկում է : Շատպիր : Փախչենք, հիմու կը խուժեն :

ԳԱՐԵԳԻՆ ՈՇՏՈՒՆԻՒ.— (Բերդը կ'իյնայ) (դրսի
զինուորներուն) Զեր գլուխները ազատուած կը լինեն մեր
սուրցից, եթէ ցայց կը առք թէ՝ որ տեղ պահուած է Արշ-

տունեաց Տիկինը :

ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿ.— (Լսելով Պարեցինի ձայնը) Իսկոյն
ցոյց կը տան : (Սուրը կը միօրնէ Համազասպուհի կուրծ-
քը) Մերուժան, շո՛ւտ փախէնք : (Պաղտնի անցիք մը
կը փախչին) :

ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻՆԻ.— (Կը հառաչէ և կ'իյնայ կը
մեռնի) :

ԳԱՐԵԳԻՆ ՈՇՏՈՒՆԻՒ.— (Եր զինուորներուն հետ
ներս գալով, կ'սկսի ողբալ իր կնոջ մահը) :

ՊԱՐԱԳԱՅՑ

ՏԵՍԱԲԱՆ Բ.

Արտագիրս Ամրոցին Առջեւ

ՇԱՊՈՒՀ.— (Բերդին վարէն) Դո՛ւ, որ այդքան զե-
ղեցիկ ես, տիկին, քեզ համար որ Արշակ թագաւորը այն
աստիճան խելազարեցաւ, զո՞ւ, տիկին, աւելի նազելի
կը լինէիր, եթէ այդ սքանչելի գեղեցկութեան հետ փոքր
ինչ խելք, խոհեմութիւն ունենայիր : Բայց Սիհնեցւոյն չէ
տուած խելքը, չէ տուած և խոհեմութիւնը : Նրա տուած
է վայրենի կոստութիւնը և անսանձ հպարտութիւնը մի-
այն : Նրա սիրար, նրա միտքը, եւր լիռների ազատաժ-
ների նման կոչտ է և անզգայ : Այդպէս էր քո հայրը Սն-
դովկ իշխանը, այդպէս էր և քո մայրը :

ՓԱՌԱՆՉԵՄ.— (Բերդին վերէն) Լսիր, Շապուհ, զու-
թագաւորի վեհութեան հետ կորցրել ես և թագաւորի
քաղաքավարութիւնը, զու մոռանում ես որ խօսում ես
կնոջ հետ :

ՇԱՊՈՒՀ.— Ես քո մօր մարմինը իւր յանդուզն հո-
մարձակախօսութեան համար, մաս մաս յօշոտել տուի
Զարեհաւանի աւերակների մօս : Ես քո բոլոր ազգատոհմը
ննջեցի : Մնում են քո եղբայրները միայն, որոնք գտնը-
ում են իմ գերիների թւում : Բեզ եւ նրանց եւս սպասում
է նոյն աղէտալի վախճանը, եթէ զո՞ւ, տիկին, կը շո-
րունակես քո յամատութեան մէջ մնալ :

ՓԱՌԱՆՉԵՄ.— Դու լիշեցնում ես, Շապուհ, քո զա-
գանային վարժունքը իմ մօր և իմ ազգատոհմի հետ, եւ
ամբարտաւանութեամբ պարձենում ես քո բարբարոսու-
թիւններով, բայց զու պէտք է սպասափէիր քո եղեռնա-
զործութիւնների առջեւ, եթէ քո պատում մարդկային
զգացմունքի մի ամենափոքր նշոյլ մնացած լինէր : Դու
սպասում ես ինձ, Շապուհ, այն աղէտալի վախճանը, ո-
րով զամապարտուեցան իմ տոհմալիններս : Բայց չես
մտածում, որ այդ սպասալիքը աւելի կը լորբոքէր իմ

վրէժինդրութիւնը, և աւելի կ'ամրապնդէր իմ յամառութիւնը՝ ձեռք չմեկնել այն մարզում, որի ձեռքերը շաղախուած են իմ մօր եւ իմ հարազատների արիւնով:

ՇԱՊՈՒՀ. — Ինչո՞ւ ես ամրացել այդ բարձրութեան վրայ: Մի՞թէ այդ ապառաժները կարող են փրկել քեզ: Մէջ է Արեաց Արքայից Արքայի զօրութիւնը, և սոսկալի է նրա բարկութիւնը: Նրա ահաւոր չունչից յեռները մոմի նման հալվում են եւ ծովերը ցամաքում են: Իսկ զո՞ւ, տիկին, անմտութեամբ կղզիացած ես այդ քարերի զագաթների վրայ, առանց մտածելու, որ ալիքները կը բարձրանան, մրրիկը կը փոթորկուի, և այդ ողորմելի կղզին կը կորչի, կ'անհետանայ իմ բարկութեան անողոք հոսանքի մէջ: Քեզ համար, տիկին, մի այլ յոյտ չկայ, րացի իմ մեծահոգութիւնից, նրա վրայ յենուիր, և քեզ փրկութիւն կը լինի: Եթէ զու կին չլինէիր, ես քեզ չէի ների, բայց կը ներեմ, որովհետեւ կին ևս: Յա՛ծ իջիր այդ բարձրութիւնից, համբուրբ'իր Արեաց Արքայից Արքայի ոտքերի փոշին, և նա ողորմած կը լինի դէպի քեզ:

ՓԱՌԱՆՉԵՍ. — Դու ինձ ներում ես խոստանում, և հրաւիրում ես ցած իջնել իմ ամրոցի բարձրութիւնից: Լաւ մտածիր, Շապուհ, այս բոլոր խարերայութիւններից յետոյ, որ զու մինչեւ այսօր զործ ես զրել մեզ հետ, միթէ թողե՞լ ես մի ամենափոքր հաւատարմութիւն թէ՛ դէպի քո խօսքը եւ թէ դէպի քո խոստունքները: Այն օրից, որ զու իմ թագաւոր ամուսնին, — որ քեզ շատ եւ շատ փառնգներից ազատել էր, — այն օրից, որ զու նենդութեամբ նրան քեզ մօտ հրաւիրեցիր, և քո հիւրին, քո մուերիմ զաշնակցին, վատութեամբ Անուշ բերդը աքսորեցիր, — այս, այն օրից զու զրկեցիր քեզ հայոց բոլոր հաւատարմութիւնից:

ՇԱՊՈՒՀ. — Ինչո՞ւ ես ամրացել այդ տեղ, զրանով զու շես կարող ազատել, տիկին, ո՞չ քո անձը եւ ո՞չ քո երկիրը: Ամբողջ Հայոց Աշխարհը իմ ոտքի տակ է: Բաւկան է մի թեթեւ ճնշոց — և նա մոխիր կը դառնայ:

ՓԱՌԱՆՉԵՍ. — Դու Հայոց Աշխարհը քո ոտքերի տակըն ես համարում, Շապուհ, եւ սպառնում ես մի հարուածով ոչնչացնել նրան: Այդ ցնորքը իրականութիւն կը լինէր, եթէ պարծենկոտութիւնը, եթէ անսանձ պոռոտախօսութիւնը, քաջութիւն համարուէին: Մտարերո՞ւմ ես, թէ քանի քանի անգամ քո զօրքերի դիակները թողել ես մեր զաշտերի վրայ, իսկ ինքդ միաձի փախել ես մեր երկրից: Եւ եթէ քո բանակը այսօր գրած է իմ ամրոցի մերձակայքում, այդ քո նենդութեամն եւ քո դաւաճանութեան արդիւնքն է: Դու գողութեամբ մտար մեր անզաշտապան երկիրը, զու կաշտացիք տան ծառաներին, և անոնք քո առջեւ գոները բաց արին: Ահա՛ այդ դիւրաննենդ եւ դիւրավաճառ ծառաները երկուսն էլ քեզ մօտ կանգնած են անամօթարար, երկուսին իրեւե կաշտառ, տուել ես քոյրերին (Մերուժանը եւ Վահան Մամիկոնեանը ցոյց տալով): Բայց հոգ չէ, Շապուհ, Հայոց աշխարհը զարձեալ տէր ունի, նախ՝ նա, որ ամրող տիեզերքի տէրն է, երկորպ ես, որ խօսում եմ քեզ հետ, և ապա իմ որդին, որ այժմ զանուում է Բիւզանզիառում: Մնոտի հաղարտութիւնը եւ կոյլ անձնախարէկութիւնը մոլորութեան մէջ են զրել քեզ, Շապուհ: Լաւ մտածիր եւ ուշի եկ, Շապուհ: Եթէ ամէնքը կը չնջուին, Եթէ կը մնայ Հայոց խրբաթիւներում մի թոյլ աղջիկ միայն, — նա զարձեալ կը պատերազմի քեզ հետ: Գնա՛, բորբոքի՛ր քո բոլոր շարութիւնները, և ինչ բարբարսութիւններ որ տակաւին կարագ ես կատարել, մի՛ ինայիք: Բո սպառնալիքները չեն կարող վախեցնել ինձ: Գնա՛: Այն բոլոր վատութիւններից յետոյ, այլեւ մեր միջեւ հաշտութիւն չէ կարող լինել: Որքան տաեն որ իմ թագաւոր ամուսինը հեծում է Անուշ բերդում, Հայոց աշխարհը վրէժինդրութեան զէնքը ձեռքում կը պատերազմի քեզ հետ:

ՇԱՊՈՒՀ. — Տևոնենք: (Կը մեկնին):
(ՑԱծութեան աղաղակներ բերդին մէջ)
ՎԱՐՍԳՈՅՐ

ՏԵՍԱՐԱՆ III

Անհետակ մը Արտագիրս Ամբոցին մէջ

Գիշեր, ապա՝ արշալոյսի ժամանակ: Այս տեսարանի արտքը տեղի կ'ունենայ նախկինեն 8—9 ամիսներ վերջ: Այս Որմիզդուխոք Շապուհի պատիկ լոյրի է, ո՞չ առաջինը:

ՀԱՅՄԻԿ.— Այս գիշեր ճոխ սեղան կ'ունենանք:
ԾՈՒՇԱՆԻԿ.— Եթէ մի կտոր հաց լինէր: Այո՛, որքան ժամանակ է որ հացի երես չենք տեսել...

ՀԱՅՄԻԿ.— Աստուած ողորմած է, սիրելի բոյրիկ, մէնք արդէն սովորել ենք առանց հացի, միայն մասվ կերպուել, և Աստուած ամէն օր ուզարկում է մեզ համար գեղեցիկ ազաւնինք:

ԾՈՒՇԱՆԻԿ.— Թագուհին նոյնակս սովորեց... այժիք խորոված սրսի միար ախտորժակով է ուտում, բայց Որմիզդուխոք օրիորդը զգուանքով...

ՀԱՅՄԻԿ.— Նա էլ կը սովորի...
ԾՈՒՇԱՆԻԿ.— Միշեւ ե՞րբ պէտք է այսպէս մնանք շամփիկ, ամէնքը մեռան ժանատախոց և հանգստացան: Մէնք միայն մնացինք: Եթէ մէնք էլ մեռնէինք, կ'ազատուէինք:

ՀԱՅՄԻԿ.— Ինչո՞ւ մեռնէինք: Եթէ մէնք մեռնէինք, ո՞վ պէտք է ծառայէր թագուհույն: Աստուած մեզ թողեց նրան ծառայելու համար:

ԾՈՒՇԱՆԻԿ.— Դու շե՞ս վախենում, Հասմիկ:
ՀԱՅՄԻԿ.— Ինչի՞ց պէտք է վախենամ:

ԾՈՒՇԱՆԻԿ.— Ի՞նչպէս ինչից: Եթէ Պարսիկները գիտենան որ բերդում մարդ չէ մնացել, և յանկարծ յարձակեն և ներս խուժեն, այն ժամանակ ի՞նչ կ'անես...

ՀԱՅՄԻԿ.— Այն ժամանակ, մէնք մեր սրերով կը կուռենք նրանց հետ և թող չենք տայ, որ մեզ մօտենան:

ՓԱՌԱՆՉԵՄ.— (Ներս է մտնում Որմիզդուխոքի հետ) Ի՞նչ է պատահել քեզ, սիրելիս:

ՈՐՄԻԶԴՈՒԽՈԽՏ.— Ա՛խ, եթէ զիտենայիր, որքա՞ն լաց եմ եղել, որքա՞ն լաց եմ եղել:

ՓԱՌԱՆՉԵՄ.— Ինչո՞ւ էիր լաց լինում, սիրելիս:

Ի՞նչ ունէիր լաց լինելու: ՈՐՄԻԶԴՈՒԽՈԽՏ.— Երազումս էի լաց լինում... բայց չիմա ուրախ եմ... չառ ուրախ եմ... զու զարձեալ կտա... զու զարձեալ իմ մօտ ես...

ՓԱՌԱՆՉԵՄ.— Սիրելի Որմիզդուխոք, ինչո՞ւ Երազումս լաց էիր լինում:

ՈՐՄԻԶԴՈՒԽՈԽՏ.— Զեմ ասի... լեզուս չէ բոնում որ ասեմ:

ՓԱՌԱՆՉԵՄ.— Մեզ պատահած դժբախտութիւնների դառն տալաւորութիւնների ներքոյ, այսպիսի տխուր երազ ես տեսել, սիրելի Որմիզդուխոք: Մեծ է Աստուածոյ զթութիւնը, նա մեզ խնացեց մահից, և կը պահպանէ այսուհետեւ: Հանգիստ կաց, սիրելի Որմիզդուխոք, և սիրող միշտ ուրախ պահիր:

(Յամիկ եւ Ծուշանիկ կը մեկնին)

ՓԱՌԱՆՉԵՄ.— Գիտե՞ս, Որմիզդուխոք, ո՞վ է սպաշտել մեր բերդը:

ՈՐՄԻԶԴՈՒԽՈԽՏ.— Զեմ իմանում:

ՓԱՌԱՆՉԵՄ.— Եթէ թշնամին ասէր «տուէր ինձ Որմիզդուխուն», ես կը թողնեմ և կը հեռանամ», զու կը զնայի՞ր:

ՈՐՄԻԶԴՈՒԽՈԽՏ.— Կը զնայի:

ՓԱՌԱՆՉԵՄ.— Ինչո՞ւ կը զնայիր:

ՈՐՄԻԶԴՈՒԽՈԽՏ.— Ար այսքան մարդիկ չը մեռնէին, որ հաց լինէր՝ զրահը ուտէին, և որպէս զի զու արդքան նեղութիւններ չը կրէիր, և վերջապէս այս անսելի ժանատախոցի աւերներին ականատես չլինէիր, — ահա ինչո՞ւ համար կը զնայի:

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Դու նո՞յնպէս կը վարուէիր, ինչպէս
վարուեց այն ամրոցի աղջիկը, որի երգը երգեցիր երէկ
երեկուն:

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Աչ, ևս այնպէս չէի վարուէր: Այդ
երգի աղջիկը անսիրտ աղջիկ էր: Նա իւր գեղեցկութեան
համար զոհէր էր պահանջում, և որքան բաղմանում էր
զոհէրի թիւր, այնքան այդ անդժութիւնը նրան զուար-
ձութիւն էր պատճառում: Նա իւր պաշտողների դիակ-
ներից իւր համար ամրոց հիմնեց, բայց ևս այդպէս չէի
անի, ևս թող չէի տալ, որ մի կաթիլ արիւն թափուէր,
այլ իսկոյն զուրս կը զնայի թշնամու հանդէպ, կուրծքս
կը դարձնէի գէսի նրա նետերը և կասէի: «Աչո՞ ևս,
եթէ ինձ համար է կուր, թող զադրի նա»: Ես կը զո-
չէի ինձ, բայց կը փրկէի այդ բերդը:

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Բայց այդ բոլորը, սիրելի Որմիզ-
գուիտ, հակառակ քո բարի ցանկութեան, կատարուեցաւ
արդէն...

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Ի՞նչը կատարուեցաւ....

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Այն զոհէրը... այն արիւնը... այն
կոտորածը...

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Այս, քո պատճառով: Բայց հան-
գրստացի՛ր, սիրելի Որմիզգուիտ, քո պատճառով կա-
տարուած զժբախտութիւնների մէջ զու չես յանցաւորը:
Դրանք կատարուեցան առանց քո կամքի և յօժարութեան:
Լոի՛ր, ևս կը պատմէմ քեզ տիւուր իրուղութիւնը: Սիրելի
Որմիզգուիտ, քո եղրօր նպատակը, այսինքն հայոց կրօ-
նի և թագաւորութեան ոչնչացնելու աշխատութիւնը՝
յանձն է տուի Մերուժան Արծրունին, և քո եղրայրը,
իրեւ մի բարձր վարձատրութիւն, խոստացել է քեզ կր-
նութեան տալ Մերուժանին, և այժմ Մերուժանը ինքն է
պաշարել երկու ամիսէ ի վեր մեր ամրոցը:

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Նրա կի՞նը լինել, — այդ երբեք չէ
կարող լինել, ևս մի այդպիսի չարագործի կինը չեմ լինի:

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Ինչո՞ւ, սիրելի Որմիզգուիտ, եթէ
Մերուժանին կը յաջողուի ոչնչացնել Հայոց թագաւորու-
թիւնը, նա ինքը Հայոց թագաւոր կը դառնայ, իսկ զու
— Հայոց թագուհի:

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Քո՞ փոխարէն (ծիծաղելով), ե՞ս
պէտք է յափշտակեմ քո թագը... ոչ, զա ապերախտու-
թիւն կը լինէր իմ կողմէց գէսի քո բարութիւնները:

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Զէ՞ որ զու ասացիր, որ եթէ գիտե-
նա կուրք քա համար է, զու քեզ կը ձգես թշնամու զիր-
կը: Այժմ ահա հասկցար, որ Մերուժանը քո պատճա-
ռով է պաշարել այս բերդը:

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Այս, ևս ինձ կը ձգէի թշնամու
զիրկը կուրք սկզբում, երբ զեռ ոչ մի արիւն չէր թա-
փուել, և երբ կը գիտենայի, որ ինձանով ամէն ինչ կը
մերջնար, բայց այժմ շատ ուշ է... գառն եղելութիւն-
ները կատարուել են... և մենք ապրում ենք դիակների
կոյտի վրայ: Եթէ այդ է Մերուժանի ցանկութիւնը, ևս
կատեմ նրան, թող բոլոր բարի և չար աստուածները
վկայ լինեն, որ յափշտակ կատեմ նրան, ինձ փոյթ չէ,
որ իմ եղրայրը խոստացել է ինձ կնութեան տալ նրան,
բայց ևս ինձ կ'սպաննեմ, և մի այդպիսի անպիտան մար-
դի կինը չեմ լինի:

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Ինչո՞ւ համար չես լինի:

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Նրա համար, եթէ նա լաւ մարդ
լինէր, իւր հայրենիքին չէր զաւածաներ:

ՓԱՌԱՆՉԵՑԵՄ — Բայց նա սիրում է քեզ, և այդ բո-
լորը արել է քո սիրոյ համար:

ՈՐՄԻԶԳՈՒԽԵՑ — Բայց ևս նրան ատօւմ եմ: Թող-
նենք այդ: Դու ինձ այն ասա՞, սիրելի մայրիկ, ի՞նչ եղաւ
Մուշեղը... ո՞ւր գնաց նա... ա՞լս, ո՞րքան լաւ մարդ էր
նա... ո՞րքան աղնիւ էր, ո՞րքան բարի էր... երբ նա
ութիւ ամիս առաջ իմ թագաւոր եղրօր բանակատեղը պա-
շարեց ևս նրան ամբողջ կանանցը գերի բոնեց, անոնց
երբեք մի խստութիւն ցոյց չտուեց, ևս պատուով ու մէծ

յարդանքով, բացի ինձանից, որ իրեւ պատանդ այստեղ թիրեց, զանոնք Տիգրոն ուղարկեց: Երբ ինձ թիրում էր այստեղ, ճանապարհին որքան ցանկանում էի խօսել նրա հետ... բայց նա մի անգամ գննէ շխօսեց ինձ հետ: Ասա՛, սիրելի մայրիկ, ո՞ւր գնաց նա:

ՓԱՌԱՆՉԵՄ — Գնաց Բիւղանդիա:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ — Շուտ կը գա՞յ:

ՓԱՌԱՆՉԵՄ — Ամէն բոպէ սպասում եմ նրան:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ — Ա՛խ, ի՞նչքան կ'ուրախանամ ես, Երբ մի անգամ եւս կը տեսնեմ նրան...

ՓԱՌԱՆՉԵՄ — Դու, Երեւի, սիրում էիր նրան, Արմիդուխտ, ուղիղն ասա՛, սիրո՞ւմ էիր:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ — Զեմ թագցում, սիրում էի... այժմ եւս սիրում եմ... ես կը ցանկանայի նրա կինը լինել... ա՛խ, ո՞րքան ուրախ, ո՞րքան բախտաւոր կը լինէի ես, Երբ նա մեծահոգութեամբ վերապարձրեց իմ եղրօր կանանցը Տիգրոն, այն ժամանակ ես հասկցայ, որ աշխարհի բոլոր լաւ տղամարդերի մէջ նրա նմանը չկայ... Հնաց այն ժամանակ իմ սիրու սիրեց նրան: Ասա՛, ի՞նչո՞ւ գնաց սպարապետը Բիւղանդիա:

ՓԱՌԱՆՉԵՄ — Նա գնաց, որ որդուս րերէ եւ իր հօր գահը բարձրացնի:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ — Աւրեմն նա կը գայ քո որդու հետ, և մեզ կ'ապատէն չար Մերուժանի սպաշտումից:

ՓԱՌԱՆՉԵՄ — Ես այդ մասին մեծ յոյս ունեմ: Սիրելի Արմիդուխտ, գիշերը արդէն յառաջացել է, գնա՞ քնէ: Մենք վաղը դարձեալ Երկար կը խօսինք:

ՈՐՄԻՉԳԴՈՒԽԵՏ — (Յամբաքայլ եւ քախծալի նայուածնով կը մեկնի):

ՓԱՌԱՆՉԵՄ — (Միայնակ) Այս գրութիւնը (Հայր Մարտիք կը լրտեսէ) Երկար չարունակուել չէ կարող... վաղ թէ ուշ թշնամին կը հասկնայ իմ ամրոցի դատարկութիւնը... այն ժամանակ Մերուժանի վայրագութիւնը

կ'անցնի ամէն չափից... ևս տանջանքներից Երկիւղ չունեմ... ես երկիւղ չունեմ ևւ մահից... բայց ինձ հետ կը մեռնի մի մեծ զործ, որի համար այնքան աշխատեցի: Ո՞չ, այլեւ չէ կարելի գիմաղրել այս կացութեան, ա՞չ, ա՞չ, Մերուժանը պիտի մտնի իմ ամրոցը եւ ինձ շղթայապ պիտի տանի Շապուշին, եւ անիրաւ Պարսկելը իւր վրէժինդրութեան բալոր թոյնը պիտի թափէ իմ վրայ: Բայց այդ իմ հոգը չէ... թող ես կարծիմ, թող ես ոչչահանմ, բայց Հայաստանը մնայ: Բայց ես տեսնում եմ հայրինիքի անդարձ կորուստը... իմ աչքի առջեւն է նրա ողբառը ապագան... ա՞խ, գոնէ մի կողմից օգնութիւն ինչը, գոնէ չուտ հասնէր որդիս...

ԴՊԱԿ — (Ներս մտնելով դիւային կերպարանով) Այդ մի՛ յուսար...

ՓԱՌԱՆՉԵՄ — (Սահմոված) Ա՞չ, ա՞չ, այդ ո՞վ է... ո՞վ կայ այստեղ:

ԴՊԱԿ — Ես եմ, տիկին:

ՓԱՌԱՆՉԵՄ — Օ, դու Դպակ:

ԴՊԱԿ — Ա՛խ, Դղակն եմ:

ՓԱՌԱՆՉԵՄ — Ո՞րսեղից եկաւ... ինչո՞ւ եկար...

ԴՊԱԿ — Ամրոցի բոլոր գաղտնի անցքերը ինձ յայտնի են, տիկին: Բայց թէ ինչո՞ւ համար եկայ, մի փոքր համբերութիւն ունեցիր, տիկին, ես խոյն կատամ քեզ:

ՓԱՌԱՆՉԵՄ — Հեռացի՛ր այստեղից, զարչելի: Ես միշտ ատելով ատում էի քեզ, եւ քո զարչելի երեսը տեսնելու ժամանակ, միշտ զզուելով զզում էի քեզանից, խոկ արժմ, աւելի եւս...

ԴՊԱԿ — Հա՛, հա՛, հա՛:

ՓԱՌԱՆՉԵՄ — Հեռացի՛ր, ատում եմ քեզ, եթէ ոչ...

ԴՊԱԿ — Ի՞նչ ես որոնում, տիկին, Երեւի մտածում ես կանչել քո սպառապինեալ զինուորների բազմութիւնը... Երեւի կամենում ես կանչել քո արիւնախում զահիձների խումբերը... նրանք չկան այժմ... ժանտախտը նրանց հնձել է... ես նրանց զիակները տեսայ զրառւմ:

ՓԱՌԱՆՉԵՄ — Ալ'որ, զու եկար ծաղրելու իմ գըժ-
բախտութիւնը...

ԴՊԱԿ — Ո՞չ տիկին, ինձ Աստուած ուզարկեց քեզ
մօմ:

ՓԱՌԱՆՉԵՄ — Հեռացի՛ր ասում եմ քեզ:

ԴՊԱԿ — Մի՛ վրզափիր, տիկին, ես խոկոյն կը գնամ:
Հայր Մարգարեր կարեւոր տաելիքներ ունի, թող Հայոց
Տիկինը առ ժամանակ թողու իւր զեզեցիկ մասնութիւն-
ները եւ բարեհաճի լսել նրան:

ՓԱՌԱՆՉԵՄ — Ես քեզանից շատ չորհակալ կը լի-
նէի, Դղակ, եթէ հանգիստ կը թողնէիր ինձ: Դու արդէն
հասար քո նպատակին: Գողի նման մտար իմ ամրոցը, եւ
ինչ որ լրտեսելու էիր, լրտեսեցիր: Այժմ դնա, ում որ
մտանելու ես, մտանիր իմ ամրոցը: Ես պատրաստ եմ:

ԴՊԱԿ — Քեզ հանգիստ թողնել... զու տակաւին
հանգստութիւն ես սպասում... հանգստութիւնը այլիւս
քեզ համար չէ, տիկին:

ՓԱՌԱՆՉԵՄ — Ահափիսա՞ն, զրանով ես փոխարինում
այն բոլոր չորհները, որոնցմով իմ թագաւոր ամուսինը
քեզ անյայտ գրաւթիւնից բարձրացրեց եւ մեծամեծ պաշ-
տօնների հասցրեց: Ապերա՛խտ, զու իմ հայրենիքի ամե-
նագժուարին տազնապի միջոցում, փոխանակ նրան պաշտ-
պանելու, քո զաւանանական ձեռքը մեկնում ես զէպի
թշնամին: Քեզ յանձնուած էր քո թագաւորի տունը, նրա
ընտանիքը, եւ զու եթէ ամենափոքր ազնութիւն ունե-
նայիր, պիտի քո անձը դնէիր նրա տան վրայ: Բայց այ-
ցըմ ուրախանում ես այդ տան գերեվարութեամբ: Այդ
բաւական չէ, զու համարձակվում ես քո զազրելի բերա-
նով նախաւել ինձ, եւ նախաւել քո բարելար Արշակու-
նիներին: Այս՛, նրանք նախաւելի են, որ քեզ նման ցած
եւ սառըին արարածին այդպիսի բարձր պաշտօնների ար-
ժանացրին:

ԴՊԱԿ — Այդ իմ իրաւունքն էր, տիկին, այդ իմ ժա-
ռանգական արտօնութիւնն էր, որ հասել էր ինձ իմ պա-
պերից: Ո՞վ կարող էր չնչել Մարգարետական իշխանու-
թիւնը:

ՓԱՌԱՆՉԵՄ — Իմ թագաւոր ամուսինը:

ԴՊԱԿ — Այս՛, այդ նպատակին ձգտեց նա... նա աշ-
խաւեց ոչնչացնել եւ բոլոր նախարարութիւնները...
բայց ոչնչացաւ ինքը...: Այդ թողնենք... ես չեմ թաղ-
ցրում, տիկին, եմ ատելութիւնը դէպի առ հասարակ
բոլոր Արշակունիները, ես չեմ թաղցնում եւ իմ ուրա-
խութիւնը, որ զու վերջապէս պիտի պատժուես: Աստու-
ծոյ վրէժինգրութեան բաժակը լցուած է եւ նա պէտք է
թափուի... Աստուած պահանջում է ձեզանից այն անթիւ-
դուների արխանը, որ թաթել էր զուք... ես օտար չեմ,
ինձ յայտնի են այն բոլոր եղեռնագործութիւնները, որ
կոտարուել են ձեր արքունիքում... ես տեսնում էի, եւ
ոխուկարութեամբ լուսում էի, որովհետեւ վախենում էի քո
ամուսնիդ... զու ինքը, տիկին, արիւնով սաւացար քո
տիկնանց տիկնութիւնը... կարծես, չէնց այս բոլէիս,
իմ աչքերի առջեւն է գժբախտ Ոլիմպիադայի վիակը, ո-
րին սպաննել տուիր զու: Նրա մահուամբ նրա թագը յա-
փշտակեցիր... որքան այդպիսի գժբախտներ զոհուել են
քո չար կրքերի եւ քո անիբաւ փառասիրութեանը... պէտք
է անպատճառ կործանուի՝ այս անրարոյականացած
տունը...:

ՓԱՌԱՆՉԵՄ — Կորի՛ր, չարագործ: Եթէ թագաւորը
եւ թագուհին արիւն են թափում, այդ յանցանք չէ, ինչ-
պէս յանցանք չէ երբ Աստուածներն են մարդիկ կոտ-
րում: Այդ անում են նրանք, զարծեալ մարդկանց բարօ-
րութեան համար: Վատերին մաքրում են լաւերից: Ես
գիտեմ որ զու այսեղից հեռանալուց յիտոյ, պիտի մատ-
նու Պարսիկներին իմ ամրոցի գատարկութիւնը, Գնա՛,

յայտնի՞ր : Թող դան եւ կալանաւորեն ինձ , ես ո՛չ մահեց
եւ ո՛չ աքսորից երկիրով չունեմ :

ԴՊԱԿ .— Հա՛ , Հա՛ , Հա՛ , (մեկնում է) :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Ո՛չ , գերջապէս , քիչ վերջը ես սիսի
բնինեմ շարագարծների ձեռքը : Նա վերջապէս պիտի տի-
րանալ իմ պաշտած աղջկան , Որմիզդուխտին : Բայց ո՛չ ,
ո՛չ , Որմիզդուխտը չափաք է Մերուժանի ձեռքը ընկնի ,
զես նրանք իմ ամրացը չը մտած , պէտք է ես սա զաշոյնով
վերջ տամ Որմիզդուխտի կեանքին , որպէս զի Մերուժան
իր նպատակին չը հասնի : (Դաշյոյն անմերով ֆայլերը դե-
պի Որմիզդուխտին ննջասենեալը կ'ուզըէ , սեմէն ներս
կը մտնէ . յետոյ սարսափած իր կատարելիք ահոնելի ա-
րարքէն , ես կ'նկրկի) Ա՛չ , ա՛չ , ո՛չ , ո՛չ , ես այդ արիւնից
մաքուր կը պահեմ իմ ձեռքերը ... Այո՛ , ես վճռել էի ,
ես մինչեւ անգամ երգուել էի , որ նոյն բոպէում , երբ
Մերուժանը ոտք կը գնէ իմ ամրոցի շէմքի վրայ , նա
պէտք է իր առջեւ զաշունահարուած տեսնէ սիրած աղ-
ջրկան մարմինը ... բայց ինչո՞վ է յանցաւոր այդ անմեղ
աղջկրութիւնը ... ո՛չ , ես զրան կենդանի կը թողնեմ , որ աւելի
առանձէ Մերուժանին ... Զէ կարող լինել մի պատիժ այն-
քան դառն եւ այնքան զժնդակ , քան թէ այն , երբ Մերու-
ժանը , որ յանձն առեց այդ գեղեցիկ աղջկան համար այն-
քան եղեռնագործութիւններ , յանկարծ իրան խարուած կը
զտնէ իւր սիրոյ մէջ , երբ Որմիզդուխտը կ'սկսէ տաել
նրան եւ մերժել նրան սէրը ... նա ինձ խոստացաւ այդ եւ
համոզուած եմ , որ կը կատարէ : (Դաշյոյն մէկ կողմէ կը
դնէ) երթամ , զարթեցնեմ նրան : (Ներս կը մտնէ եւ Որ-
միզդուխտին հետ դուրս կուզայ) :

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— Դիտեմ , թէ ինչո՞ւ այսպէս վազ
արթնցըրիր ինձ , սիրելի մայրիկ , երէկ պայման զրինք որ
այս առաւօտ մէնք զնանք որսիր , եւ ո՛չ Շուշանիկն ու
Հասմիկը :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Ո՛չ , սիրելի Որմիզդուխտ , այսօր մեղ
պիտի որսան ... որսորդները արդէն եկել են , ամրոցի
դրանը կանգնել են ... լսո՞ւմ ես փողերի ձայնը ...

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— Լոում եմ ... ինչո՞ւ համար են այդ
ձայները .

ՓԱՌԱՆՉԵՄ .— Թշնամին հասկացել է , որ ամրոցը
պաշտպաներ չունի , եկել է , որ զրաւէ նրան :

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— Մերուժանը :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Այո՛ , Մերուժանը :

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— (Խելազարի նման դէպի դուռը կը
յառաջանայ) :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Ո՞ւր ես զնում :

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— Անիծեալ Մերուժանը եկել է զրա-
ւուու այս րմբեր իմ եղրօր զօրքերով , իմ եղրօր զօրքերը
չեն կարող չը հնազանդել քրոջ հրամանին : Ես զնում եմ
նրանց հրամայելու ...

ՓԱՌԱՆՉԵՄ .— Ի՞նչ հրամայելու :

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— Դու իսկոյն կը տեսնես , մայրիկ :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Ի զուր կ'անցնին քո ջանքերը , սի-
րելի Որմիզդուխտ : Մէնք մեզ յանձնենք Աստուծոյ կամ-
քին : (Սրեգակը կը ծագի , դուրս ադմուկը եւ շիոքու-
քիւնը կը սաստկանայ , դուռները կը դպրյան) :

ԽՈՒԺԱՆ .— (Դուրսէն) Բա՛ց արէք գոները , թէ ոչ
կը խորսակենք :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Եկ , Համբուրեմ քեզ , սիրելի Որմիզ-
դուխտ , Հասաւ ժամը , որ անողորմ ձակասագերը պիտի
բաժանէ մեզ միմևանցից ...

ՈՐՄԻԶԴԳՈՒԽՏԻՆ .— (Անոր զիրկը իյնալով) Ո՛չ , մէնք
չենք բաժանուի միմևանցից , ուր որ քեզ տանելու լինեն ,
ես էլ քեզ հետ կը զամ :

ՀԱՍՏԻԿ .— ԽՈՒԺԱՆԻՆ .— (Սարսափած) Ա՛չ , սի-
րեն , զինուորները մտան , մէր սենեակում :

ՓԱՌԱՆՉԵՄ .— Գնա՛ , Հասմիկ , դու աւելի սիրու ու-
նես , զնա՛ ասս նրանց , որ մէնք այստեղ ենք :

ՀԱՍՄԻԿ.— (Լալագին) Ես այդ բանը չեմ ասի, տիկին:

ՓԱՌԱՆՉԵՄ.— Դու զնա՞ , Շուշանիկ :

ՇՈՒՇԱՆԻԿ.— Ես էլ չեմ մատնի իմ տիկնոջը : (Թագուհոյն մէջքը փաթքուելով) Ա՛խ , քեզ պիտի տանեն . . . ա՛յս , մեզ պիտի զրկեն քեզանից :

ՄԵՐՈՒԻԺԱՆ.— (Պարսիկ զօրապետի մը և զինուորակին հետ ներս կը մտնէ , իրնուանելով առաջ կ'ընթանայ եւ իւր սուրբ դնելով Որմիզդուխտի ոտների մօտ , ծնրադիր) Այժ բոլորը կատարուեցաւ քո ազատութեան համար , եւ քո սիրոյ համար , նազելի Որմիզդուխտ : Հայոց թագուհին քեզ գերի մարեց իւր ամրոցում , իսկ ես , քեզ ազատելու համար , ոչնչացրի նրա ամրոցը իւր զօրքերի բազմութեան հետ : Յոյս ունեմ , որ դու այսուհետեւ կը յարդեն այդ սուրբ , որ այնքան անձնութբարար գործեց քո պատուի եւ քո կեանքի համար :

ՈՐՄԻԶԴԻՈՒԽՏ.— (Պարսիկ զօրապետի մը) Ի՞նչպէս է քո անունը :

ՊԱՐ. ԶՈՐԱՊԵՏ.— Ալանողան , քո ծառան :

ՈՐՄԻԶԴԻՈՒԽՏ.— Ո՛վ Ալանողան , համայում եմ քեզ իմ եղրօր՝ Արքայից Արքայի անունով , Հեռացրու այս տեղից այդ զարշելի մարդուն : Ես ատում եմ նրան : Նա չը պիտի համարձակուի տեսնել իմ երեսը : Պատրաստել առուր մեզ համար առանձինն սրագարակներ , ես եւ Հայոց թագուհին միասին պիտի զնանք Տիգրոն իմ եղրօր մօտ :

ՊԱՐ. ԶՈՐԱՊԵՏ.— Արեաց մեծափառ օրիորդի Հրամանը կատարուած կը լինի , որպէս նրա բարձր ցանկութիւնն է :

ՄԵՐՈՒԻԺԱՆ.— (Հոգեկանապէս կ'ընկնծուի եւ կը խորտակուի) :

(Թագուհին , Որմիզդուխտ , նաժիշտները կը մեկնին , իրենց կը հետեւի Պարսիկ զօրապետը իր զինուորներով) :

ՄԵՐՈՒԻԺԱՆ.— (Հոգեկան տանջանիքով) Ի՞նչը ձգեց ինձ այս թշուառ զրութեան մէջ . . . Արդեօք փառասիրութիւնը . . . ո՛չ , հազար անգամ ոչ . . . Հայոց գահը , Հայաստանի թագն ու զաւագանը , որ խոստացաւ ինձ Պարսից Շապուհ արքան , երբեք չէին կարող հրապուրել ինձ , երբեք չէին կարող մի անարդ գործիք դարձնել ինձ Պարսից արքայի ձեռքում . . . Ես այնքան վատ չէի , ես այնքան անսիրտ չէի , որ ոտնակոխ անէի սուրբ պարտականութիւնը , եւ ապստամբուէի իմ թագաւորի գէմ . . . Ես աւելի մեծ յօժարութեամբ կ'ընդունէի մահը , եւ իմ պատիւը ինձ հետ զերեզման կը տանէի , քան թէ իմ ճակատի վրայ կ'ընդունէի դաւաճանի սեւ կնիքը . . . ուրեմն ի՞նչը ձգեց ինձ այս թշուառ զրութեան մէջ . . . Արդեօք վրէժինդրութեան անգուսալ կի՞րքը , արգեօք արեան անշէջ ծարաւուր . . . զարձեալ ո՛չ . . . Արդարեւ իմ հայրերը , իմ ամրող պազատոհմը սրի ճարակ դարձնան եւ անխնայ կերպով խողիսողուեցան Արշակունիների ձեռքով . . . Եւ սկսեալ մանկութիւնից , վրէժինդրութեան սրբազն սպարտքը միշտ բորբոքում էր ինձ վրէժինդիր լինել եւ զրանով Հաշուուել իմ նախահարց ուրուականների հետ , որ ամէն բուքէ եւ ամէն վայրկեան տանջում էին ինձ . . . բայց ես չէի ցանկանայ իմ նախահարց արեան վրէժը Արշակունիների թագաւորութեան կործանման մէջ գտնել , եւ իմ զաւաճանութեամբ յափշտակած զահը զնել նրանց զժրախտ աւերակների բնկորների վրայ . . . ուրեմն ի՞նչը ձգեց ինձ այս թշուառ զրութեան մէջ . . . ի՞նչը հարկագրեց ինձ ուրանալ իմ Աստուծուն , ուրանալ հայրենական կրօնը , ուրանալ ամէն ինչ , որ նուիրական էր ինձ համար , եւ երկրպագութիւն անել Պարսից աստուածներին . . . ի՞նչը քարացրեց իմ հաւաար , ի՞նչը խեղդեց իմ մէջ ազգային բոլոր սուրբ զգացմունքները . . . Միայն գո՞ւ , քո սէրը միայն , ո՛վ Որմիզդուխտ . . . (Ճնրադիր) Ես սիրում էի քեզ ու այդ գիտէր քո թագաւոր եղրայրը , եւ իմ այդ թու-

լութիւնից օգուտ քաղեց նա . . . Ամէն խռամունքներ, ամէն պարզեւներ, ինչ որ ամենաբարձր էր մարդկային փառքի եւ վայելչութեան համար, խոստացաւ նա ինձ, բայց չկարողացաւ խախտել իմ հաւատարմութիւնը թէ՝ զէսի իմ հայրենիքը եւ թէ զէսի իմ թագաւորը: իսկ քեզ տալով, նա խրեց ինձանից բոլորը, ինչ որ սուրբ էր ինձ համար, ինչ որ թանկապին էր ինձ համար . . . ես յանձն առի կատարելու քո եղոր ամենավատ ցանկութիւնները միայն քեզ ստանալու համար, ո՛վ Որմիզդուխտ: (Մի քանի բովէ լուութիւն. ջերմ արտասույք քափելով աշքերից) Սիրում եմ . . . չեմ կարող սպաննել իմ մէջ այդ սէրը . . . Ո՛վ Աստուած, ցոյց տուր ինձ այն անօթը, որ կրում է իր մէջ սիրոյ կենսատու կաթիւները, ցոյց տուր, ո՛վ Տէր, ես կը փշրեմ, ես կը խորտակեմ այդ անօթը, որովհետեւ նրա մէջն է ամփոփուած իմ բոլոր թշուառութիւնը . . . ինչո՞ւ զբեցիր իմ մէջ այդ անօթը, ո՛վ Աստուած, ինչո՞ւ փառկիր իմ սիրար այդ անչէջ կրակով . . . թող չը լինէր կնոջ սէրը, թող յաւիտեան չը լինէր նա, եւ ես աւելի բախուառոր կը լինէի: Այդ սիրոյ համար ես կատարեցի եւ պիտի շարունակեմ կատարել լդժոխացին բարբարոսութիւններ . . . ես թոյլ եմ, ես անզօր եմ, ո՛վ Աստուած, քո հզօր ձեռքը միայն կարող է մահացնել նրան . . . Աղաջում եմ, մեռցրու նրան, եւ բոլորովին ցամաք անապատ զարձու իմ սիրար, որպէս զի գագրին իմ մէջ բոլոր կրքերը . . . (տանջահար լուութիւն) Ա՛չ, ո՛չ, ո՛վ Տէր, ես սիրում եմ . . . առանց նրան ինձ համար լոյս եւ կեանք չը կայ . . . զու ստեղծեցիր սէրը, զու զբեցիր իմ մէջ սէրը, եւ զու զէտք է լինես նրա զօրավիզը . . . նա քո արարչազործութեան ամենամեծ արդիւնքն է . . . ժամանակներից առաջ Քեզ յայտնի էր նրա եւ կեցուցիչ եւ մահացուցիչ զօրութիւնը . . . զու զիստիր, թէ որպիսի անողորմ ձեռուով սէտք է զարձնէ նա մարդկանց սրտերը՝ թէ զէսի բարին եւ թէ զէսի չարը . . . ինձ ձգեց վերջին ձանապարհին վրայ, եւ սէտք է շարունակեմ առաջ դնալ . . .

Թող աչխարհի մէջ մի անարդ նշաւակ դառնամ ես, թող ապագայի համար յաւիտենական դասապարտութեան առարկայ դառնամ ես, թող ամէն ոք անէծքով արտասանէ իմ անունը, — բայց ես սիրում եմ, եւ կը սիրեմ . . . իմ անգին Որմիզդուխտ պէտք է լինի Հայաստանի թագուէին, իսկ ես սէտք է դառնամ թագաւոր, միայն նրան արժանի լինելու համար . . . թող արիւնով ոսոզուի այն ուղին, որ տանում է ինձ Հայոց գանձը . . . թող զիսկերով կազմուի այն սոսկայի ամբարտակը, որ կը հասցնէ ինձ մինչեւ այդ բարձրութիւնը . . . բոլորը քաղցր է ինձ համար, բոլորը հաճելի է ինձ համար, որպէս առաջնորդ մինչեւ այդ վրայ պիտի վայելեմ նրա սէրը . . .

ՎԱՐԱԳՈՅՑ

ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

ՏԵՍԱՐԱՆ Ի

Արարատեան դաշտին վրայ Մերուժանի եւ Վահանի քանակատեղին:

ՍԱՄՈՒԵԼ. — (Իր ասպախումբով բանակատեղին մտնելով, կանգնող պահակի մը) Ես Վահան Մամիկոնեանի որդին եմ: Ինձ առանջնորդէ գէպի իմ հօր վրանը: (Պահակը կ'առաջնորդէ տեսարանի խորքէն դէպի առաջ գտնուող վրանը):

ՎԱՀԱՆ. — (Վրանէն դուրս զալով) Սամուէլ, սիրելի Սամուէլ: Օ՛չ բարեւ Արշակ, նաեւ դուք իմ սիրելի Արտաւազդ եւ Յուսիկ:

ՅՈՒՍԻԿ. — (Դէպի մէկ կողմ կը քաշուի, Սամուէլի ասպախումբին բով, որոնց մէջ կը գտնուի նաեւ Սուրենը):

ՎԱՀԱՆ. — Ա՛խ, եթէ քեզ զո՞նէ մի անգամ տեսնէք Շապուհը, այս չնորհալի գէմքավ, այս վայելշազեղ հասկով, նա անպատճան քեզ Հայոց ամբողջ հեծելազօրքի հրամանատար կը կարգէր:

ՍԱՄՈՒԵԼ. — Մի այզպիսի բարձր պաշտօն ինձ համար դեռ չատ չուտ է, սիրելի հայր:

ՎԱՀԱՆ. — Դու չատ համեստ ես, Սամուէլ: Բայց նայիր քեզ վրայ հօր աչքով, եւ այն ժոմանակ չատ վաղ չես համարի: Դու կը հիացնես ամբողջ Պարսից արքունիքը, եթէ գէթ մի անդամ այն տեղ յայտնուելու լինես: Բաւական է, որ զու մի ասպախազ կատարես Տիգրոսի մեծ հրապարակի վրայ, եւ Շապուհ արքան իր պալատի պատուհանից նայէ քեզ վրայ, — այդ ժամանակ քո հօր ամենաջերմ փափաքները կատարուած կը լինեն: Մայրդ նամակ չտուե՞ց:

ՍԱՄՈՒԵԼ. — Ի՞նչպէս չէ: Ահա՝

ՎԱՀԱՆ. — (Կը զարմանայ նամակի հնութենէն):

ՍԱՄՈՒԵԼ. — Այդ նամակը հին է, սիրելի հայր, ևս երկար ատենէ ի վեր բաժանուած եմ իմ մօրից: Ինձ հետ պատահած են այդ ժամանակի ընթացքում մեծ արկածներ եւ զժրախտութիւններ: Ես ժահամերձ հիւանդութեան մէջ եմ եղել, եւ Անձաւացեաց հոգւոց վանքում վանականների ինսաւուս եւ զորովալից հոգատարութեան տակ՝ հազիւ կարողացել եմ ապաքիննել:

ՎԱՀԱՆ. — Դա կատարեալ անխոչեմութիւն է, Սամուէլ: Դու այդքան ժամանակ հիւանդ ընկած ես լինում մի անյայտ վանքում, ո՛չ քո հօրը նև ո՛չ քո մօրը իմացում չես տալիս:

ՍԱՄՈՒԵԼ. — Ես իմացում տալիս էի... բայց իմ ժարդիկը զնուու էին եւ տեղ չին հասնում: Գիտես, հայր, ի՞նչ աղքակալի ժամանակներ էին... մարդիկների դլուիները ծառի տերեւների նման թափում էին:

ՎԱՀԱՆ. — Աստուած քեզ կրկին անզամ պարգևեց ինձ, թանկաղին Սամուէլ, զոհութիւն եւ փառք նրա մեծութեանը:

ԱՐՏՈՒՐԱԶԴԻ. — Դու, երեւի, չիր սպասում, որ ես կը զայի Սամուէլի հետ: Տեսա՞ր ինչպէս եկայ:

ՎԱՀԱՆ. — Դու ամենափոքր հասակումդ եւս միշտ այգպէս քաջ էիր, սիրելի Արտաւազդ, իսկ այժմ սիրուն եւ բաւական հասած տղայ ես, ի հարկէ, հիմա աւելի քաջութիւն կ'ունենաս:

ԱՐՏՈՒՐԱԶԴԻ. — Այս բանակում պղպիկ պատանիներ կա՞ն:

ՎԱՀԱՆ. — Կան: Ինչո՞ւ համար ես հարցնում:

ԱՐՏՈՒՐԱԶԴԻ. — Ես եկել եմ նրանց հետ մրցելու, որ ցոյց տամ, թէ հայ պատանիները որքան ձարպիկ են Պարսիկներից:

ՎԱՀԱՆ. — Սիրելի Արքակ, նստիր, ինչո՞ւ ես կանգնում: Ի՞նչպէս ես, Արքակ: Ամէնքը փոխուել են, գումիայն մնացել ես միեւնոյնը, որպէս տեսնել եմ մի քանի տարի տուած: Ո՛չ ծերացել ես, ո՛չ մանկացել ես:

ԱՐԲԱԿԻ.— Արտաքին կեղեւը միշտ խարուսիկ է լինում, Տէր իշխան: Միայն Աստուած է իմանում, թէ ներսում ինչ կայ... Մազերս, իրաւ է, շատ չեն ձերմակել, բայց սրատումս այլիւս կեանք չէ մնացել:

ՎԱՀԱՆ.— Ի՞նչո՞ւ, Արրակ, ի՞նչը կարող էր քեզ այդպէս վըտացնել:

ԱՐԲԱԿԻ.— Շատ բան, Տէր իշխան: Աշխարհը վոխուել է... ամէն ինչ տակնուվրայ է եղել... և նրանց հետ տակնուվրայ է լինում մարգու սիրար... ո՞ւր են հին ժամանակները... դնացին, այլիւս յետ չեն գայ...

ՍԱՄՈՒԵԼ.— Մերուժանը բաւական շտապել է, զետ չայոց թագաւոր չը գարձած, թագաւորի ձեւեր է բանեցնում...

ՎԱՀԱՆ.— Ի՞նչո՞ւ...

ՍԱՄՈՒԵԼ.— Ահա այդպէս,— նստած է սպիտակ նըժոյգի վրայ... նժոյգի լաշն ու ազին ներկել է տուել վարդի զոյնով... Զէ՞ որ, այդ իրաւունքները վայելում են միայն Արշակունի թագաւորներն ու թագաւորացուները, և կարմիր վարժիք ունի հազած... և կարմիր կօշիկներ է կրում... զբանք եւս առանց նշանակութեան չեն...

ՎԱՀԱՆ.— Ի՞նչո՞ւ այդ գարմացնում է քեզ, Սամուէլ: Մերուժանին արգէն կարելի է չայոց թագաւոր համարել: Բաւական է, որ նա այս բազմաթիւ գերիներին հասցնէ Տիգրոս, այն ժամանակ Շապուհ արքան մեծ ուրախութեամբ կը տայ նրան Արշակունիների թագը:

ՍԱՄՈՒԵԼ.— Այդ ինձ բոլորովին չէ զարմացնում, սիրելի հայր: Ես համոզուած եմ, որ Շապուհը Մերուժանի այդքան մեծ ծառայութիւնների համար անպատճառ կը տայ նրան թագը...

ԱՐԲԱԿԻ.— Կը տա՞յ... կը տա՞յ Արշակունիների թագը... բայց այն թագը իւր գլխին դնելի է ամենամեծ զժուարութիւնը...

ՎԱՀԱՆ.— Ի՞նչո՞ւ, Արրակ:

ԱՐԲԱԿԻ.— Նրա համար, Տէր իշխան, որ այսօր կամ վաղը, Պապը՝ Արշակունիների օրինաւոր ժառանգը կը յայտնուի, և այս կը դառնայ իւր հօր գահին: Այս ձերմակ գլուխը շատ բան է տեսել, Տէր իշխան: Այդ եւս իմ աչքերով տեսնում եմ...:

ՎԱՀԱՆ.— Գլուխը, իրաւ է, ձերմակացել է, բայց կուրծքից մէջ զես երեխայի սիրտ ես կրում, Արրակ: Դիցուք թէ յայտնուեցաւ Պապը, նա ի՞նչ կարող է անել: Դու կարծում ես որ Մերուժանը չէ՞ նախատեսել արդ բարոր: Մերուժանը ապառաժի վրայ ցանող մարգիկներից չէ, նա զիտէ իւր գործը, նա բաւական մեծ խելքի ակը մարդ է:

ՍԱՄՈՒԵԼ.— Արդակ այդ ի՞նչ են այրում:

ՎԱՀԱՆ.— Մադաղաթ: Դու չե՞ս գայ տեսնելու: Գնանք, շատ հետաքրքրական չեն...

ՍԱՄՈՒԵԼ.— Ո՞չ, ես այստեղից եւս տեսնում եմ...

ՎԱՀԱՆ.— Ուրեմն ես կը զնամ, քիչ վերջ կը վերադառնամ քեսիդ Մերուժանը հետո բերելով: Նա ահա բրադուած է իւր խարսչկով... երբ վերջացնի միասին կը զանք այսակով: Նա չատ կ'ուրախանայ քեզ տեսնելով, նա չսփազանց սիրում է քեզ: Նա գուրս է եկել բանակը զիտելու... և մի քանի կարգադրութիւններ ունի անկու... որովհետեւ այս օրերում պէտք է չուենք այստեղից... (Ալ մեկին):

ՍԱՄՈՒԵԼ.— Մադաղաթ են այրում, սիրելի Արրակ: Այրում են մեր կործանուած աաձարների սուրբ կրտակարանները... այրում են մեր եկեղեցու գիրն ու գրադրութիւնը, որ մեզ պարսկացնեն... և իմ հայրը զնում է հանդիսատես լինելու, զնում է զուարձանալու մի այդպիսի չարագործութեամբ: Ահա՛ և կառափները... ատոնք ի՞նչ կառափներ են, Արրակ:

ԱՐԲԱԿ.— Ի՞նչ կառավիներ : Հայ շինականի, հայ խաչնարածի եւ հայ երկրագործի կառավիներ են : Մերուժանը այդ կառավիների իւրաքանչիւրի համար մի մի ոռկի է զմարել Պարսիկ զինուորներին, եւ նրանք զնացել իւղաների գաշտերից որսացել են, եւ զլուխները կարել են : Դրանք Մերուժանի հայրենիքի ամենաթանկագին ընծաներն են, որ նա պէտք է տանէ եւ նուիրէ Պարսից արքային, պարծենալով թէ Հայոց ազնուականների զլուխներ են :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Այլեւս ինչո՞ւ համար են զիգել այն-տեղ այդ արիւնաներկ զլուխները :

ԱՐԲԱԿ.— Յոյցի համար, սիրելի Արտաւազդ : Մերուժանը սիրում է սարսափ ձգել, եւ այդ զլուխները դրել է իւր զերիների առջեւ, որ նրանց զզալ տայ թէ, եթէ չեն խոնարհուի իւր հրամաններին, այն ժամանակ նրանց զլուխներն եւս կ'աւելանան այդ կտրուած զլուխների վրա :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Ի՞նչ հրամաններ . . .

ԱՐԲԱԿ.— Նա պիտի առաջարելէ որ իր զերիներն թողնեն քրիստոնէութիւնը եւ ընդունին Պարսից կրօնը :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Զարագո՞րծ . . .

ՄԵՐՈՒԺԱՆ եւ ՎԱՀԱՆ.— (Ներս կը մտնին) :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Օ՛չ, թանկագին Սամուէլ, իմ քրոջ որդին, որքան ուրախ եմ որ երկար անջատումից յետոյ բախտը կ'ունենամ կրկին անզամ քեզ տեսնելու : Այդ որքան մեծացել ես, այդ որքան զեղեցկացել ես :

ՍԱՄՈՒԻԷԼ.— Նոյնպէս ես շատ ուրախ եմ, քեոի :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Բարեւ Արքակ, օ՛չ եւ զու, սիրելի Արտաւազդ :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Քեոի, բանակը, զեռ եւս քանի՞՞ որ պէտք է այսուղ մնայ :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Երեք օր :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Օ՛չ զա շատ երկար է, Աստուած վը-կայ, շատ երկար է : Ի՞նչպէս սէտք է անցկացնենք այդ երեք անտանելի օրերը :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Ինչպէս որ քո սիրուը կը կամենայ :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Եթէ զիտենաս, թէ ո՛րքան ժամանակ է, որ ևս որսի չեմ զնացել, բոլորովին կը զարմանա :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Ո՞րքան ժամանակ է, սիրելիս :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Այն օրից որ մեր տանից դուրս եմ եւ կեր :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Դա վոքը ժամանակ չէ, մանաւանդք քեզ համար : Դու կարծեմ, որսորդութիւնը սիրում ես, Արտաւազդ :

ԱՐՏԱԿԱԶՄ.— Սաստիկ, երբ մեր տանն էի, եթէ շարաթը մի քանի անգամ որսի չը զնայի, ինձ այնպէս կը թուէր, թէ մի լաւ բան, չա՛տ լաւ բան կորցըրել եմ :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Երեւի, Սամուէլն եւս սիրում է :

ՎԱՀԱՆ.— Սամուէլը ամենափոքը հասակից սիրում էր որսորդութիւնը : Մեր ամրոցի թուշւնները հանգստութիւն չունեին նրա ձեռքից, երբ դեռ տասն տարեկան տը-դայ էր : Իսկ այժմ չը զիտեմ հետեւո՞մ է իր հին սովորութիւններին թէ ոչ :

ՍԱՄՈՒԻԷԼ.— Ես իմ սովորութիւնները հեշտութեամբ չեմ փոխում : Որսորդութիւնը իմ ամենասորտագին դուարձութիւններից մէկն է : (Մերուժանին) Այդ կողմէրում, Արքասի ամիերը, ասում են, խիստ հարուստ են վայրենի երեներով :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Այս, հարուստ են :

ՍԱՄՈՒԻԷԼ.— (Մերուժանին) Դուք վճռել էք անպատճա՞ն երեք օր բանակը պահել այստեղ :

ՄԵՐՈՒԺԱՆ.— Անպատճառ : Բացի այն, որ ասողերը բարի ճանապարհ չեն դուշակում :

ՍԱՄՈՒԵԼ. — Ուրեմն, այդ երեք օրում, ինչպէս լու նկատեց Արտաւազզը, անզործութեան մէջ կարելի է բուրովին ձանձրանայ:

ՎԱՀԱՆ. — Քեռիդ թոյլ չի տայ, որ ձանձրանաս, սիրելիս, նա քեզ համար որսորդութեան ամենափառաւոր հանդէսներ կը պատրաստէ Արաքսի ափերի մօտ:

ԱՐՏԱԿԱԶՄ. — Եւ ինձ համար:

ՄԵՐՈՒԻԺԱՆ. — Եւ քեզ համար: Առանց քեզ ի՞նչ ուրախութիւն կ'ունենայ մեր որսորդութիւնը: — Ե՛լ, Վահան, մենք երթանք, մի քանի գործեր կան անելու, նըրանք յոդնել են, թող հանգստանան: Վազը ես պատրաստել կը տամ փառաւոր հանդէսը որսորդութեան:

(Վահան եւ Մերուժան կը մեկնին)

ԱԱՄՈՒԵԼ. — Սիրելի Արքակ, վերջապէս մեր նպատակը յաջողութեամբ պիտի պատկռի: Ես մեծ յոյս ունեմ: Ինչ որ անելու է, պէտք է անել... ժամանակը թանգ՝ է մեզ համար: Վազը զու պատրաստ կը լինես ինձ հետ գալու որսորդութեան հանդէսին, եւ կանխապէս կը նախապարասահս իմ մարդիկներին: Հասկանո՞ւմ ես...

ԱՐԲԱԿ. — Հասկանում եմ . . . :

ԱԱՄՈՒԵԼ. — Իմ մարդիկներից իւրաքանչիւրը սրբակ է լու զիտենայ իւր կատարելիք զերը, եթէ ոչ, մի ամենափոքր սիրակ կարող է ամէն ինչ փացնել, նրանք պէտք է հետեւին պայմանական նշաններին, եւ նոյն նշանների համեմատ գործեն: Եթէ հանգստանքները փոխուին, այդ գէպում, զու եւս սրէաք է հանգստանքների փոփոխութեան համեմատ, փոխես եւ նրանց գործելու եղանակը:

ԱՐԲԱԿ. — Արքակը այդ բոլորը կը կարգադրի, դու հանգիստ կա՞ց:

ԱԱՄՈՒԵԼ. — Այժմ կարող էք երթալ ձեզ յատկացնած վրանում, վազը առաւօտ կը տեսնուինք:

(Արքակ եւ Արտաւազզ կը մեկնին)

ԱԱՄՈՒԵԼ. — (Վահանին նրազը կը մարէ, ֆիչ մը լըռութենէլ վերջ) Վազը, որսորդութեան հանդէսը կը սարքուի, ես այնտեղ պատեհութիւն կ'ունենամ իմ վշտալից սիրութ բաց անել իմ հօր առջեւ, դատապարտելով նրա դաւաճանութիւնը հայրենիքի հանդէսի: Կը ինդրեմ ևս նրանից որ յետ կենայ իւր չար ձանապարհից: Իսկ եթէ նա մերժէ ինձ, եթէ ինձ չը յաջողուի զայն համոզել, այդ ժամանակ ահա՛ այս սուրով ես կը սրբեմ այն արատը, որ նա զրեց մեր տոհմի վրայ:

ՎԱՐԱԳՈՅՑ

ՏԵՍԱՐԱՆ II

«Իշխանաց կղզին»

(Արաքս գետին եզերքը, մացառուտ եւ
տերեւալիթ ծառերով)

(Տեսարանը բացուելիս, Վահան եւ Մամուկը ծանր
բայլերով տեսարանին մէկ կողմէն կուգան եւ իրենց յի-
տագայ խօսակցութիւնը լրանալէ վերջ կ'անցնին միւս
կողմը)

ՎԱՀԱՆ. — Զգուշացի՛ր, երբ վարագների կը հանդի-
պիս, այսակի վարագները սաստիկ կատաղի են:

ՄԱՄՈՒԿ. — Կը ցանկանայի հայր, վագրերի հան-
դիպել, առիւծների հանդիպել: Բայց, ափսո՞ս, որ այս-
տեղ ո՛չ վագրեր կը պատահեն եւ ոչ առիւծներ: Կը ցան-
կանայի գոնէ Արաքսի սոսկալի նհանգներից մէկը հրէ-
շաւոր գլուխը ջրից վեր բարձրացներ, եւ իւր բոլոր կա-
րողութեամբ յարձակուեր իմ վրայ...

ՎԱՀԱՆ. — Երեւի, նրա համար են այդ գեղեցիկ ցան-
կութիւնները, Սամուել, որ ցոյց տաս քո քաջութիւնը:
Բայց քո քաջութիւնը, անտարակոյս այդ տեսակ ասպա-
ցոյցների կարօն չէ:

ՄԱՄՈՒԿ. — Ո՛չ, հայր, դրա համար չէ: Ես հեռու
ևս ամէն տեսակ վառասիրութիւնից: Միայն կը ցանկա-
նայի կոռուել... ի մա՞ս կոռուել:

ՎԱՀԱՆ. — (Խնճիին) Այս մաքերը սարասիցնում են
ինձ: Ես ցանկանում է մահուան համար կոռուել, ի՞նչը
ձանձրացը է նրա յուսապայծառ կեանքը: (Գուրս կ'ել-
լին):

(Բեմին վրայ կուգան Մերուժան, Արքակ, Սուրեն,
Արտաւագը եւ Պարսիկ օրսավարներ)

ԱՐՏԱԿԱԶԴ. — Միքելի՛ Արքակ, աղաջում եմ, շտա-
պի՛ր, տուր ինձ քո նիզակը, իմը շատ թեթեւ է ու բա-
րակ, վախենում եմ, որ կոտրուի:

ԱՐԲԱԿ. — Կը տամ, սիրելի Արտաւագդ, կը տամ իմ
նիզակը, բայց բազուկներս քեզ տալ չեմ կարող:

ՄԵՐՈՒԻԺԱՆ. — Արքակի ծանր նիզակը չարժելու հա-
մար պէտք է Արքակի ամուր բազուկները ունենալ, Ար-
տաւագդ: Հեռու կաց, Արտաւագդ, այդպէս չէ կարելի
որսալ այդ ամէհի գագանին:

ԱՐՏԱԿԱԶԴ. — Դա ի՞նչ բան է: Հիմա կ'սպաննեմ և
զուր կը տեսնէք: (Դէպի շամբուանները կը յառաջանայ):

ՍՈՒՐԵՆ. — Աչա կ'ենդանին դա կողմը փախաւ: (Բո-
լորն այ կը վագեն բեմեն դուրս):

(Բեմին վրայ կուգան Վահան եւ Ալանզան Զօրապետ)

ՎԱՀԱՆ. — Ի՞նչպէս երեւաց քեզ:

ԱԼԱՆԶՈՂԱՆ. — Սքանչելի՞ է, ովայժառ Արամաղդը վր-
կայ, սքանչելի՞ է: Գիտե՞ս, իշխան, եղջերուի որսը աւելի
զժուար է, քան թէ առիւծի կամ վագրի որսը, որովհե-
տեւ եղջերուն արագագաղ ոտներ անի եւ փախչում է,
բայց առիւծը կամ վագրը ամօթ են համարում փախչիլը,
նրանք կովում են: Իսկ կոռուողի հետ հեշտ է կռուել, կամ
յաղթել, կամ յաղթուել:

ՄԱՄՈՒԿ. — (Գալով Յուսիկի հետ) Ես իմ բաժինը
վերջացրի: Մեր ձաշի համար այժմ բաւական խորովա-
ծու միս ունենք:

ՎԱՀԱՆ. — Միթէ չե՞ս կամենում շարունակել որսոր-
դութիւնը: Զօրապետը քիչ առաջ, երբ զու կը մաքա-
սէիր, հիացաւ քո քաջութեան եւ ձարպիկութեան վրայ:

ՄԱՄՈՒԿ. — Կը ցանկանայի մի փոքր հանգստանալ,
այդ անասունը զիս բաւական յոգնեցրեց: Ես կը ցան-
կանամ նասել եւ պահ մը դիտել հանդիզակաց տեսա-
րաններուն զեղեցկութիւնը:

(Ալանզան Զօրապետ եւ Յուսիկ կը մեկնին)

ՄԱՄՈՒԿ. — Այնտեղ, երեւի, որսորդներից փա-
խող երէներն են շարժվում:

ՎԱՀԱՆ.— Ո՞չ, քամին է շարժում թռւիերը : (Քամին կ'սկսի նախ մեղմօրէն փշել, յետոյ վիճաբանութեան ընթացքին կ'սկսի աստիճանաբար սաստկանալ եւ ապա սուսերամարտի եւ իրարանցումի ժամանակ կը փոխուի ահուի փոքրիկի, կայծակի, որոտումի) :

ՍԱՄՈՒԵԼ.— Զարմանալի յատկութիւններ ունի Արտօսը : Զարմանալի յատկութիւններ ունին եւ նրա խորհրդագույն շրջակայթը : Պարզ, լուսապայծառ առաւոտին յաջորդում է տիսուր, վհատական երեկոյ՝ իւր կարմրագոյն մոռայով, իսկ ուրախ, անհոգ զուարձութեանը՝ խիստ սրամամաշ թախուութիւն... Տիսուր է, տիսուր... Ես կարծում էի, թէ կարող եմ փոքր ինչ ուրախ լինել, փոքր ինչ մոռնալ ինձ... բայց ի գուրք... երանի՛ թէ, չար լինէի... երանի՛ թէ, եղեռնապործ լինէի... գուցէ ինձ եւս կը վիճակուէր նոյն օրհասը որ վիճակուեցաւ բարի Արտաշէսի շար որդուն... նա կորաւ որսորդութեան միջոցում, նա իւր ձիու հետ խորասոյդ եղաւ Արաքսի մերձակայ անդունդների մէջ... Գետինը ըը կարողացաւ տանել շար արքայազնին, որ շարութեամբ պիտի լիցնէր Հայոց երկիրը... զետինը բաց արաւ իր ահարկու բերանը եւ կլանեց նրան...

ՎԱՀԱՆ.— Ինչո՞ւ յիշեցիր այդ տիսուր անցքը :

ՍԱՄՈՒԵԼ.— Զը գիտեմ ինչո՞ւ... երեւի, նրա Համար, որ աստ հեռու չենք այն եղերական վայրերից, ուր պատահէց այդ անցքը : Թշուառ շարագործը կորաւ, անհետացաւ Արաքսի անդունդների մէջ, բայց Հանգստանալ ըր կարողացաւ... Մասիսի քաջերը տարան, շղթայեցին նրան մի մթին այրի մէջ, ուր մինչեւ հիմա տանջում է նա...

ՎԱՀԱՆ.— Սամուէլ, ի՞նչ պատահեց քեզ հետ, ի՞նչը ձգեց քեզ այդ մթին ցնորքների մէջ : Դու մահ ես ցանկանում, քեզ համար անտանելի է զարձել կեանքը, այն Հասակում, երբ զես նոր է սկսվում քո երջանկութեան ծաղ-

կափթիթ զարունքը : Ի՞նչ է պակաս քեզ : Բո Հայրը պատրաստ է ծնողական բոլոր սիրով ամէն ինչ լցուցանել : Լոի՛ր, Սամուէլ, զու չես հասկանում քո անսահման բախտաւորութիւնը, որի մէջն ես, եւ որը իր լիառատ բարութիւններով զես եւս սպասում է քեզ : Հազարաւոր իշխանական երիտասարդներ պիտի նախանձին քո փառքին, Հազարաւոր իշխանագն օրիորդներ պիտի փափաքին քո ամուսինը լինելու : Բայց զու կ'ընարես քեզ չքնարագոյնը — Արեաց արքայից արքայի անհման զուսարբը :

ՍԱՄՈՒԵԼ.— Դրանցից եւ ոչ մէկը չէ կարող բուժել այն վէրքիրը, որ գրած են իմ սրամամ, Հայր, գրանցից եւ ոչ մէկը չէ կարող վանել այն վշտերը, որ օր ու գիշեր տանջում են ինձ : Կեանքը զառն, անտանելի է զարձել ինձ, Հայր, եւ մահը շատ ցանկալի կը լինէր ինձ, եթէ զիտենայի, որ մահից յետոյ մի այլ կեանք ըը կայ : Բայց մարդիկ իրանց վշտերը իրանց հետ գերեզման են տանում : Դա տեսի անտանելի է, քան յաւիտենական տանձններ գժուխտի խորքում... Հայր, այստեղ մենք միայնակ ենք, այստեղ մեզ ոչ ոք չի լսի, թոյլ տուր ինձ խոստափանել քեզ իմ բոլոր ցաւերը, իմ բոլոր տանձնանքները :

ՎԱՀԱՆ.— Խօսի՛ր, զաւակս, բայց արա հօր առջեւ լցուած սիրազ, ի՞նչն է այսպէս տանջում քեզ : Այն օրից, որ եկել ես զու, ես միշտ նկատում եմ քո մէջ մի տեսակ հոգեկան անհանգստութիւն, մի տեսակ բարոյական վրբութիւնք : Մի՛ թազցրու ցաւերը, եւ հաւատացած եղիր, որ Հայր, այնքան սէր ունի դէպի քեզ, որ կարող է քո կարիքներին կարեկից լինել եւ քո ցաւերին՝ ցաւեկից :

ՍԱՄՈՒԵԼ.— Ի՞նչպէս ըը ցաւել, Հայր, ի՞նչպէս ըը վշտանալ, Հայր : Մի սիրտ, որ քարից լինէր կազմուած, մի հոգի, որի մէջ մեռած լինէին ամէն մարդկային զդացմունքներ, զարձեալ չէր կարող անզգայ մնալ, տեսնելով

այն, ինչ որ ևս տեսայ, ևւ ինչ որ տակաւին տեսնելու զժրախտութիւնը պիտի ունենամ: Այն օրից, որ դուրս եկայ, մեր ամբոցից, այն օրից, որ թողի Տարօնը, մինչեւ այսոնդ հասնելու, ես անցայ մի շարք աւերակների, մի շարք բարբարոսութիւնների միջով: Տեսայ մոխիր դարձած քաղաքներ, տեսայ անմարդացած գիւղեր, տեսայ կործանուած վանքեր ու տաճարներ: Ամէն քայլում ես ոտք էի կորում արեան վրայ, եւ իմ հայրենակիցների արեան վրայ... ո՞վ կատարեց այդ անդթութիւնները, հայր, եւ ինչո՞ւ համար... (լուրին) Դու լում ես, հայր, զու չես պատասխանում: Ես հասկանում եմ քո լուութեան իմաստը: Բայց հայրենիքի կործանուածները և բիւրաւոր աշքերի լացն ու արտասուքը համարձակութիւն են տալիս զժրախտ որպուդ ասելու քեզ, որ այդ բոլոր անդթութիւնները կատարուել են երկու անձանց ձեռքով, որոնցից մէկը իմ հայրն է, — զո՞ւ, իսկ միւսը՝ իմ մօր եղայրն է՝ Մերուժան Արծրունին...:

ԱԱՀԱՆ. — ՄԵծ զործերը մեծ զոհ են պահանջում...

ԱԱՄՈՒԵԼ. — ՄԵծ զործերը մեծ զոհ են պահանջում, ձշմարխտ է, բայց զու, հայր, արզեօք լու կըսել ես զործի մեծութեան հետ և յանցանքի մեծութիւնը, ո՞չչացրնել հայրենի աշխարհը, ոչնչացնել հայրենի կրօնը, եկեղեցին, եւ Հայտատանի աւերակների վրայ հիմնել մի պարսկական թագաւորութիւն, — ահա՛ այս է այն զործը, որ զու, հայր, մեծ ես կոչում:

ԱԱՀԱՆ. — ինչո՞ւ պարսկական թագաւորութիւն: Աիթէ Մերուժանը Պարսիկ է:

ԱԱՄՈՒԵԼ. — Ապա ի՞նչ է: Թէ զու, հայր, եւ թէ նա ուրացել էք քրիստոնէութիւնը և բնուունել էք Պարսից Շապուհ արքայի կրօնը: Հայոց եկեղեցիները լցրել էք Պարսիկ մողերով: Ամէն տեղ ստիպում էք ուրանալ քրիստոնէութիւնը: Իմ մայրը արդէն մոխրապաշտ է դարձել եւ Մամիկոնեանների կրօնասէր տան մէջ Պարսից ատրուշան

է հիմնել: Հայոց լեզուն հալածուած է մեր տներից: Ամէն տեղ ո՞չնչացնում էք Հայոց զրքերը, որպէս զի Պարսից լեզուն եւ պարսկական դպրութիւն տարածէք Հայտանուում: Երէկ իմ աշքով տեսայ, թէ ինչպէս Մերուժան երկնագոյն վրանի առջեւ այրում էր հայ զրքերը: Այդ բուրփ յետոյ, երբ կորչում է կրօնը, երբ կորչում է լեզուն, երբ ո՞չնչանում են ազգային աւանդութիւնները, եւ երբ, վերջապէս հայր սկսում է Պարսից սովորութիւններով ապրիլ եւ Պարսից լեզուվ ալօթել, այլեւս ի՞նչ հայութիւն կր մնայ: Եւ ձեր հիմնած թագաւորութիւնը միթէ կարո՞ղ է այսաւհետեւ հայկական լինել: Նա վաղ թէ ուշ կր լուծուի, կահնետանայ Պարսկականի մէջ, եւ նրա հետ ամէն ազգային սրբութիւնները կը կորչին, կը ո՞չնչանան:

ՎԱՀԱՆ. — Ինչ որ լինելու է, թո՞ղ լինի, միայն Արշակունինների թագաւորութիւնը չը պիտի լինի:

ԱԱՄՈՒԵԼ. — ինչո՞վ էին վաս Արշակունինները:

ՎԱՀԱՆ. — Դու զիս հարցնում ես, Սամաւէլ, զու երիխոյ չես, զու այնքան տարիք ունիս որ բաւական է եթէ յիշես քո տեսանները միան, որ չէնց քո հասակում ո՛րքան շարագործութիւններ կատարեց Արշակ թագաւորը, որ իւր մեղքերի համար այժմ տանջվում է Անուշ բերդում: Եւ զու, Սամաւէլ, զիս եւս ցանկանո՞ւմ ես, որ մի այլպիսի անբարոյական եւ ապականուած թագաւորական տաւն զոյութիւն ունենայ:

ԱԱՄՈՒԵԼ. — Քո եւ Մերուժանի վարժունքը աւելի վատթար է, հայր: Ապականութիւնը ապականութեամբ չին որբում և ոչ անբարոյականութիւնը՝ անբարոյականութեամբ: Դրանց մաքրելու համար ուրիշ միջոցներ կան: Արշակունինների մէջ եղել են և այժմ կան այսպիսի պաշտելի անձնիք, որոնց առաքինութիւններով միջտ պիտի պարծենայ Հայոց ազգը: Իսկ եթէ արդ հայակապ ընտանիքի մէջ վերջին ժամանակներում յայտնուեցան միքանի անբարոյական մարդեկը, — զա նրանց ժամանաւոր

մեղքն է, որ իրանք պէտք է քաւեն: Նրանց մեղքերի համար ինչո՞ւ պէտք է պատժուի ամրողջ Հայոց ազգը եւ Հայոց հայրենիքը: Այն եւս կ'ասեմ, հայր, որ այդ իսկ անբարոյական համարուած Արշակունիները գոնէ մէկ կողմից այնքան բարոյական գտնուեցան որ երբեք ըլ դաւաճանեցին հայրենի աշխարհին եւ հայրենի եկեղեցոյն: Իսկ դո՞ւք, դո՞ւ եւ Մերուժանը...

ՎԱՀԱՆ.—Դու եկար նախատելու քո հօրը, Սամուել:

ԱԱՄՈՒԵԼ.—Ո՛չ, Հայր, ես չեկայ նախատելու քեզ: Ես եկայ ճշմարիար, արդարը, եւ իրաւացին խօսելու քեզ, որը ո՛չ այլ ոք կը համարձակուէր խօսել, բայց միայն որդիզ: Ես եկայ իմ սրտի, իմ սիրոյ բոլոր ցանկութեամբ արաշելու եւ պազատելու քեզ որ դու յետ գտնաս այն ձանապարհից, որ տանում է մէր հայրենիքը դէպի անդառալի կարուստ, իսկ Մամիկոնեանների տոհմի լիշտառակը դէպի յափառենական անէծք եւ դատապարտութիւն:

ՎԱՀԱՆ.—Այդ բալորը խօսել է տալիս քեզ քո երիտասարդական վաս զգացմունքը, քո մաքուր սիրաը, Սամուել, եւ ես չեմ կարող չուրախանալ, որ դու այդպէս անարատ ես մնացել: Բայց սրտի եւ զգացմունքի զատողութիւնը խիստ հազիւ անգամ լինում է ուզիզ: Դժբախտարար, ազգերի եւ ժողովուրդների կենցաղավարութեան յարաբերական պայմանների մէջ խիստ նեղ կայան ունի տիր սրբութիւնը, որ դու կոչում ես առաքինութիւն, բարոյականութիւն: Միշտ զօրեզր ձնչում, ոչնչացնում է անզօրին: Ի՞նչ պէտք է արած, որ երբեմն կեանքի անողոք անհրաժեշտութիւնները զնում են մէզ այնպիսի ճանապարհի վրայ, եւ կատարել են տալիս մեզ այնպիսի գործեր, որոնցից գմուխէն անգամ կը սարսափէր: Մէր բոլոր կատարածը անխուսափելի անհրաժեշտութեան արդինք է: Մենք յարուեցանք Պարսիկներին, որպէս զի ազատւենք նենդաւոր եւ ինկած Հոռվայեցիներից: Պարսիկ-

ները մէր դարաւոր բարեկամներն են եղել: Վերջին ժամանակներում քրիստոնէութիւնը մեզ բաժանեց միմեանցից եւ մէր մէջ կրօնի մէծ անջրպետ զրեց: Դժբախտ հանգամանքները պահանջում են քանդել այդ անջրպետը և ձեռք մեկնել հին բարեկամին:

ԱԱՄՈՒԵԼ.—Բայց դուք քանդում էք ոչ թէ անջրպետոր, այլ հիմքը:

ՎԱՀԱՆ.—Երբեք: Լոհիր, Սամուել, երկար բացառութիւնների կարու կը լինէր, եթէ ես սկսէի քեզ ապացանել, որ մէնք Յիսուս Քրիստոսի խաչը թողնելով եւ մէր հին աստուածներին երկրպագութիւն տալով՝ ոչինչ չենք կորցնի: Ես քեզ կը կրկնեմ նոյնը, ինչ որ մի քանի շոպէ առաջ ասացի թէ մէծ զործերը մէծ զոհ են պահանջում, եւ մէնք ստիպուած էինք տալ այդ մէծ զոհը:

ԱԱՄՈՒԵԼ.—Ո՞րն է այն մէծ զործը, որին դուք զում էք կրօնը, եկեղեցին:

ՎԱՀԱՆ.—Հին բռնապետութեան տապալումը, Արշակունիների կործանումը: Միթէ դու փո՞քը զործ եւ համարում այդ:

ԱԱՄՈՒԵԼ.—Փոքը զործ չեմ համարում: Բայց ինչո՞ւ համար էք կործանում:

ՎԱՀԱՆ.—Նրա համար, որ եթէ մէնք նրան չը կործանենք, նա մեզ կը կործանի: Միթէ զու մոռացե՞լ ես, թէ որպիսի կատաղութեամբ Արշակ թագաւորը եւ նրա հայրը սկսեցին ոչնչացնել նախարարական իշխանութիւնները:

ԱԱՄՈՒԵԼ.—Զեմ մոռացել: Բայց ես դարձեալ կ'առեմ քեզ, որ Արշակունիների կամայականութեան առաջը առնելու համար, ուրիշ աւելի զիւրին միջոցներ կան:

ՎԱՀԱՆ.—Ոչինչ միջոցներ չկան, բացի այն, որ արդէն սկսուել է, եւ պէտք է շարունակուի: Հայոց նախարարները բաժանուել են երկու մէծ կուսակցութեան, մէկը՝ իր առաջնորդ ունենալով եկեղեցականներին, աշ-

խատում է պահպանել հին դրութիւնը, — Արշակունիների քայլայուած գահը, իսկ միւսը, առաջնորդ ունենալով քո հօրը եւ քո քեռուն, կամ ենում է ոչնչացնել հինը եւ բատեղծել մի նոր իշխանութիւն։ Շատ բնական է, որ այդ ներքին երկառակութիւնը պիտի յարուցանէր եւ ներքին պատերազմ։ Մեր հակառակ կուսակցութիւնը դիմեց Հոսովմէական օգնութեան, իսկ մենք դիմեցինք Պարսկական օգնութեան։ Սկսուեցաւ ներքին կոփուր, ներքին արիւնչեղութեան հետ։ Թէ ինչո՞վ կը վերջանայ, — այդ Աստուծոյ ձեռքումն է, բայց առ այժմ յաջողութիւնը մեր կողմն է։

ՍԱՄՈՒԵԼ. — Գիտեմ ձեր կողմն է։ Բայց խարուսիկ յաջողութիւնը թող չը հրապուրէ ձեզ . . . լոիր, հայր, ընդունի՛ր տառապեալ որդուզ ազաքանքը, մի՛ արատաւորիր Մամիկոնեանների պայծառ յիշատակը յաւիտենական ամօթով, զեռ ուշ չէ, զեռ կարելի է վնասի կէսից յետ գառնալ։ Խնդրեմ, հայր, ցրուեցէ՛ք այդ անիծեալ պարսկական բանակը, որի ներկայութիւնը պղծում է Հայոց երկիրը։ Հետացրէ՛ք Պարսիկներին։ Ազատութիւն շնորհեցէք Հայոց գերբներին, թող զնան իրենց աները եւ որբեն ազգայինների արտասուքը։ Թող չը լինի կոփուր, թող չը լինի պատերազմը, որ այնքան աղէտների, որ այնքան թշուասութիւնների պատճառ դարձաւ։ Թող կրիին վերականգնուի հաշտութիւնը, եւ Հայոց աշխարհը վայլիէ իւր նախկին խաղաղութիւնը։ Ես կը զնամ Մերուժանի մօտ, նրանից եւս նոյնը կը ինդրեմ, կ'ազաշեմ, կը համբուրեմ նրա սոները, որ ընդունէ իմ ինդիրքը։

ՎԱՀԱՆ. — Ի զուր կ'անցնի թէ քո ազաքանքը, եւ թէ քո խնդրեքը, Սամուէլ։ Մերուժանը այն անսակ մարդիկներից չէ, որ ամէն մի համբակի խօսքը լսէ։

ՍԱՄՈՒԵԼ. — Հայր . . . ե՞ս եմ համբակը։
ՎԱՀԱՆ. — Այս, զու ես, Սամուէլ։ Ես չը կարողացաց հասկացնել քեզ ո՞չ իմ միտքը եւ ո՞չ իմ նպատակները։

Այժմ մնում է հարցնել քեզ թէ զու ո՞ր կուսակցութեան ևս պատկանում։

ՍԱՄՈՒԵԼ. — Այն կուսակցութեանը, որ հաւատարիմ է մնացել հայրենի եկեղեցուն եւ սիրելի թագաւորին։

ՎԱՀԱՆ. — Ուրեմն, զու իմ որդին չես։ Ով որ մեղ հակառակ է, մեզանից չէ։ Մենք անխնայ պատժել զիւենք այնպիսին։

ՍԱՄՈՒԵԼ. — Եւ ո՞չ զու իմ հայրն ես։

ՎԱՀԱՆ. — Սամուէլ . . .

ՍԱՄՈՒԵԼ. — Ի՞նչ է, զաւածան։

(Վահան եւ Սամուէլ կը սուսերամարտին)

ՍԱՄՈՒԵԼ. — Ա՛ռ քո պատիքը։

ՎԱՀԱՆ. — (Հառաչելով կ'իյնայ) Հայրասպա՛ն . . .

ՍԱՄՈՒԵԼ. — (Մի քանի րոպէ լուս կը նայի իւր հօր դիակի վրայ, յեայ սրբելով աշխերի արտառուչը, գալարափողը կը հեշեցնէ որպէս նշան)։ Պէտք է Մերուժանին գտնել . . . (Վրայ կուգան երկու պարսիկ զօրականներ, որոնց հետ սուրի բռնուելով, կ'սպանի զանոնիք եւ շտապով կը մեկնի։ Ծփոքութիւն, իբարանցում եւ արիւնահեղ սուսերամարտ ու իբար խողովում Սամուէլի եւ Վահանի մարդոց միջեւ։ Երկու կողմէն ալ կ'իյնան, աւելի վահանի մարդոցմէն։ Անոնիք կը բացակային իբար հաւածելով։ Փորորիկ, կայծակ, որսում)։

ՄԵՐՈՒԺԱՆ. — (Ծուարած եւ սարսափած այս եւ այն կողմէ վազելով) Ա՛չ, այսուեղ մի գաւազբռութիւն կայ։ Մանուկները մեզ որոզայթի մէջ ձգեցին։ Առաջ մենք էինք որոնում մացանների մէջ թագնուած անասուններին, իսկ այժմ մեզ են որսում . . . (Կը վագէ դուրս)։

(Այանզան եւ Սրբակ բեմի վրայ կուգան)։

ՎԱՀԱՆԶԱՆ. — Բաւական է, ծե՛ր աղուէս, զոնէ յիշեր որ գու մեր հիւրն ես։ Ես ինայում եմ հիւրին։

ԱՐԲԱԿ. — Ծնորհակալ եմ քո մարդավարութեանդ համար։ Պարսիկ նէզն ինկած ատեն, միշտ մէծահոգի է ձեւանում։ (Սուրբ կը մխրիկ կուրծքը) Ա՛ռ քեզ։

ՍԱՄՈՒԵԼ — (Գալով) Արքակ, այժմ Հնչեցրու փողդ .
Թող Հաւաքուին մեր մարդիկը :

(Արքակ կը հնչեցնէ : Սուրէն, Յուսիկ, Արտաւազդ կը հաւաքուին, նաև մի քանի զինուորներ) :

ԱՐՏՍԻԱԶԴ. — Վերջապէս ես նետահարեցի Մերու-
ժանին . . .

ՍԱՄՈՒԵԼ. — ԿԵցցէ՛ս, Արտաւազդ : Օ՞ն երթանը :
(Կը մեկնին) :

ՄԵՐՈՒԺԱՆ. — (Խորապէս վիրաւորուած՝ մացա-
ներուն մէջէն կը գայ եւ կ'ընկնի գեսին արիմբաթաւ)
Այսուղ մարդ կա՛յ :

Ա. Ի. Բ. Ո. Ռ. Զ. Ի. Ա. Ո. Մ. Ը. Կ. Ա. Յ. :
ՄԵՐՈՒԺԱՆ. — Ի՞նչպէս վերջացաւ կոխուք :

Զ. Ի. Ա. Ո. Ռ. Թ. Հ. Ա. Մ. Բ. Ի. Ե. Ր. Հ. Ա. Յ. :
ՄԵՐՈՒԺԱՆ. — Յաղթեցի՞ն :

Զ. Ի. Ա. Ո. Ռ. Ա. յ. , յաղթեցին :

ՄԵՐՈՒԺԱՆ. — Ա՛չ, ամէն ինչ վերջացած է ինձ Հա-
մար . . . ցանկանում եմ մեռնել, բայց մահը փախչում է
ինձանից . . . փորձում եմ սպաննել ինձ, բայց չեմ կարո-
զանում . . . եթէ դու իմ յաւ զինորներից մէկն ես, եթէ
դու սիրում ես քո հրամանասարին, կատարիր այդ վեր-
ջին ծայրութիւնդ, մերկացրու սուրդ Եւ Հանգստացրու
ինձ . . . Մա՞ս եմ ցանկանում, մա՞ս . . .

ՎԱՐԱԳՈՅՑ

ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

Տահար մը Ողական ամրոցին մէջ

Գարնանամուտի առթիւ զոհաքերութեան հանդէս :
Բոլորը շենքորէն հագուած : Տանարին մէջտեղը կը գրտ-
նուի մարմարիննէ բառակուսի սեղան մը, որուն վրայ կը
գտնուի առուշանը : Մոգերը ներմակ հագած՝ ձեռքերնին
մէյ մէկ զանգակ՝ թափոր կը դառնան սեղանին շուրջը :
Երկսեռ հանդիսականներ ծերադիր երկրապառութիւն կ'ը-
նեն կրակին : Պատշաճ տեղ մը կանգնած են դրանիկներ՝
բոլորն ալ սպառազինեալ : Տանարի ատեանին վրայ հր-
պարտօրէն կանգնած է Տանասուին, իր աջ եւ ձախ կող-
մը ունենալով մէյմէկ մանկալակիկ :

ՏԱՃԱՏՈՒՀԻ. — Փա՛ռք եւ գոհութիւն պայծառ Արա-
մազդին, որ ինձ պարզեւեց երջանիկներից ամենաերջա-
նիկը լինելու վիճակը, եւ ես բախտ ունեմ, ո՛վ սիրելի
Հանդիսականներ, ձեզ հետ միասին տօնելու այն մեծա-
հանդէս օրը, որ տօնում է ամբողջ տիեզերքը : Ահա, այս-
ակ անչէջ ատրուշնին մէջ, վառվում է աստուածային
հուրը, — ամբողջ տիեզերքին կեանք եւ չերժութիւն պար-
գեստ արարչազործ զօրութիւնը : Հանդիսաւոր զոհաքե-
րութեամբ մեր սէրն ու գոհութիւնը մատուցանենք այն
զօրութեանը, որ անհասանելի, եւ անքննելի Աստուծոյ
սրբազնազոյն օրինակն է մեր երկրին վրայ եւ թող օրհ-
նեալ լինի նրա փառքն ու պատիւք :

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ. — Եւ թող օրհնեալ լինի նրա
փառքն ու պատիւք :

ՍԱՄՈՒԵԼ. — (Իր ասպախումբով — Յուսիկ, Արքակ,
Արտաւազդ, Սուրէն, Գարեգին Ռշտումի, Սահակ, Մես-
րոպ եւ զինուորներ, բոլորն ալ սպառազինուած — ներս
կը մտնէ) :

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ. — Սամուէլ . . .

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — Սամուէլ... ա՛խ, որքան ուրախ եմ ես, որքա՞ն երջանիկ եմ ես, սիրելի Սամուէլ, որ դու ժամանում ես քո հայրենական ամրոցը մի այնպիսի բախտաւոր բողէում, երբ քո մայրը կատարում է զարնանամուտի տօնախմբութիւնը։ Քո ներկայութիւնը, սիրելի Սամուէլ, մի նոր փայլ, մի նոր չուք կը տայ այս հանդէսին։

ՏԱՄՈՒԵԼ — (Մոայլ եւ թախծալից դեմքով) Մայր, ևս ինձ բոլորովին դժբախտ եմ համարում, որ վերագառնալով իմ հայրենական ամրոցը, ամէն կարգ, ամէն սրբութիւն խանդարուած, յեղաշրջուած եմ գտնում։ Եթէ ցանկանում ես, որ ես քո որդին լինեմ, ուրեմն հանգցրուայդ կրակը։

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — Ես աստուածասպան չեմ կարող լինել, Սամուէլ, եթէ դու իմ որդին ես, պէտք է երկրաշպութիւն տաս այն սրբութեանը, որ պաշտում է քո մայրը։

ՏԱՄՈՒԵԼ — Ուրեմն, ես կ'սպաննեմ քո Աստուծուն, մայր։

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — Զես համարձակուի, Սամուէլ։

ՏԱՄՈՒԵԼ — Կրկնում եմ, մայր, հանգցրուայդ կրակը։

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — Անկարելի է, Սամուէլ։

ՏԱՄՈՒԵԼ — Մայր, հանգցրուայդ սպանութիւնը, եթէ ոչ...

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — (Սարսափով) Եթէ ոչ, ի՞նչ կ'անես։

ՏԱՄՈՒԵԼ — Քո արիւնով կը հանգնեմ...

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — Անիրաւ (Զարինուրած կ'րնկրկի)։

ԴՐԱՆԻԿՆԵՐ — (Զեսիրենին սուրերենուն կը տանիին)։

ՏԱՄՈՒԵԼԻ ՄԱՐԴԻԿԻ — (Ես իրենց ձեռքներուն կը տանիին)։

ՏԱՄՈՒԵԼ — (Զեսիր սուրենին տանիելով) Թող մարդիկ ինձ անիրաւ կոչեն, թող մարդիկ ինձ եղենագործ կո-

չեն, (սուրբ մերկացնելով) ահա՛ այն սուրբը որ սպաննեց դաւաճան հօրը, կ'սպաննէ և ուրացող մօրը։ (Դրանիկները սուրերենին կը բաշեն եւ կը փորձեն պաշտպանել Տահատուիին, բայց չեն յաջողիր։ Սամուէլ սուրբ կը միրնէ մօր կուրծքիը)։

ՏԱՃԱՏՈՒԵՀԻ — Ա՛հ, մայրասպան (կ'իյնայ)։

ՏԱՄՈՒԵԼԻ ՄԱՐԴԻԿԻ — (Բարձրածայն) Արժանիք էր...։

ՀԱՆԴԻՍԱՆՆԵՐ — Ա՛հ (սահմոկած՝ ոմանիք դուրս կը փախչին եւ ոմանիք ալ սիներին կը կառչին, նիշեր արձակելով)։


ՏԱՄՈՒԵԼ — (Հանդարտած՝ պահ մը վշտալի նայուածք մը կը նետէ իր մօր վրայ եւ խոնարհելով) Ա՛հ, ների՛ր ինձ, մայր, ների՛ր քո տառապեալ, քո դժբախտ որպան։ Նա երբե՛ք չէր կամենում ծնողասպան լինել, նա երբեք չէր ցանկանում մայրասպան լինել։ Նա այս բառմենիի արարքը կատարեց, հակառակ իւր բաղձանքին։ Ա՛հ, մայր, դու զիսէիր թէ ես ո՛րքան սիրում էի քեզ, սիրում էի որդիիկան ծերմ եւ խանդաղատալից սիրով... Թող չինէր, մայր, քո մոլորութիւնը, թող չինէր, կ'ասեմ քո յարումք պարուկական այդ պղծութիւններին, այն ժամանակ ես երջանիկ կը լինէի, ինձ չէր վիճակուէր իմ ծնողը սպաննելու տիտուր հարկին տակ գտնուիլ։ Բայց ի՞նչ անել որ քո եւ իմ հօր անդրզունիի յամառութիւնը ձեր հայրենագաւ որոշումին մէջ՝ մզեց զիս այս արիւնու զործին, ստիպեց զիս իմ սուրբը իմ սիրելի ծնողի արեան մէջ միսրծել։ Այդ էր պահանջում, մայր, հայրենիքի պաշտպանութիւնը, եւ ես կատարեցի այդ պահանջը, որովհետեւ ես վեր էի զատում հայրենիքի սէրը ե՛ւ ծնողի, ե՛ւ կնոջ, եւ ուրիշ ամէն սէրից... Մայր, խնդրեմ, ների՛ր ինձ, ների՛ր քո վշտարեկ որդուն, իր մայրասպանութեան համար։

24.08.2013
ՏԻՄ ՀԱՅԱՍՏ

106

ՏԱԾԱՑՈՒՀԻ — ԱՇ, Սամուէլ, ո՛չ . . . ևս, այս', ես
պէտք կ քեզանից ներողութիւն խնդրեմ, եւ ոչ թէ գու
ինձանից . . . Ես վաս գանուեցայ . . . ես զաւաճանեցի իմ
հայրենիքին . . . ես ուբացայ իմ հաւատը . . . ես սիսալուհ-
ցի Սամուէլ, ներիր ինձ . . . Մահացու ահռելի հարուածը
որ տուիր իմ կուրծքին, իմ մէջ արդէն սպառեց ամէն
շունչ . . . ես ժեռնում եմ . . . ժօտեցի՛ր, թանկագին Սա-
մուէլ, ժօտեցի՛ր, համբուրեմ քեզ . . . սիրի՛ր, Սամուէլ,
հայրենիքը, սիրի՛ր զայն, զա ձեր աղբատոհմի բարձր ա-
ռաքինութիւնն է, զա ք պարտականութիւնն է : (Կը
մեռնի) :

ՍԱՄՈՒԷԼ — ԱՇ, ժայռ . . . (Կ'սկսի հեկեկալ եւ ող-
րալ : Բոլոր ներկայ եղողները արտմաքախիծ, գլխահակ
վիճակի մէջ) :



ՎԱՐԱԴՈՅՐ



(ՎԵՐՁ)



13 APR 2011

ՐԱՅՈՒԹԻՒՆ
ՎԵպի Հեղինակ

ՏԱՐԱԾՈՒԵՆԻ
Փոխադրող

891.542-2

Պ - 25

ԱՍՄՈՒԵԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՂՔԵՐԳՈՒԹԻՒՆ

(ՀԻՆԴ ԱՐԱՐՈՒԵԱԾՈՎ)



ՏՊԱՐԱՆ «ՊԱՅՔԱՐ» Ի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊՈՍՈՆ 1924

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Մամիկոնյան

ԳԻՆ՝ 50 ՍԷՆԹ

ՀՀ Ազգային գրադարան



NL0371057

59

891.99

P-35